

Թիվ 4, օգոստոս, 2005թ.

ՈՒՒՆ

ԱՐԱՐԱՏԻ

Օրենքը խղճից հզոր է:
Բայց խիղճը օրենքից վեհ է:

ԱՐԱՄ



Մենք պետք է լծվենք մեր պետական մտածողության ձևավորման և նրա միջոցով ազգային պետականության կառուցման գործին: Այսինքն՝ մեր պայքարի հիմնական սկզբունքը չի փոխվել, փոխվել են ձևը և միջոցները: Մենք մեզ կոչել ենք «Ուխտ Արարատի»: Արարատը խորհրդանիշն է Արևմտյան Հայաստանի՝ մեր բռնագրավված տարածքների, և մենք ամեն ինչ պիտի անենք, բացահայտորեն՝ հասարակական-քաղաքական գործունեության սկզբունքներով: Մենք ստանձնել ենք հետևյալ պարտականությունները. որպես նախկին ազատամարտիկներ՝ մեր վարքագծով օրինակ պիտի դառնանք եկող սերունդներին, նպաստենք մեր պետության և մեր բանակի հզորացմանը ու երկրի տնտեսական վիճակի բարելավվմանը: Քանի որ մենք շատ ամուր կապեր ունենք արտասահմանում, պիտի քաջալերենք սփյուռքահայ գործարարներին, որպեսզի իրենց ներդրումները կատարեն հայրենիքում՝ նպաստելով նրա տնտեսական և մշակութային զարգացմանը:

Վարուժան Կարապետյան



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդային պայքարի առանձնահատկությունը	էջ 1	
«Արամ» ֆիլմի գլխավոր դերակատարը իրական Արամների շրջապատում	էջ 2	Ջեմմա Բաղդադյան
Յուրաքանչյուր հայ փոխանակ ասելու Մասիսը մերն է, պետք է ասի՝ Մասիսը իմն է	էջ 4	Նանե Սևան
Սիմոն Նաիրյան. «Մեր բոլոր գործողություններն իրենց կարևորությունն ունենին»	էջ 7	
Հաղորդագրություն	էջ 7-8	
Թուրքիան դարաբաշյան հակամարտության կողմ	էջ 9	Հայկ Դեմոյան
Տարածքային կենտրոնացման գործընթացները 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների լույսի ներքո	էջ 10	Թամարա Վարդանյան
Քաղաքական սահմանադրություն	էջ 11	Սուրեն Մանուկյան
Ազգայնական մտավորականի խորհրդածություններ՝ որպես մտահոգության դրսևորում	էջ 12	Խաչատուր Դադայան
Բջջային կապի գորշ ներկան ու մշուշոտ ապագան	էջ 15	Կարինե Մանուկյան
Հայ եվ վրաց վարչապետները Ջավախքում	էջ 16	Նարինե Ավագյան
Հայոց բանակ	էջ 17	
Առողջ մտածելակերպ, առողջ ապրելակերպ	էջ 18	Լիլիթ Հարությունյան
Մարմնավաճառները պատճառահետևանքային կապերի հանգույցներում	էջ 20	
Միշտ պահանջել են և՛ ինձանից, և՛ ուրիշներից	էջ 22	Լիլիթ
Անավարտ «Առավոտ»	էջ 23	Հասմիկ Մելքոնյան
Խաղող	էջ 23	Լիլիթ Մանուկյան
Սերնդափոխություն	էջ 24	Անի Մնացականյան
Մոռացված նախնիների սուվերները	էջ 25	Արշակ Գաբրիելյան
Սահակ Պարթև	էջ 26	Աշխեն Գրիգորյան
Սուրբ Գայանե եկեղեցի	էջ 27	Գայանե Հովսեփյան
Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը պայմանները, ժամանակը, միջավայրը	էջ 28	Արտակ Օհանյան
«Մեղու» երգիծական հանդեսը	էջ 29	Լիլիթ Հարությունյան
Պոլսի հայ գաղթօջախի գոյացումը	էջ 30	Ալբերտ Խառատյան
Կիլիկիայի անկախության հռչակագրի 85 - ամյակը	էջ 32	Հակոբ Մանջյան
Ձապել Եսայանի ծննդյան 125 - ամյակի առթիվ ժողովրդի հոգու սարսուռների տարեգիրը	էջ 34	Արթուր Անդրանիկյան
Ուխտագնացություն	էջ 35	Հովիկ Մկրտչյան

ՈՒՒՏ ԱՐԱՐԱՏԻ
«Ուխտ Արարատի»
կազմակերպության
պարբերական

Տպաքանակը՝ 2000
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

ԽՄԲԱԳՐՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Համարի թողարկման
պատասխանատու՝
Տիգրան Փաշաբեզյան

Տպագրված է «ՍԱՄՐԿ»
տպարանում
Ստորագրվել է
տպագրության
05. 08. 2005

Խմբագրության հասցեն
375023, Երևան,
Մաշտոցի 8
Հեռ. 56-71-50

OUKHT ARARATI
Official periodical of
“Oukht Ararati”
organisation

EDITORIAL BOARD

Responsible of the issue:
Tigran Pashabezyan

Address: 375023,
Yerevan, Mashtots 8
Tel. 56-71-50
E-mail:
oukhtaradi@yahoo.com

«Ուխտ Արարատի»
ամսագրից նյութեր
արտատպելիս
խնդրում ենք հղում
կատարել:



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՆՁՆԱՐԱՏՅԿՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Գուրգեն Յանիկյանը 1973-ին ծրագրում ու ձեռնարկում էր իր գործողությունը, նպատակ դնելով աշխարհի ուշադրությունը հրավիրել մոռացված Հայկական հարցի վրա, երևի չէր էլ ենթադրում, որ պայքարը շարունակություն է ունենալու և ընդգրկելու է հայության բավական լայն շրջանակներ ու զանգվածներ: Ծերունի հերոսը չէր հարում սփյուռքահայ որևէ քաղաքական ուղղության և դա էր պատճառը, որ իր պայքարում, սկզբնական փուլում, գրեթե մենակ մնաց: Այդ հետագայում է, որ նա պիտի խոստովաներ. «Իմ մոտեցումը Հայ դատի առնչությամբ նույնն է, ինչ որ անցյալում էր: Խոսքով ոչ ոքիի ազատություն կամ երկիր չի տրվի: Բայց ի՞նչ կարող եմ անել բանտից. ես միայն կարող եմ ուրախանալ, երբ լրագրերում կարդում եմ, որ ստեղծվել է մի բռունցք, որ կոչվում է Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ: Այս բռունցքն է այսօր գործ կատարողը, և իմ միակ հույսը դրա վրա է»:


1975-ին սկսվեց այն շարժումը, որ հետո պիտի կոչվեր Նորագույն զինյալ ազատագրական պայքար: Ծնվեց Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը, որի գործողություններն առաջին փուլում, թվում էր, կրում էին փակ, առանձնացված բնույթ և չէին ընդունելու ժողովրդային պայքարի ձև ու բովանդակություն: Սակայն, պայքարի հաջորդ փուլում՝ 1980-ից, տեղի ունեցան առաջին բացահայտումներն ու ձերբակալությունները և պայքարը ավելի ու ավելի զանգվածային բնույթ կրեց: Քաղաքական առաջին դատավարությունը Ալեք Ենիգոմշյանի դատավարությունն էր, որին հաջորդեցին Մարտիրոս Ժամկոչյանի, ապա «Վան» գործողության մարտիկների դատավարությունները: Վերջինի դեպքում արդեն ֆրանսահայությունը մասնակցեց ցույցերի, միտինգների միջոցով, մամուլով, դատապաշտպանների ներգրավումով, դատարանի դահլիճում անմիջական և ակտիվ ներկայությամբ: Առանձին հնչեղություն ստացավ ազատագրական պայքարին համակիր մամուլը սփյուռքահայ գրեթե բոլոր գաղթավայրերում:

Պայքարն այլևս ժողովրդային բնույթ էր կրում: Ազատագրական պայքարի բարձրակետը 1980-83 թվականներն էին: Ե՛վ այդ տարիներին, և՛ դրանից հետո հայության համակրանքն ու նեցուկը ակնհայտորեն պայքարի կողմն էր:

Հետագայում պայմանները փոփոխվում են էլ ավելի մեծ չափով՝ 1988-91 թվականներին, երբ սկսվում է Արցախյան ազատամարտը և հայտարարվում՝ Հայաստանի նորանկախ Հանրապետության ստեղծումը:

Ժամանակի հոլովություն ավելի ու ավելի է ամրապնդվում այն գաղափարը, որ ազատագրական պայքարին ժողովրդական մասնակցությունը հաղթանակի լավագույն գրավականն է: Այդպես եղավ և Արցախյան ազատամարտում: Խոսքն այն մասին չէ, որ բոլորը զինվորագրվեն պատերազմին ու մեկնեն ռազմաճակատ, բայց, անշուշտ, այն մասին է, որ յուրաքանչյուրն իր տեղում, ի՛ր բաժին նպաստը բերի ընդհանուր նպատակի ու երազի իրականացման գործին:

Այդպիսի մի երևույթ է «Արամ» ֆիլմի ստեղծումը: «Արամը» թվում է՝ ստեղծվեց այնպիսի մի ժամանակա-



հատվածում, երբ փոխվել էին պայքարի բնույթն ու ձևերը: Մի ժամանակահատվածում, երբ կարևորվում էին Արցախի ինքնորոշման և Հայաստանի Հանրապետության պետականության կայացման խնդիրները: Սակայն այստեղ կրկին կարևոր է ժողովրդական մասնակցության հարցը, երբ արվեստագետն էլ իր նպաստն է բերում ընդհանուրի մաքառման ջանքերին և բերում է ազգային ոգին բարձր պահելու ողջունելի նախանձախնդրությամբ: Ռեժիսոր Ռոբեր Քեչիշյանը, դերակատարներ Սիմոն Աբգարյանը, Սերժ Ավետիսյանը, Իզաբել Մադոյանը, թվում է՝ այն նվազագույնը արեցին, ինչ կարող էին իրենց հայրենիքի ու ժողովրդի համար, սակայն մենք կասենք՝ արեցին կարևորագույնը, որ կարող էին:

Արամի դերակատար Սիմոն Աբգարյանը հուզված է ու երջանիկ, «Ուխտ Արարատի» միության գրասենյակում նա հայտնվել է իր մարմնավորած դերի իրական հերոսների շրջապատում, որոնք լռելյայն հասկանում էին իրար և ներողամիտ ժպտում լսելով Արամի պատմությունները ֆիլմի ռազմական հատվածների մասին էին: Քանի որ Արամի պատմությունը, որ թվում է՝ հատուկ մի պատմություն է, իրականում բոլոր տղաների մղած հերոսական պայքարի խտացումն է:

Սիմոնը հիշում է. «Ամենատպալորիչը մորս արձագանքն էր. երբ ֆիլմը տեսավ, շատ հուզվեց և ազդվեց, քանի որ հայրս Հայոց դատի պայքարում, շատ թե քիչ, մասնակցություն էր ունեցել»: Սիմոնը՝ իր մոր ապրումները, մենք էլ հիշենք ԱՍԱԼԱ-ի և բոլոր ազատամարտիկների մայրերին, նրանց ապրումները, խոկումները և, անշուշտ, հպարտությունը իրենց զավակների ու նրանց սրբազան նվիրումի նկատմամբ: Սիմոնի հայրը, որ մասնակցություն է ունեցել պայքարում... Մենք էլ հիշենք ազատագրական պայքարի բոլոր հայտնի ու անհայտ անունները, և դեռ որքան կարելի է թվել, և ինչպես կարող էր այդ պայքարը հաղթանակներ չարձանագրել: Արձանագրեց: Ավելին, ոգևորության ու ոգեշնչումի աղբյուր եղավ Արցախյան ազատամարտում:

Մենք ևս արձանագրենք ու կրկնենք. ազատագրական պայքարում ժողովրդական մասնակցությունը հաղթանակի լավագույն գրավականն է: Ազատագրական պայքարին այդպիսի մասնակցություն է «Արամ» ֆիլմը:



«ԱՐԱՄ» ՖԻԼՄԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ ԻՐԱԿԱՆ ԱՐԱՄՆԵՐԻ ՇՐՋԱՊԱՏՈՒՄ

Օրերս «Ուխտ Արարատի» հասարակական կազմակերպության հյուրն էր ֆրանսահայ մեր հայրենակից, արվեստագետ-դերասան Միմոն Աբգարյանը: Նա կանադահայ ռեժիսոր Ատոմ Էգոյանի «Արարատ» ֆիլմում մարմնավորում էր Մեծ եղեռնի ակնատես-վերապրող-նկարիչ Արշիլ Գորկու (Ռստանիկ Արոյան) կերպարը, այնուհետև ստանձնեց «Արամ» ֆիլմի գլխավոր հերոսի դերը: Հանդիպել իրական Արամների՝ ԱՍԱԼԱ-ի մարտիկների, գաղափարական ջահակիրների գլխավոր դերակատար Արամին՝ Միմոն Աբգարյանին, և չխոսել ֆիլմից, անկարելի է.

- Պարո՞ն Աբգարյան, ինչպե՞ս և ո՞ւմ կողմից հղացավ ֆիլմի ստեղծման գաղափարը:

- Այն, ինչ պատահեց 1970-80-ականներին (խոսքն ԱՍԱԼԱ-ի գործողություններին է վերաբերում) ցնցեց ողջ աշխարհը: «Արամ» ֆիլմի մտահղացումը Ռոբերտ Քեշիշյանին էր, քչերից այն մեկինը, ով, սփյուռքահայ արվեստագետ և ռեժիսոր լինելով, խիղճ ուներ և հետևում էր իր սրտի ձայնին: Միջազգային բեմահարթակի մի կողմում ազգային գաղափարների կարևորության երևույթն ու ժամանակի պահանջն էին, մյուսում՝ կինոյի հետաքրքրական նյութը: Արամի պատմությունը միայն հայերին չէր պատկանում, այն դարձել էր համամարդկային թեմա:

- Որքանո՞վ էր Ձեզ հարազատ ֆիլմի սցենարը, ինչպե՞ս ընդունեցիք նկարահանվելու առաջարկը:

- Չնայած որ մասնագիտությամբ դերասան եմ, բայց, նախ և առաջ, մարդ եմ, և իմ հայությունն է ինձ կերտել, այսպիսին դարձրել: Երբ ձեռքդ են տալիս այնպիսի սցենար, ինչպիսին «Արամ»-ինն է, այդժամ զգում ես հարազատ ժողովրդիդ համար քո կարևորությունը:



«Արամ» ֆիլմի գլխավոր հերոսը՝ Միմոն Աբգարյանը, «Ուխտ Արարատի» կազմակերպության գրասենյակում՝ ԱՍԱԼԱ-ի ապրող հերոսների հետ:

Պատերազմական վիճակը հանգրվան է, բայց ինքնին վերջ չէ, այն պայքարը շարունակելու միջոց է: Իբրև հայ արվեստագետ՝ այդ պայքարի մասն եմ: Հասկանում եմ, որ մեր հայրենակիցներն արտասահմանում խուսափում են Նորագույն գինյալ ազատագրական պայքարի մասին իրենց կարծիքը բարձրաձայնել. ես վախի՛ն հավատում եմ: Մարդկանց, ովքեր վախենում են կամ զգուշանում, ես չեմ անտեսում և անարգում: Պետք է նրանց հասկանալ: Պիտի կրկնեմ, երբ հնարավորություն է տրվում նման պատմություն պատմելու, դու քեզ, որպես հայ արվեստագետ, հպարտ ես զգում: Եվ մտնելով դերիդ մեջ՝ դա անում ես առանց բարկության. «Արամի» մեջ բարկություն չկա, կա կամք և վճռակամություն:

- Երբ գլխավոր հերոսի՝ Արամի կերպարն էիք մարմնավորում, եղա՞ն դրվագներ, որոնք խցիկի առաջ փոխեցիք:

- Ո՛չ, երբ միասին կարդացինք սցենարը, որոշ հարցեր քննարկեցինք Ռոբերտի հետ. նա իրական հերոսների անունները փոխեց, որպեսզի նրանք ազատ լինեն և հետագայում ճնշում չգործադրվի նրանց նկատմամբ: Անհամաձայնության մի քանի դեպքեր եղան ռեժիսորի հետ. մի տեսարան կար, երբ նա ուզում էր, որ զենքն առաջ պարզած մտնեի: Բայց նման գործողության մեջ զենքն առաջ պարզած չեն մտնում: Ինչևէ, Ռոբերտը շատ հետաքրքիր և նուրբ ձևով աշխատեց:

Արվեստը հողագնդի վրա բազմաճաշակ երևույթ է, կան մարդիկ, ովքեր այն սիրում են և ովքեր՝ ոչ: Սակայն բոլորն անթաքույց խորհում են, թե ժամանակն է, որ մենք մեր պատմության անցյալի ու ներկայի մեկնաբանողները դառնանք (հատկապես՝ դերասաններն ու ռեժիսորները), այն գիտակցությունն ունենանք, որ մեր պայքարը դեռ չի վերջացել... Կա մի պայքար, որ վերջ չունի. ինքդ քեզ հետ: Այսինքն՝ մի պայքար՝ ավելի լավ ու արժանավոր անհատ դառնալու, արժանավոր հայ լինելու: Սա է մեր նպատակը:

- Ի՞նչ ապրումներ ունեիք նկարահանման ընթացքում:

- Գիտեի, որ պայքարի գաղափարակիրները տղաներ էին, ովքեր հանուն Հայոց արդար դատի՝ իրենց կյանքն էին նվիրել և դա արել էին գիտակցաբար: Երբ դերիդ մեջ մտնելով՝ սկսում ես ներկայացնել քո հերոսին, պետք է դերասանական աշխարհից ու հոգեվիճակից դուրս գաս և անկեղծ ձևով գործին մոտենաս: Քանի որ ներկայացման մեջ կյանքդ անվտանգ է, դու պարտականություն ունես, որքան կարող ես, առանց ազգայնամոլության, հավատարմորեն դա ժողովրդին ներկայացնել: Ձինյալ



ազատագրական պայքարի գործողությունները և դրանց հետևանքները նկատի ունենալով՝ միջազգային մամուլն ու հեռուստաընկերությունները մեզ՝ հայերիս, ներկայացրեցին՝ իբրև անգիտակից և զազանաբարո (բնականաբար, մենք այդպիսին չենք): Շատ համբերեցինք, որ այդ քայլն արեցինք. «Արամ» ֆիլմը սկսեցինք նկարահանել:

Մեծ պատասխանատվություն է, երբ ներկայացնում ես այն, որի կատարյալ ձևը դերի մեջ մտնելն է: Նկարահանման ժամանակ կային պահեր, երբ մարդիկ ինձ մոտենալ չէին կարող, նույնիսկ՝ Ռոբերտը: Միայն խփելու պահը չէր, այլև այն, որ Արամը եղբորը տեսնում է անդամալույծ դարձած, կամ տեսարանները հոր հետ: **Մի նայվածքով ամեն ապրումները (նույնիսկ ծննդոցից առաջ) կերպավորվում էին, քանի որ պատմությունը շաղկապված մի բան է:**

Ես 43 տարեկան եմ և չեմ կարող ասել, թե 43 տարվա հիշողություն ունեմ. իմ հիշողությունը դարերի պատմություն ունի:

- «Արամ»-ը հանրությանը ներկայացնելուց հետո ամենատպալոբիչ արձագանքը ո՞րն եղավ:

- Մորս արձագանքն էր, երբ ֆիլմը տեսավ, շատ հուզվեց և ազդվեց, քանի որ հայրս Հայոց դատի պայքարում, շատ թե քիչ, մասնակցություն է ունեցել:

1980-ականների դեպքերից սկսած, մենք հարգանք էինք տածում Ջինյալ պայքարի մարտիկների հանդեպ. պետք էր գիտակցել, որ նրանք Գևորգ Չաուշի նման հայտնի մարդիկ չէին, մեզ անծանոթ էին, ընտանիքների տեր, բայց հանուն հայրենիքի՝ «կրակների մեջ նետված»:

- Ո՞րն էր մարտիկի դերի ազդեցությունը Ձեր իրական կյանքում:

- Կարող եմ ասել՝ որպես հայ դերասան, Հայոց դատի ու պայքարի հետ կապված, ես իմ հիմնաքարը դրեցի, դա ինձ համար մեծ հպարտություն է: Դարձյալ ասեմ՝ ես իմ գործն արեցի առանց բարկության ու ատելության: Ես ատելություն չունեմ որևէ մեկի հանդեպ, բայց բաներ կան, որոնցից ձերբազատվել չեմ կարող: Այսինքն՝ մի կողմից թուրքերի հանդեպ ատելություն չունեմ, բայց մյուս կողմից (չունենալով հանդերձ, գուցե ինքս ինձ հակասում եմ) դրանից հրաժարվել չեմ կարող: Հստակ ասենք՝ մինչև թուրքերը Հայոց ցեղասպանությունը չճանաչեն, պաշտոնապես և ակնհայտ, թուրքերին ներել չեմ կարող:

- Պայքարի Ձեր զենքը արվեստն է՝ կինոն, այսօր դեպի ո՞ր եք ուղղել Ձեր «հրացանի փողը»:

- Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ես Ֆրանսիայում եմ ապրում, և կինոյի աշխարհը՝ շրջապատն ու մթնոլորտը, Եվրոպայի և Ամերիկայի հետ կապված մի արդյունաբերություն է, որտեղ պետք է ուշ-իմ լինել և խելացի ձևով վարվել: Այսինքն՝ դարափոփոխ է, պիտի շատ թե քիչ ճանաչում ձեռք բերել, համբավ ունենալ՝ քո գործերն ինքդ անել: Ես այդ վիճակի մեջ եմ. ես համբավի հետևից չեմ վազել ու չեմ էլ վազելու: Իմ արած գործը, կարծես, մարդիկ հավանում են և այդ գիտակցությամբ, ինձ թույլ են տալիս համբերատար լինել, մինչև համբավ և դրամական միջոցներ ունենամ, որ իմ գաղափարներից առանց որևէ բան մսխելու, իմ ձևի ու



տեսակի պատմությունը պատմեմ իմ ոճով ու զգացումներով: Ինչ արել եմ, Հայոց աշխարհից դուրս եմ արել՝ օտար ճանապարհների վրա կայացնելով իմ «ես»-ը:

Հայերը տարօրինակ մարդիկ են. քեզ՝ որպես կայացած արվեստագետի, երկրի ներսում չեմ փորձում ճանաչել, իսկ երբ նրա սահմաններից դուրս ես գնում, քեզ հետ են կանչում: Վերջապես, պետք հասկանալ, որ արվեստագետին պետք է օգնել, սատարել, որպեսզի գոնե տասը հայից երկուսը ոտքի ելնեն, ովքեր, անկասկած, այս աշխարհում ասելիք ու անելիք ունեն:

- ԱՍԱԼԻ-ի իրական հերոսների (որոնց հավաքական կերպարների, գաղափարների և գործողությունների մեն-մենակ կրողն էիք), հետ այսու հանդիպումը ի՞նչ կավելացնի Ձեր՝ Սիմոն Աբգարյանի կյանքում:

- Այլ է, երբ ժողովրդի պատմությունը երկրի պատմաբաններն են գրում (որոնց համդիպում ես զրքերում ու դասագրքերում), բոլորովին այլ, երբ դու ժողովրդի պատմության կարևոր ժամանակահատվածին առերես ես հանդիպում (ասենք՝ աչքիդ առջև են կամ իրական հերոսների կողքին ես): Անշուշտ, անբացատրելի և անկարագրելի ապրումներ են ունենում: Նույն հոգեվիճակն ու ապրումները ունեցա, երբ ԱՍԱԼԻ-ի տղաներին առողջ, զվարթ ու հանգիստ տեսա, պայքարի ոգին նրանց այդքան խաղաղ ու բարի աչքերում: Նրանցում արմատավորված է գաղափարական պայքարը: Կապ չունի, թե ով կընդունի, ով՝ ոչ, բայց գիտակից մարդը նրանց ընդդիմանալու իրավունք չունի: Կարևորը ոգու ընդվզումն է: Այս հանդիպումը ինձ համար պատիվ է:

- Բացի «Ոսկե Ծիրան» փառատոնին մասնակցելուց, ինչո՞վ է արժևորվում Ձեր այդը Հայաստան:

- Հիմա նշանակություն չունի՝ ծնունդով լիբանանցի ֆրանսահայ եմ, թե՛ լուսնահայ. ես հայ եմ, այսօր այստեղ եմ՝ իմ հայրենիք Հայաստանում: Կվերադառնամ Հայաստան, որքան կկարողանամ (ին ուժերով և շատ պարզ ձևով) կսկսեմ իմ գործը. ուզում եմ այստեղ հող ունենալ, տուն կառուցել ու այստեղ ապրել՝ Հայաստանում՝ ժողովրդիս հետ:

ՋԵՄՍԱ ԲԱԴԿԱՅԱՆ

3. 9. - Եվ արծիվն իր հողից մի քիչ տվեց եղբորը՝ բազեին, որ ետ դառնա, բույն չինի... Վարուժան Կարապետյանը խոստացավ Սիմոն Աբգարյանի նվիրական երազանքը՝ իրականություն դարձնել՝ Սասնա սարի իր հողակտորից հող նվիրել նրան՝ տուն կառուցելու:



ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅ ՓՈԽԱՆԱԿ ԱՍԵԼՈՒ ՄԱՍԻՍԸ ՄԵՐՆ Է, ՊԵՏՔ Է ԱՍԻ՝ ՄԱՍԻՍԸ ԻՄՆ Է

Հարցազրույց ԱՍԱԼԱ-ի նախկին քաղաքանտարկյալ, «Ուխտ Արարատի» կազմակերպության նախագահ Վարուժան Կարապետյանի հետ



Վարուժան Կարապետյանը Քլեմվո բանտում, 1996թ.:

- «Ձինյալ պայքարը և քաղաքական ճիշտ գիծը ուղին են Հայաստանի», այս կարգախոսով է հանդես եկել Ձեր կազմակերպությունը 30 տարի առաջ:

- 30 տարի առաջ Հայոց ցեղասպանության 60-րդ տարեկիցը նշվեց Սփյուռքում, այդ ոգեկոչումը չէր կարող անտարբեր անցնել եռուն երիտասարդության կողքով, ովքեր ծնվել ու մեծացել էին օտարության մեջ: 30 տարի առաջ՝ 1975-ին, մեր հայրենիքը՝ Հայաստանը, Սովետական Միության մասն էր կազմում և գտնվում էր քաղաքական «երկաթե» վարագույրի ետևում: Ժողովրդի մյուս կեսը, որ ապրում էր Սփյուռքում, այդ 60 տարիների ընթացքում գտնվում էր խորը թմբիրի մեջ: Այսինքն՝ վեց տասնամյակ էր անցել Հայոց ցեղասպանությունից, ժողովուրդը սփռված էր աշխարհով մեկ և չկար պահանջատիրության որևէ շարժում: Դարի մեծագույն ոճիրն էր կատարվել հայ ժողովրդի դեմ, որի մագապուրծ բեկորները ցիրուցան էին եղել և, կարծես, ոչ ոք պահանջատեր դառնալ չէր ուզում և պատասխան չէր ակնկալում ոճրագործներից: Իսկ մենք՝ այդ տարիների երիտասարդներս, ծնվելով արտասահմանում, ունենալով ազգային գիտակցություն, չէինք կարող ընդունել, որ ունեինք բռնագրավված հողեր և այդպես խաղաղ կարող էինք ապրել օտարության մեջ: Վերլուծելով այդ ամենը՝ համոզվեցինք, որ Ձինյալ ազատագրական պայքարը ճիշտ ուղին է վերատիրանալու և վերականգնելու մեր մարդկային և ազգային իրավունքները: Այդ տարիների ընթացքում հայ ժողովուրդը փորձել էր կուսակցությունների և այլ կազմակերպությունների միջոցով տարին մեկ անգամ նշել ապրիլի 24-ը. լավ ու ողբալ, որը ոչ մի արդյունք չէր տվել: Այդ պաճառով որոշեցինք սկսել զինյալ պայքար, և եթե այդ ժամանակ մենք մեզ իրավունք տվեցինք ժողովրդի անունից պայքարել, միայն նրա համար, որ այդ թվականներին չկար ազգային որևէ ներկայացուցչական մարմին, կամ պետություն, որ ներկայացներ հայ ժողովրդի շահերը: Դրա համար մենք մեզ այդ իրավունքը վերապահեցինք պայքարելու մինչև այն օրը, երբ ունեցանք Ազատ, Անկախ Հայաստան:

- Երկար ժամանակ օտարության մեջ ապրելուց, դեգերելուց, պայքարելուց և ֆրանսիական բանտերում 18 տարի անցկացնելուց հետո, Հայաստան ոտք դրեցիք ապրիլի 24-ին: Երբ այդ մասին խոսեք, հիշեք այլ խորհրդանշական օրեր ևս:

- Առաջին անգամ ես Հայաստանում եմ եղել 1981-ի ապրիլի 24-ին: Առավոտյան թռիչքով, հասա Ջվարթնոց օդանավակայան և լուսաբացին՝ կյանքումս առաջին անգամ, Մասիսը տեսա Դվին հյուրանոցի պատշգամբից: Այդ գիշեր ես չքնեցի. Մասիսով էի հմայված, իսկ առավոտյան ընկերներին հետ ոտքով բարձրացանք Ծիծեռնակաբերդ՝ հարգանքի տուրք մատուցելու մեր նահատակ նախնիներին:

Առաջին օրը, երբ Մասիսին նայեցի, մի տարօրինակ զգացում արթնացավ իմ մեջ, քանի որ բաց ճակատով չէի նայում նրան, այլ՝ ամոթով: Տեսնում էի, որ Մասիսը՝ որպես գերի, գտնվում էր մեր տարածքից դուրս, իսկ ես ոչինչ չէի արել նրա համար:

Առաջին այցիս՝ Հայաստանում մնացի երեք ամիս, դրանից հետո վերադարձա Լիբանան, հետո՝ Եվրոպա: Որտեղ էլ արեցի իմ գործը՝ պարտականությունը, Մասիսի հանդեպ: Դրանից հետո՝ ճակատագրի նախախնամությամբ, երկրորդ անգամ հայրենիք ոտք դրեցի 20 տարի անց՝ 18 տարվա բանտարկությունից հետո, նույն օրը՝ ապրիլի 24-ին: Ի տարբերություն իմ առաջին այցելության՝ այս անգամ բաց ճակատով կարողացա նայել Մասիսին և նորից գնացի Ծիծեռնակաբերդ...

- Եթե խոսելու լինենք Օւլիի գործողության մասին, ճիշտ կլինի խոսել նաև Օւլիի նախապատմության, ձերբակալության և հաջորդող դեպքերի մասին:

- Օւլիի գործողության նախորդող ժամանակաշրջանը ամենաթեժ շրջանն էր ԱՍԱԼԱ-ի համար. նախորդ ամիսներին մենք շատ կորուստներ էինք ունեցել: Կախաղան էր բարձրացվել Լևոն Էքմեքճյանը, Անկարայում նահատակվել էր Ջոհրաբ Սարգսյանը, Լիբանան էր ներխուժել իսրայելյան բանակը, այնտեղ՝ մեր ռազմակայաններում, մեծ թվով զոհեր էինք տվել: Եվ թուրքերն անխնա հալածում էին մեզ աշխարհի տարբեր վայրերում՝ Բեյրութում զնդակահարել էին Սինաս Սիմոնյանին: Այդ օրերին էլ ԱՍԱԼԱ-ն որոշեց հակահարված տալ թուրքական իշխանություններին և նրա ներկայացրած բոլոր հաստատություններին: Թիրախ էր ընտրված թուրքական ավիաուղիները, քանի որ այդ ուղիներով թուրքական ՄԻԹ (Թուրքական ազգային անվտանգություն) կազմակերպությունը իր գեներալներով ու պատվիրակներով գալիս էր Ֆրանսիա: ԱՍԱԼԱ-ի նպատակն էր ոչնչացնել այդ պատվիրակությանը, ովքեր գալիս էին հալածելու և քայլեր ձեռնարկելու ԱՍԱԼԱ-ի դեմ: Այդ գործողությունը օդանավի ուշացման պատճառով ձախողվեց. ռումբը պայթեց ավիաուղիներում: Անշուշտ, ԱՍԱԼԱ-ն ստանձնեց այդ գործողության պատասխանատվությունը, այդ դեպքից երեք օր անց ես ձերբակալվեցի Փարիզում: Ինձ հետ



ծերբակավեցին ավելի քան 60 հայեր, ովքեր այդ գործում կասկածի տակ էին առնվել: Սկսվել էր հետաքննությունը Օռլիի դեպքի շուրջ: Այդ տարիներին ես ղեկավարում էի Եվրոպայի զինվորական թևը՝ ԱՍԱԼԱ-ի զինվորական գործողությունների հրամանատարն էի: Եվ պարտականության զգացողությունը ինձ թելադրեց, որ այդ ընթացքում պատասխանատու էի ծերբակաված ընկերներիս ու հայերի կյանքի համար: Ուստի, որոշեցի ստանձնել պատասխանատվությունը, որպեսզի կարողանամ աքսորից և Թուրքիա վերադառնալուց փրկել այն հայրենակիցներիս, որոնք ուղղակի կամ անուղղակի կապ ունեին մեզ հետ:

Դատավարությունը ունեցավ քաղաքական մեծ նշանակություն և հնչեղություն, չնայած որ թուրքերը փորձում էին փոխել նրա ընթացքը, մենք այն վերածեցինք քաղաքական դատավարության և Հայոց ցեղասպանության հարցը մեկ անգամ ևս վերարժարծվեց այդ դահլիճներում: Անկախ նրանից, թե ինչ վճիռներ կայացվեցին, մենք հոգու խորքում համոզված էինք, որ մեր արածը արդարացի էր. հանուն այդքան նահատակների, որ մենք էինք տվել, թշնամին չէր կարող անպատիժ մնալ: Այնպես որ, մենք սրտաբաց այդ վճիռների և մեր պատասխանատվության տերը եղանք: Այդ տարիների ընթացքում արժանապատվությամբ կրեցինք մեր տառապանքներն ու զրկանքները և բաց ճակատով՝ տղամարդուն վայել արժանապատվությամբ, դուրս եկանք բանտից: Անշուշտ, այդ գործողությունը չպիտի կատարվեր Ֆրանսիայում, եթե մինչ այդ Ֆրանսիան ճանաչած լիներ Հայոց ցեղասպանությունը: Ես չպետք է ասեմ, որ այդ գործողության շնորհիվ Հայոց ցեղասպանությունը ճանաչվեց Ֆրանսիայում, բայց եթե չլիներ մեր ծավալուն զինյալ պայքարը, ապա այսօր ոչ Ֆրանսիան և ոչ էլ մի շարք պետություններ չէին ճանաչի Հայոց ցեղասպանությունը:

- 18 երկար ու ծիգ տարիներ. էներգիայով լեցուն և գործելու տենդով համակված երիտասարդի համար արդյո՞ք շատ չէր և ինչի՞ կարողացավ փոխակերպվել այդ ամենը: Լեռնային արծիվը բանտարկված...

- Բանտային 18 տարիները սովորական մի հանցագործի համար կարող են միայն օրացուցային տարիներ համարվել, բայց ինձ համար 18 տարին համարվեց 18 դար: Պատկերացրեք՝ ազատատենչ երիտասարդը շղթայակապ գտնվում էր բանտում, իսկ այդ ժամանակ նրա եղբայրներն ու զինակիցները կենաց մահու կռիվ էին մղում արցախյան ազատամարտում: Ինձ համար ավելի վատ բան չիմեղ չէր կարող:

Մարդկային հոգու կամքի համար անկարելի բան չկա. ընկերներս կռվում էին այստեղ, իսկ ես՝ այնտեղ՝ բանտում, մտքի թռիչքով՝ իմ վրձնով, միանում էի նրանց պայքարին: Կյանքում արվեստի՝ վրձնի հետ գործ չեմ ունեցել: Հոգեկան մղումն ինձ ստիպեց այդ օրերին պատկերել Ջորավար Անդրանիկի հաղթական արշավը՝ նժույզի ծառսը: Նկարելն ազատամարտին մասնակցելու ինչ-որ մի ձև էր և բառերով հնարավոր չէր նկարագրել, թե որքան էր դժվար, ամեն գիշեր գլուխս բարձին դնելով սավառնում էի մտքերով դեպի լեռներն իմ հայրենի ու երագուն իմ նժույզով ազատորեն արշավել: Իմ ամբողջ փորձերը, պողպատյա երկաթները «ատամներով կրծելով», որպեսզի կարողանամ դուրս գալ, գուր անցան: Դա որոշ մարդկանց դավաճանության հետևանքով եղավ, ովքեր խոստացան, բայց այդպես էլ չօգնեցին, այլապես՝ ես կարող էի հազար անգամ այնտեղից դուրս գալ՝ ազատվել:

Երկի՞ բարին էլ դա էր, որ այդ տարիների ընթացքում ես չմնացի պասիվ. ստեղծագործել եմ և հոգվածներ գրել, պայքարել եմ և պատվով ազատվել:

- Հայոց պետականության կայացման դժվարին գործընթացն է ընթանում, ո՞րն է ամենակարևորը Ձեր կարծիքով:

- Մենք դարեր ի վեր երազել ենք ունենանալ անկախ պետականություն և, ափսոս, այդ ընթացքում կորցրել ենք մեր պետականությունն ու իշխանությունը: Պետականության ստեղծման գործում, այսօր մենք ամեն ինչ սկսում ենք նորից, սովորում ենք մեր սխալներից: Մեր երկրի հաջողության և զարգացման հարցը պետք է լինի այն, որ դարերի ընթացքում պետականությունը կորցրած ժողովուրդն այսօր ունենա պետական մտածողություն: Քանի որ մենք դարեր շարունակ եղել ենք հատվածական մտածողության տեր (կուսակցությունների, իշխանությունների ու համայնքների բաժանված), այդ պատճառով էլ կորցրել ենք մեր պետական մտածողությունը: Մեզ համար կարևոր է այն հանգամանքը, որ որպես ազգ, որպես ժողովուրդ, դարերի ընթացքում որքան ձևավորված կառույցներ ունենք Հայաստանում և արտասահմանում, համախմբենք մեր պետականության շուրջ՝ ուժեղացնելով այն: Լինեն դրանք իշխանամետ, թե ընդդիմադիր կուսակցություններ, չպետք է խառնեն ու շփոթեն կուսակցական և հատվածական իրենց շահերը մեր ազգային գերագույն շահերի հետ: Այսօր մեր պետությունը ներկայացված է ՄԱԿ-ում՝ որպես ինքնուրույն պետականություն, դրա համար մեզանից յուրաքանչյուրի հզորացման երաշխիքը կախված է մեր պետականության հզորացումից: Եվ մենք ամեն ինչ պիտի անենք, որ մեր պետությունը ուժեղանա ոչ միայն ռազմականորեն, այլև՝ տնտեսապես: Յուրաքանչյուր հայ անհատի ապահովությունը պետական ուժեղ կառույցների մեջ է:

- ԱՍԱԼԱ-ի նախկին քաղբանտարկյալներով և ազատամարտիկներով՝ ասել է, թե մարտական ընկերներով որոշեցիք կրկին համախմբվել: Ինչո՞ւ:

- Ինչպես նշեցինք, երբ մենք սփյուռքում մեզ իրավունք վերապահեցինք պայքարել հայ ժողովրդի անունից, չունեինք պետականություն: Այն օրը, երբ անկախություն ունեցանք, ես բանտում իսկ քաղաքական մի հայտարարությունով հանդես եկա և ասացի, որ այսուհետ մեր գեները, մեր պայքարը պետք է տեղափոխենք այնտեղ, որտեղ սպառնում են մեր ժողովրդի գոյությանը: Այդ օրերին ամենաթեժ մարտերն էին ընթանում Արցախում և Հայաստանի սահմաններում, վտանգված էր մեր ազգային պետական կյանքը:

Իսկ այսօր՝ բանտից ազատվելուց հետո, ինձանից բացի, ԱՍԱԼԱ-ի մյուս ընկերները, որ բացահայտված ենք





մեր գործողություններով, մեր կողքին ունենք նաև ոչ հայտնի ազատամարտիկներ: Մենք, որ այն տարիներին չունեինք պետականություն, իրավունք ունեինք ընդհատակյա գործողություններ ծավալել, քանի որ հող չունեինք մեր ոտքերի տակ, որ մեզ համար լինելու կռվան: Հիմա, երբ ունենք ոչ միայն անկախ հայրենիք, այլև՝ հաղթանակած բանակ, որը պատիվ է ունեցել ազատագրել տարածքներ, համարում ենք, որ դուրս ենք եկել ընդհատակյա գործունեությունից, համարում ենք, որ ԱՍԱԼԱ-ն ընդհատակյա գործողությունները շարունակելու կարիք չունի, և որ մենք պետք է լծվենք մեր պետական մտածողության ձևավորման և նրա միջոցով ազգային պետականության կառուցման գործին: Այսինքն՝ մեր պայքարի հիմնական սկզբունքը չի փոխվել, փոխվել են ձևը և միջոցները: Մենք մեզ կոչել ենք «Ուխտ Արարատի»: Արարատը խորհրդանշան է Արևմտյան Հայաստանի՝ մեր բռնագրավված տարածքների, և մենք ամեն ինչ պիտի անենք, բացահայտորեն՝ հասարակական-քաղաքական գործունեության սկզբունքներով: Մենք ստանձնել ենք հետևյալ պարտականությունները. որպես նախկին ազատամարտիկներ՝ մեր վարքագծով օրինակ պիտի դառնանք եկող սերունդներին, նպաստենք մեր պետության և մեր բանակի հզորացմանը ու երկրի տնտեսական վիճակի բարելավմանը: Քանի որ մենք շատ ամուր կապեր ունենք արտասահմանում, պիտի քաջալերենք սփյուռքահայ գործարարներին, որպեսզի իրենց ներդրումները կատարեն հայրենիքում՝ նպաստելով նրա տնտեսական և մշակութային զարգացմանը:

Աշխատելու ենք **Վերադարձի** գաղափարը սերմանել յուրաքանչյուր սփյուռքահայի գիտակցության մեջ, քանի համարում ենք, որ հայապահպանումը սփյուռքում ինքն իրեն չի արդարացնի, եթե չլինի **Վերադարձի** գաղափարը: Մենք պատրաստ ենք օգնելու և ուղղություն ցույց տալու յուրաքանչյուր հայի, ով ցանկանում է թեկուզ մեկ ոտքով կապվել հայրենիքի հետ: Մենք պայքարելու ենք նաև հողի երևույթների դեմ, որոնք վտանգում են մեր հասարակական կյանքը. այլասերված աղանդների, որոնք խանգարում են մեր հավատքն ու դարերի ավանդույթը: Պայքարելու ենք կաշառակերության դեմ, որ խոչընդոտում է երկրի զարգացմանը, դասալքության դեմ, արտագաղթի դեմ, պայքարելու ենք մարդկային թրաֆիկինգի դեմ և այն կավատների, որոնք մեր անչափահաս աղջիկներին և կանանց խաբելով, այստեղից տանում և որպես ապրանք՝ ծախում են օտար երկրներում (Դուբայում, դժբախտաբար, Թուրքիայում ևս):

Մենք պայքարելու և անելու ենք ամեն ինչ, որ մեր ժո-

ղովրդի մեջ բարձրանա ազգային ոգին: Նոր սերունդները դաստիարակվեն նժողովրդի գաղափարախոսությամբ, մի վարդապետությամբ, որ այժմեական է կրկին, ինչպես՝ դարասկզբին:

- Դուք շոշափելիորեն, առարկայնորեն վերագտաք հայրենիքն ու Ձեր նվիրական անկյունը՝ ընտանիքը:

- Յուրաքանչյուր մարդ ունի երազանք, պատահում է, որ այդ երազանքները իրականանում են: Իմ պարագայում իրականացել են ոչ միայն իմ երազանքները, այլև՝ իմ երազների մեջ տեսած երազները: Մենք դարերով պայքարել ենք, որ տիրոջ իրավունք ունենաք մեր հայրենիքում: Սփյուռքում ամեն ինչ ունեինք, բացի տեր լինելու իրավունքից, իսկ մարդ արարածը, ամեն տեղ կարող է ապրել, բայց չի կարող ապրել միայն ուտել-խմելով: Այս բոլորի կողքին մարդու համար, որքան հաց ու ջուր է պետք, նույնքան էլ արժանապատվություն: Դրա համար այդքան տարիներ անց մենք վերագտանք մեր քաղաքացի լինելու, **մեր երկրում տեր լինելու արժանապատվությունն ու իրավունքը:**

Մեր նախնիների բռնագաղթից, թափառումից, Հայոց ցեղասպանությունից 90 տարի անց, ինչպես նաև 30 տարվա պայքարից, դատապարտումներից ու քսորից հետո վերադարձել են հայրենիք: Ընտրել են այնպիսի մի տարածք, որ կոչվել են «Սասնա սար»՝ ի պատիվ իմ պապերի: Այնտեղ կառուցել են մի նոր օջախ, խորհրդանշական մի թոնրատուն, որի բարձրությունը 11 մետր է, որտեղից նորից պիտի ծխա հայկական մի նոր թոնիր և նահապետական մի նոր օջախ: Սա ինքնին փաստ է մեր ժողովրդի գոյատևման կամքի, ինչպես Վիլյամ Սարոյանն է ասել. «Ինչ էլ անեք այս ժողովրդին՝ ջարդեք, կոտորեք, նա հետ է վերադառնալու և իր օջախի ծուխը նորից է բարձրացնելու»: Դա իմ պարտքն էր, առաջին օրերին, երբ եկա Հայաստան, լրագրողներն ինձ հարցրեցին, թե ի՞նչ են անելու, ասացի, որ եկել են իմ սեփական ձեռքերով իմ տունը կառուցելու: Եվ հիմա կառուցում են: Ես վստահ եմ, որ յուրաքանչյուր հայ մարդ մտածում է, թե իր երեխային ինչ է ժառանգելու: Ես իմ որդուն ժառանգելու եմ հող, որի տերն ինքն է լինելու և որը պաշտպանելու է իր ողջ եությանը, իր ունեցած զենքերով, անգամ՝ իր ատամներով ու եղունգներով...

- Ձեր մաղթանքները մեր ժողովրդին ու հայրենիքին:

- Շփվելով իմ ժողովրդի հետ՝ ես զգում եմ, որ նա սպասում է իրաշքի, որպեսզի բարելավվի իր վիճակը՝ կյանքը: Եվ ես պիտի ասեմ, որ այդ իրաշքը մեր մեջ է: Եթե մենք կարողանանք այդ իրաշք գավազանը ճիշտ օգտագործել, շատ արագ ամեն ինչ տեղը կընկնի: Իսկ այդ իրաշագործ գավազանի զորությունը հետևյալ խոսքերի մեջ է. «Եթե յուրաքանչյուր հայ ասելու փոխարեն «մեր երևանը», այսուհետ ասի «իմ երևանը», ամեն ինչ կգտնի իր հունը: **Ամեն հայ պիտի ասի՝ «Հայաստանը իմ տունն է՝ իմ Հայրենիքը, Հայոց բանակը ոչ թե մերն է, այլ իմն է, որտեղ հպարտությամբ են ծառայել, Սասիսը ոչ թե մերն է, այլ՝ իմը»:** Երբ ունենանք այս գիտակցությունը, մենք կունենանք շատ մաքուր, հոգատար և հայրենասեր մի սերունդ, որը կկապվի մեր հայրենիքի ամեն ինչին՝ բնությանը, ծառերին, կամրջին, թատրոնին, մշակույթին, լեզվին, բարբերին ու ավանդույթներին, քանի որ այդ ամենը դառնալու է իր սեփականությունը...

ՆԱՆԵ ՍԵՎԱՆ



ՄԻՄՈՆ ՆԱԻՐՅԱՆ. «ՄԵՐ ԲՈԼՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՆԵՒՆ»

- Պարո՛ն Նաիրյան, լրանում է Նորագույն զինյալ ազատագրական պայքարի 30-ամյակը՝ որպես պայքարի մասնակից և ԱՍԱԼԱ-ի նախկին քաղբանտարկյալ, ի՞նչ կասեք:

- 30 տարին պայքարի համար քիչ ժամանակ է, միաժամանակ շատ երկար նրա համար, ով անձամբ է եղել այդ պայքարի մեջ՝ առաջին շարքերում: Չնայած որ 11 տարի են անցկացրել ֆրանսիական բանտերում, սակայն այդ երեք տասնամյակի պսակն եղավ այն, որ հայն այսօր ունի անկախ հայրենիք և ամուր բանակ: 30-ամյա գաղափարական պայքարը հիմա շարունակվելու է այլ ռազմավարությամբ՝ հատկապես՝ պետականակերտման ճանապարհով: Իմ և ընկերներիս նպատակն է սատարել մեր պետությանը և մենք, մեր լուսնան ներդրելով նրանում, հասնելու ենք մեր գլխավոր նպատակին՝ Արևմտյան Հայաստանի ազատագրմանը:

- Ի՞նչ մտորումներ ունեք Օռլիի գործողության հետ կապված:

- ԱՍԱԼԱ-ի բոլոր գործողություններից ամեն մեկը, իր տեղի և օրվա համաձայն, իր կարևորությունն ու նշանակությունն ունի: Անշուշտ, եղել են հատուկ գործողություններ, որոնք մեծ քայլերով մեր պայքարն առաջ տարան: Օռլին այդ ամենի մեջ առանձնահատուկ տեղ ունեք: Առանձնահատուկ եղավ և ֆրանսիական իշխանությունների վերաբերմունքը գործողության նկատմամբ: Ձերբակալվեցին մեծ թվով հայեր, այդ թվում՝ թուրքահայեր: Իշխանությունները սպառնում էին նրանց արտաքսել Թուրքիա: Այդ պահին կարևոր էր մեր պատասխանատվության բաժինն ստանձնելը, որն էլ արեց մեր հրամանատարը՝ Վարուժան Կարապետյանը, որպես մի նավապետ մնա-

լով վտանգված նավի վրա մինչև վերջ և մտածելով ուղևորների փրկության մասին: Այդպես եղավ: Եվ ամենածանր զինը վճարեց, դատապարտվեց ցմահ բանտարկության: Այլապես շատերն էին դատապարտվելու, մինչև իսկ մահապատժի ենթարկվելու իրենց երկրներում: Ես դատապարտվեցի 15, Հովհաննես Սենեքյանը՝ 10 տարվա բանտարկության:



- Ազատ արձակվելուց հետո հաստատվեցիք Հայաստանում...

- Այո՛, մեր պայքարը հայրենիքի ազատագրության համար էր, Արևմտյան Հայաստանի: Հայաստանի Հանրապետությունը մեր ամբողջական հայրենիքի ճիշտ է փոքր, բայց շատ կարևոր մասն է՝ իր ժողովրդով և պետականությամբ: Այլ տեղ ես չէի էլ ուզում գնալ: Եթե հաստատվել, ապա՝ հայրենիքում: Այդպես էլ վարվեցի: Ամուսնացա բանտում ինձ նամակներ գրած հայուհիներից մեկի հետ: Ունեք մեկ տղա և մեկ աղջիկ: Այսօր Ազատ, Անկախ Հայաստանի քաղաքացի եմ: Իմ մարտական ընկերներից շատերն են Հայաստանում հաստատվել: Ինչպես գիտեք, ստեղծել ենք միություն՝ «Ուխտ Արարատի», որի հիմնադիրներից մեկն էլ ես եմ: Միասին փորձում ենք մեր գաղափարական քաղաքական պայքարի շարունակությունը գտնել Արարատի ուխտի ճանապարհին:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

7 ՕԳՈՍՏՈՍ 1982-Ի ԿԵՍՐԵՆ ԵՏՔԸ ԱՆԳԱՐԱՅԻ ՕՊԱԿԱՅԱՆԻՆ ՄԵՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԿԱՐԻՆ (ԷՐԶՐՈՒՄ) ԱՆՁՆԱՄՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ ԱՆՁՆԱՄՊԱՆԱԿԱՆ ԲՈՄԱՆՏՈՆ, օժանդակութեամբ նահատակ Փիլր Կիլիմեան Բոմանտոյին, յարձակում գործեց Անգարայի օդակայանին վրայ, ԿԱՐԻՆ (ԷՐԶՐՈՒՄ) Գործողութիւնը իրագործելու համար:

Յարձակումը սկսաւ ձեռնառումբերով եւ զնդացիրներով, որպէս թիրախ ունենալով օդակայանէն ներս ոստիկանութեան զօրան ո ց ը :



Յարձակման յաջողութեան հետևանքով զոհվեցին 13 թուրք զինուորներ, օդակայանի ապահովութեան ուժերէն 8 զինեալներ, ինչպես նաեւ 12 ճամբորդներ, որոնք պատանդ բռնուած էին մեր ընկերներուն կողմէ, եւ որոնք զոհ գացին թրքական ֆաշիզմի զնդակներուն: Վերջապէս, օդակայանէն ներս տեղի ունեցած վայրագ բախումներուն հետեւանքով վիրաւորուեցան 113 ուրիշներ:

ղի ունեցան հերոս յարձակողներուն եւ զօրանցի զինեալներուն միջեւ:

Սոյն գործողութիւնը կ'իյնայ մեր արդար յեղափոխական պայքարի յառաջխաղացքի ծիրին մեջ, ընդդէմ՝ մեր ժողովուրդի թշնամի թուրք ֆաշիզմին, որ բնաջնջելէ յետոյ մեր հողերուն վրայ գտնուող հայ ժողովուրդը, մինչեւ այսօր կը շարունակէ բռնագրաւեալ պահել հայկական հողերը: Կը հաստատենք, թէ մեր պայքարը վերջ պիտի չի գտնէ՝ մինչեւ մեր բռնագրաւուած հայրենիքի ամբողջական ազատագրումը թրքական ֆաշիզմէն:


ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ հետեւանքով սպանուեցան 13 թուրք զինուորներ, օդակայանի ապահովութեան ուժերէն 8 զինեալներ, ինչպես նաեւ 12 ճամբորդներ, որոնք պատանդ բռնուած էին մեր ընկերներուն կողմէ, եւ որոնք զոհ գացին թրքական ֆաշիզմի զնդակներուն: Վերջապէս, օդակայանէն ներս տեղի ունեցած վայրագ բախումներուն հետեւանքով վիրաւորուեցան 113 ուրիշներ:

Պատանդներու պաղարհիւնութեամբ սպանութեան ամբողջական պատասխանատուութիւնը կը բեռցնենք թրքական ֆաշիզմի ուսերուն ու կը վերահաստատենք թէ պիտի շարունակենք մեր զինեալ պայքարը մինչեւ մեր հայրենի հողերու ամբողջական ազատագրումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿ



ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՐԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԶՕՐԱՊ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ԽՕՍՔԸ ՈՒՂՈՒԿԱԾ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ



Սոյն նամակս կ'ուղղեմ Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի ղեկավարութեան քատրերուն, պայքարող ընկերներուս, համակիրներուն, ինչպէս նաեւ կազմակերպութեանս աշխարհասփիւռ բոլոր համակիր շարժումներուն:

Իմ այս տողերս կը գրեմ սրտիս խորքէն: Կ'ուզեմ արտայայտել այն

ոգին զորս կը նուիրեմ աշխարհասփիւռ Հայ ժողովուրդի զաւակներուն եւ յատկապէս Սովետական Հայաստանի Հայութեան, որ իր զոհողութեամբ կերտեց մեր պատուաւոր պատմութիւնը եւ կրցաւ փոքր հայրենիքին վրայ կերտել ու պահպանել մեր ազգային ոգին ու ժառանգը:

Հաւատացէք պիտի գայ օրը եւ յաղթանակներ պիտի արձանագրենք ճգնելով կայսերապաշտական վարչակարգերն ու անոնց դաշնակիցները եւ պիտի ազատագրենք Հայաստանը:

Գուցէ ես չկարենամ տեսնել հայրենիքս: Սակայն պիտի տեսնեմ զայն Հայ ժողովուրդի յեղափոխական զաւակներու աչքերով: Վստահաբար պիտի վերադառնանք մեր հայրենիքը:

Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի ընկերներուս կը ձգեմ իմ միակ կտակս: Շարունակել պայքարը մինչեւ Հայաստանի ազատագրութիւնը, թրքական ֆաշիզմի եւ կայսերապաշտութեան լուծէն:

Աշխարհասփիւռ Հայ ժողովուրդ, երբ մենք կը պայքարինք ի խնդիր մեր կեդրոնական դատին, ձեր կեդրոնական շահերու համար է այդ: Ձեր շահերը կը պահանջեն ազատագրել ձեր հողերը թրքական ֆաշիզմէն, որ կոտորեց աւելի քան 1,5 միլիոն Հայ:

Ողջոյններս՝ ձեզի բոլորիդ:



Ապրիլի 24-ի երթը Զոհրաբի և Լևոնի նկարներով, 1990թ., Օիտեռնակաբերդ:

ԼԵՎՈՆ ԷՔՄԷՔԵԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՕՍՔԸ ՈՒՂՈՒԿԱԾ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Կը կոչուիմ Լեւոն Էքմէքեան:

Բարեւներ հայ ժողովուրդին: Վերջին խօսքս կ'ուղղեմ աշխարհասփիւռ Հայութեան:

Կը ներէք, որ խօսքերս պիտի ըլլան քիչ մը քննադատական: Սակայն ինչ որ կ'ըսեմ, իրականութիւն է:

Խղճալի է ժողովուրդի մը համար, որ կտրած է օտարներու ստրկութեան շղթան եւ հիմա դարձած է դրամատէր ու կայսերապաշտ ղեկավարներու ստրուկը: Ցաւալի է շատ: Արդեօք աւելի լաւ չէ՞ր մնալ անկաշկանդ:

Խօսքս ձեզի է հայեր: Ե՞րբ պիտի արթննաք եւ հասկնաք ինքնուրոյնութեան իմաստը: Գիտակից էք ամէն ինչի, գիտէք ծուռն ու շիտակը եւ սակայն միշտ ենթակայ էք ծուռին: Երբ ձեր առջեւ կան իրականութիւններ. վեհանձնութիւնը, ազնուութիւնը, զոհողութիւնը եւ անդին բռնութիւնը, դաւաճանութիւնը, տառապանքն ու ստրկութիւնը: Եւ, մանաւանդ, դուք՝ նոր սերունդ, անսպառ պաշար ունիք ամէն տեսակի վայելքի եւ կաթիլ մը արիւն չունի՞ք հայ ժողովուրդին: Շատ ցաւալի է այս ամէնը: Տեղ մը բանտ ու տառապանք, բայց նաեւ հաւատք եւ անձնագոհութիւն: Ուրիշ տեղ մը վայելք, խրախճանք ու կռապաշտութիւն:

Հետաքրքիր չէք հայ դատով, որովհետեւ հանգիստ էք: Բայց այս հանգստութիւնը դէպի մահ կ'առաջնորդէ մեզ բոլորիս: Խաբկանք է այս հանգստութիւնը:

Վերջապէս հասկցէք, թէ մեր հողերը բռնագրաւուած են եւ թէ մեր ժողովուրդն ալ գերի է օտարներու ձեռքերուն մէջ: Եւ ինչպէս կ'ըսեմ. «կամ այս ծովուն ձուկը կ'ըլլաս կամ ալ կը մեռնիս»: Բայց մենք ոչ այդ ծովուն ձուկը պիտի ըլլանք, ոչ ալ պիտի մեռնինք:

Այո՛, մենք պիտի ապրինք եւ մեր միակ միջոցը այս է: Մենք մեր ծովուն ձուկը պիտի ըլլանք: Մենք պիտի տնօրինենք մեր ապագան: Ինքնուրոյն ըլլալու համար մեր միակ յոյսը յեղափոխութիւնն է: Լաւ հասկցէք այս:

Յեղափոխութիւնը կը պահանջէ զոհողութիւն եւ առանց զոհողութեան չենք կրնար հասնիլ մեր նպատակին:


Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակը փշրած է այն շղթան, որ կլանած էր մեր ամբողջ ուղեղը եւ որ ճնշուած կը պահէր մեզ:

Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակը քալած-անցած է անձնագոհութեան սահմանը:

Այս ինչ զոհողութիւն, ինչ հաւատք, ինչ գերբնական կորով:

Տեսնելով այս բոլոր սխրագործութիւնները՝ այլեւս ձեր մէջ թող արթննայ նախանձի բջիջը: Լսեցէք Յեղափոխութեան ձայնը եւ հետեւեցէք անոր: Յեղափոխութիւնը միակ ճամբան է, որ մեզի կ'առաջնորդէ դէպի Հայաստանի ազատագրութիւն: Եւ մենք այդ ժամանակ որպէս մեր ծովուն ձուկը կը սուզուինք մեր ազատ ջուրերուն մէջ:

Սրտագին մաղթանքներս ձեր բոլորին եւ յաջողութիւն:





ԹՈՒՐՔԻԱՆ՝ ՂԱՐԱՔԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄ

Վերջին՝ առնվազն տասը տարիների ընթացքում, տարբեր միջազգային կազմակերպությունների, ԱՄՆ-ի, ԵՄ կողմից Թուրքիային առաջարկվել է բացել Հայաստանի Հանրապետության հետ իր սահմանը, սակայն պաշտոնական Անկարան մինչ օրս խուսափում է ընդառաջ գնալ այս հորդորներին: Ավելին, Ադրբեջան կատարած պաշտոնական այցերի ժամանակ Թուրքիայի քաղաքական վերնախավի ներկայացուցիչները չեն հապաղում հնչեցնել իրենց հայտնի բանաձևը, համաձայն որի, մինչև ղարաբաղյան հիմնահարցի հօգուտ Ադրբեջանի կարգավորումը, Թուրքիան երբևէ սահման չի բացի և դիվանագիտական հարաբերություններ չի հաստատի ՀՀ հետ: Մի կողմ թողնելով հարցի հուզական կողմը՝ փորձենք ժամանակակից գիտավերլուծական մեթոդների հիման վրա դիտարկել Թուրքիայի դերակատարության առանձնահատկությունները հակամարտության ոլորտում և տրամաբանորեն պատասխանել այն հարցին՝ արդյո՞ք Թուրքիան հանդիսանում է հակամարտող կողմ:

Առնվազն միամիտ կլիներ կարծել, որ փորձելով նպաստել հակամարտության խաղաղ և շուտափույթ կարգավորմանը, Թուրքիան ոչ միայն չստանձնեց նման դերակատարություն, այլ ճիշտ հակառակը՝ ամեն կերպ փորձեց Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմում ապահովել վերջինիս ռազմական հաղթանակը:

Քաղաքագիտական գրականության մեջ ընդունված տեսակետ կա հակամարտությունների ոլորտում երրորդ կողմի ներգրավման շուրջ: Նման ներգրավումը մի կողմից կարող է բերել հիմնախնդրի կամ պատերազմի կասեցմանը միջնորդ երկրի կամ կազմակերպության ջանքերով, իսկ մյուս դեպքում հակամարտության ոլորտ երրորդ կողմի ներթափանցումը կարող է էլ ավելի սրել և ուժգնացնել այն: Շատ դեպքերում հակամարտության ոլորտ տեղի ունեցող կամ անուղղակի ներխուժումներն իրականացվում են ազգացեղային կամ կրոնական ընդհանրության վրա խարսխված գաղափարներով:

Թուրքական կողմի դիրքորոշումը լիովին ի ցույց դրեց նեոպանթուրքական քաղաքականության էությունը՝ որոշակիորեն բացահայտելով ղարաբաղյան հակամարտության ոլորտում դրա խիստ միակողմանի՝ ադրբեջանամետ լինելը:



Ղարաբաղյան հակամարտության ընթացքում թուրքական կողմի նախաձեռնություններն ընդդեմ Հայաստանի Հանրապետության, կրում էին ակնհայտ ռազմական բնույթ: Դրանց թվում կարելի է հիշատակել.

- Թուրքական բանակային ստորաբաժանումների պարբերաբար տեղաբաշխումը հայ-թուրքական սահմանի երկայնքով, որը ոչ այլ ինչ էր, քան ուժի ցուցադրում,
- Ադրբեջանին զգալի ռազմական օգնության տրամադրումը՝ խախտելով իր միջազգային պարտավորությունները,
- Երկրի առաջին դեմքերի կողմից ՀՀ դեմ ռազմական ներխուժում իրականացնելու շուրջ պարբերաբար հնչեցրած սպառնալիքներ,
- ՀՀ օդային սահմանի խախտումները և ՀՀ տարածքի ուղղությամբ գրանցված կրակահերթերը,
- ՀՀ տրանսպորտային և տնտեսական շրջափակման իրականացումը:

Բացի այս, ըստ էության, ռազմական բնույթ կրող ձեռնարկներից, թուրքական կողմը ձեռնամուխ եղավ նաև միջազգային ատյաններում ադրբեջանամետ դիրքորոշման ապահովմանը՝ հիմնականում կիրառելով հետևյալ բնույթի նախաձեռնություններ.

- Հայկական կողմին դատապարտող բանաձևերի ընդունում միջազգային ատյաններում և այլ երկրների կողմից,
- ՀՀ տեղեկատվական մեկուսացմանն ուղղված քայլերի ձեռնարկում,
- ՀՀ հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար նախապայմանների առաջադրում և այլն:

Հաշվի առնելով այս հանգամանքները՝ կարող ենք փաստել, որ Թուրքիան բոլոր առումներով հանդիսանում է Ղարաբաղյան հակամարտության կողմ: Ուստի, մեր դիվանագիտության առաջնահերթ խնդիրներից մեկն է վերանայել Թուրքիայի հանդեպ ունեցած նախնական դիրքորոշումները և միջազգային ատյաններում աշխատանք տանել այս դրույթն ամրագրելու ուղղությամբ:

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու



ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների լույսի ներքո



Հայերի ինքնապաշտպանության կազմակերպիչներից՝ Նիկոլ Դուման

Խնդրումները թաթարների շրջանում.

1905-1906թթ. Այսրկովկասում ծավալվեցին հայ-թաթարական ընդհարումներ, որոնք սկիզբ առան Բաքվի՝ 1905թ. փետրվարին տեղի ունեցած հայկական կոտորածներից:

Մեկ և կես տարվա ընթացքում արյունալի ընդհարումներ եղան մասնավորապես Այսրկովկասի այն շրջաններում, որտեղ թաթարական տարրը թվով գերակշռում էր հայկականին:

Պետական խորհրդի քարտուղարի օգնական Եվանգուլովի՝ Կովկասի փոխարքային ուղարկված մի նամակում նշում է. «Այդ կոտորածները սկսվեցին փետրվարին՝ Բաքվում, որտեղ բնակչության մեծամասնությունը թաթարներ էին, շարունակվեցին Երևանի նահանգի Նախիջևան և Շարուր-Դարալագյազ գավառներում, որտեղ հայերը կազմում էին բնակչության մեկ քառորդը, հարձակումները դադարում էին այն տեղերում, որտեղ հայերին հաջողվում էր կազմակերպված և զինված դիմադրություն ցուցաբերել, իսկ այն գավառներում, որտեղ հայերը մեծամասնություն էին կազմում՝ ընդհարումներ և անկարգություններ ընդհանրապես տեղի չունեցան»: Եվանգուլովը նշում է, որ «զանգվածային կոտորածներն ու հրկիզումներն ունեին որոշակի նպատակ՝ հայերի մի մասին տեղահանելու, իսկ մյուս մասին՝ տնտեսապես թուլացնելու»:

Ընդհարումների ծավալմանը զուգընթաց՝ թաթարների շրջանում ուշագրավ խնդրումներ էին նկատվում հասունանում էր Այսրկովկասում տարածքային միասնության և Ռուսաստանից անջատողականության ձգտումները: Այս ծրագրերի իրականացմանը խոչընդոտում էին արևելահայերը: Միաժամանակ թաթարների շրջանում ակնհայտ էին էթնիկ ինքնության ձևավորման, ազգային ինքնագիտակցության զարգացման միտումներն ու Հայրենիքի փնտրտուքի գործընթացները:

Սանկտ-Պետերբուրգի ինքնավարականների համագումարում՝ 1905թ. աշնանը, թաթարների ներկայացուցչի զեկուցումը վկայում է սոցիալ-ֆեդերալիստների՝ «Հեյրաթ» կուսակցության ձևավորման մասին, որին անդամակցում են բոլոր ազգայնականները: Չեկուցման մեջ կարդում ենք. «Սոցիալ-ֆեդերալիստների «Հեյրաթ» կուսակցությունը իր ծրագրում առաջադրում է Ադրբեջանի տարածքային ինքնավարության խնդիրը, որը ներառում է ամբողջ Բաքվի նահանգը, Ելիզավետպոլի նահանգի 2/3-ը, Երևանի նահանգի կեսը և Թիֆլիսի նահանգի մի մասը, որը սահմանակից է Ելիզավետպոլի նահանգին, Ջաբաթալայի շրջանի մի մասը: Ադրբեջանի թուրքերի բոլոր ներքին հարցերը պետք է լուծվեն Ելիզավետպոլի նահանգում հրավիրվող Սեյմի կող-

մից»: Փարիսեցիորեն նշվում էր, որ Ադրբեջանում ապրող բոլոր ազգերը կօգտվեն հավասար իրավունքներից: Ուշագրավ է զեկուցման մեջ նշված Ինքնավար Ադրբեջանի տարածքի ընդգրկումությունը: Թաթարները չէին սահմանափակվում Բաքվի նահանգով: Նրանք փորձում էին ընդգրկել Թիֆլիսի նահանգը, որը վրացիներն ամբողջությամբ իրենց պատմական հայրենիքն էին համարում, նաև Գանձակի և Երևանի նահանգները, որը հայերի պատմական հայրենիքն էր: Այս ինքնավարության ծրագիրը միանգամայն համահունչ է Այսրկովկասում թուրքիայի վարած պանիսլամիստական քաղաքականության հետ: Նպատակն էր՝ թուրքացնել ամբողջ Այսրկովկասն ու այն անջատել Ռուսաստանից:

Հայ-թաթարական ընդհարումներն այդ ծրագրի դրսևորումն էին գործնականում: «Մենք սկզբում ուշադրությունը շեղելու համար զենքն ուղղեցինք հայերի դեմ, որոնց վարչակազմը չի սիրում», - ասվում էր պանիսլամիստական գործակալի ելույթում, մայրաքաղաքային թերթում հրատարակած՝ Կոստանդնուպոլսից ստացված հաղորդագրության մեջ:

Դեռևս 1906թ. Բեհաեդդին Շաքիրը, որը հետագայում կենտրոնական դեր պետք է խաղար հայերի ոչնչացման գործում, Կովկասի պանիսլամական առաջնորդներին դիմում էր հետևյալ կոչով. «...Մեր թշնամին հանդիսացող և ձեզ՝ ռուսների լծից ազատելու դեմ ամենամեծ արգելքներից մեկը հայերն են: Մշակեցեք մի կանոնավոր ծրագիր նրանց ջլատելու համար»:

Այդ ծրագրի իրականացմանը մեծապես խանգարեց հայ-թաթարական ընդհարումների ընթացքում՝ 1906թ. փետրվարին, Կովկասի փոխարքայի միջնորդությամբ կնքված հաշտությունը: Արխիվային փաստաթուղթը վկայակոչում է մայրաքաղաքի թերթերից մեկում ներկայացված պանիսլամական գործակալի Կ.Պոլսից հղած մի հաղորդագրություն, որտեղ ասվում է. «Այդ հաշտությունը մեզ բավականաչափ խանգարեց, ...այլապես մենք կզավթեինք ամբողջ Ադրկովկասը»:


Այսպես՝ հայ-թաթարական ընդհարումներն առիթ էին թաթարների կողմից էթնիկ գտման և տարածքային կենտրոնացման քաղաքականության իրականացման համար:

ԹԱՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու



ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ Սահմանադրության բարեփոխման նախագծի շուրջ քննարկումներն իրենց գագաթնակետին հասան հուլիս ամսին: Ձուգադիպությանը, հենց այս ամսի 5-ին նշվեց ՀՀ Սահմանադրության 10-րդ տարելիցը:

Հուլիսի 22-ին Եվրոխորհրդի իրավական փորձագետների աշխատանքային խումբը հավանություն տվեց Հայաստանի իշխանությունների կողմից ներկայացված փոփոխությունների նախագծին. «Սահմանադրական փոփոխությունների վերանայված նախագիծն իրենից ներկայացնում է անառարկելի բարեփոխում՝ Վենետիկի հանձնաժողովի կողմից մեկնաբանված նախորդ նախագծերի համեմատ»: Սա էս առաջարկությունների ամբողջական ընդգրկումով տարբերակն էր, որն ուղարկվել էր Ստրասբուրգ հուլիսի 7-ին և ներառում էր մի շարք կարևոր փոփոխություններ: Հիմնական փոփոխությունները, որոնց շուրջ կենտրոնացել էին հայաստանյան քաղաքական ուժերն ու եվրոպացիները վերաբերում էին խորհրդարանի դերը կառավարության ձևավորման գործում բարձրացնելուն, նախագահի լիազորությունները դատավորների մշակման հարցում սահմանափակելուն և Երևանի քաղաքապետի պաշտոնը ընտրովի դարձնելուն:

Օգոստոսի 29-ին Աժ-ի արտահերթ նստաշրջանի ընթացքում, տեղի է ունենալու սահմանադրական փոփոխությունների երկրորդ ընթերցման քննարկումը: Հայաստանի խորհրդարանի կողմից հաստատվելու դեպքում սահմանադրական փոփոխությունների նախագիծը նոյեմբերին կրվի համազգային հանրաքվեի:

Սահմանադրական քննարկումների ներկայիս աշխույժ քննարկումը կտրուկ տարբերվում է 2003թ. իրավիճակից, երբ քաղաքական ուժերը, զբաղված լինելով, խորհրդարանական ընտրություններով, երկրորդ պլան մղեցին երկրի հիմնական օրենքի ճակատագիրը: 2003թ. սահմանադրական բարեփոխումների նկատմամբ անուշադրությունը ցայտուն կերպով ներկայացրեց մաև այն իրողությունը, որ մեր երկրում այն այդպես էլ չի դարձել հասարակական կյանքի հենասյուններից մեկը:

Ներկա քննարկումների աշխուժությունը բնավ չի վկայում այն մասին, որ Սահմանադրության դերը գնահատվել է: Ուղղակի այսօր հենց նա է ընտրված, իբրև գործիք, քաղաքական դաշտում սեփական հայացքները, հակասություններն ու հավակնություններն ընդգծելու համար: Կարելի է ասել, որ Սահմանադրության նախագիծը ոչ թե իրավական, այլ քաղաքական փաստաթուղթ է, որի քննարկումները ոչ թե իրավական որակ ունեն, այլ գաղափարական և քաղաքական: Գաղափարական դաշտում այն դառնում է եվրոպական կամ արևմտյան արժեհամակարգի կողմնակիցների և սեփական ինքնության ընդգծման ջատագովների անզիջում պայքարի թատերաբեմ: Վերջիններս կտրուկ դեմ են այս նախագծին՝ ելնելով հիմնականում ոչ թե բովանդակային, այլ իրավիճակային խնդիրներից: Այն, որ այս տարբերակը իր վրա է կրում եվրոպական կառույցների ազդեցությունը, իսկ հաճախ մաև ուղղակի ճնշումը, անընդունելի է համարվում, քանի որ դրանում տեսանելի են պետության արժանապատվության նսեմացման հիմքեր: Մյուս կողմը փորձում է բացատրել այդ բարեփոխումների անհրաժեշտությունը

եվրոպական ինտեգրացիայի հրամայականով և դեպի եվրոպա շարժվելու մեր պետության որդեգրած ռազմավարության տրամաբանությամբ:

Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն օգտագործվելու է մաև քաղաքական ընդդիմության և իշխանությունների կողմից սեփական նպատակներին հասնելու համար: Իշխանություններն ակնկալում են, Սահմանադրության միջոցով որոշակիորեն կրճատելով սեփական լիազորությունները, բացառել հանրաքվեն՝ հեղափոխության շարժառիթ դարձնելու հնարավորությունը (տե՛ս, «Հեղափոխական տե՛նդ», «Ուխտ Արարատի», թիվ - 2, 2005թ.): Ջարմանալի կլինի, եթե ընդդիմությունը, հանդես գալով էս կողմից հավանության արժանացած, բացահայտ ժողովրդավարական սահմանադրության դեմ և օգտագործելով այն իբրև պատրվակ, փորձի իրականացնել ժողովրդավարական հեղափոխություն:

Իշխանությունները հնարավորություն են ստանում մաև վերականգնել վիճահարույց ընտրությունների պատճառով խարխլված իրենց լեգիտիմությունը՝ ստանալով սեփական Սահմանադրական տարբերակի համաժողովրդական հավանությունը: Նրանց համար այդքան էլ էական չէ Սահմանադրության բովանդակությունը: Կարևորը, այն հնարավորություն կտա հանգիստ պաշտոնավարել մինչև սեփական ժամկետի ավարտը, իսկ նախագահ Ռ. Քոչարյանին՝ հայտարարել, որ կատարված է դեռ 1998թ. իր ընտրական խոստումներից ևս մեկը:

Բացի այդ, եվրոպական փորձագետների առաջարկությունները գրեթե համընկնում են մեր խորհրդարանական ընդդիմության պահանջներին: Այս պարագայում էլ իշխանությունները խլեցին նախաձեռնությունն ընդդիմությունից և, ավելին, գնալով զիջումների, կարողացան հասնել ընդդիմության պատակտմանը: Դա ակնհայտ է դարձել սահմանադրական փոփոխությունների շուրջ խորհրդարանական քննարկումներին մասնակցելու կամ չմասնակցելու տարաձայնություններից: Ընդդիմության մի մասը կարծում է, որ Սահմանադրության այս տարբերակն իրական հնարավորություն է երկրի զարգացումը տանելու ժողովրդավարական ուղիով և թուլացնելու գործող իշխանությունների դիրքերը: Մյուս ճամբարը ավելի արմատականորեն է տրամադրված: Այսպես, հեղափոխության ճանապարհով երկրում փոփոխությունների իրականացման առաջամարտիկը և քարոզողը՝ «Հանրապետություն» կուսակցությունը, արդեն իսկ հայտարարել է նախագահ Ռ. Քոչարյանի և կառավարող կալիցիայի առաջադրած փոփոխությունների մերժման մասին: Այս պարագայում ընդդիմադիր դաշտում «Արդարություն» դաշինքի ներսում, ընթացող խմորումները այս ամսվա քաղաքական դաշտի ուշադրության կենտրոնում են:

Արդյո՞ք, Սահմանադրական բարեփոխումների քաղաքականացման երևույթը միայն Հայաստանին է բնորոշ: Բոլորովին: Շատ երկրներում այս գործընթացը նման ճակատագիր ունի: Վերջին օրինակը Եվրոպական սահմանադրության մերժումն է Ֆրանսիայի և Հոլանդիայի կողմից: Կարևորն այն չէ, թե ինչպիսի քննարկումների կամ շարժառիթների հետևանքով է ընդունվում Սահմանադրությունը, այլ այն, թե որքանով է այն գործնականում ազդում երկրի զարգացման վրա: Իսկ դա արդեն բոլորովին այլ թեմա է և այսօրվա քաղաքական կամ հասարակական քննարկումների հետ ոչ մի կապ չունի:

ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու



ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՈՐՊԵՍ ՄՏԱՅՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

(ՀԱՏԿԱԾ «ԳԻՐՔ ՀԱՅՈՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԱՆՏԻՊ ԳՐՔԻՑ)

Ազգայնական լինելու մեջ ոչ մի վատ բան չկա, հոռին ազգայնամոլն է, որն ազգայնականի հիմար ու թերուս տարատեսակն է: Մտավորականը նա է, ով ունի հասարակական անհանգստություններ, մտահոգություններ, գաղափարներ, որոնք գիտության կամ արվեստի միջոցով ներկայացնում է այլ մարդկանց: (Սրանցից ավելի պարզունակ ձևակերպումներ տալ հնարավոր չէ, բայց ի՛նչ արած՝ հիմա Հայաստանում բուռն ծաղկում է ապրում պրիմիտիվիզմը): Ազգայնական մտավորականի համբավի արժանանալու համար ինքնամոռաց տրքմանք է պետք: Ես էլ եմ հավակնում այդ պատվաբեր, պատասխանատու կոչմանը, սակայն վաստակե՞լ եմ, արդյոք, հայցվորի իրավունք:

Ամեն մի ժողովուրդ ունի պետականության չորս կազմավորիչ բաղադրյալ՝ ռազմական, տնտեսական, հոգևոր-մշակութային և քաղաքական կամ ընթացիկ- իշխանավարական: Այս գործոնների միասնությունից էլ հենց բխում է տվյալ ժողովրդի քաղաքակրթական մակարդակը. որքան ներդաշնակ, փոխկապակցված, փոխադարձաբար լրացնելով են զարգանում այս բաղադրյալները, երկիրն այնքան քաղաքակիրթ է, և յուրաքանչյուր պետության ամենահիմնական ռազմավարությունը այդ գործոնների համաչափ զարգացումը պետք է լինի: Կիրառեք այս սկզբունքը ցանկացած երկրի նկատմամբ և արձանագրելով այս կամ այն գործոնի առաջ կամ ետ ընկնելը՝ կստանաք տվյալ երկրի ճշգրիտ բնութագիրը:

Ամեն մի ժողովուրդ ունի պետականության չորս կազմավորիչ բաղադրյալ՝ ռազմական, տնտեսական, հոգևոր-մշակութային և քաղաքական կամ ընթացիկ- իշխանավարական: Այս գործոնների միասնությունից էլ հենց բխում է տվյալ ժողովրդի քաղաքակրթական մակարդակը. որքան ներդաշնակ, փոխկապակցված, փոխադարձաբար լրացնելով են զարգանում այս բաղադրյալները, երկիրն այնքան քաղաքակիրթ է:

Մեր խնդիրն, անշուշտ, Հայաստանի Հանրապետության նկատմամբ այն կիրառելն է: Մենք շատ լավ գիտենք պատմական ճակատամարտերի, ազգային-ազատագրական զինված պայքարի մանրամասները, էլ ավելի լավ գիտենք մեր հոգևոր-մշակութային ժառանգությունը, իսկ Հանրապետության մեծ մասն այսօր ներքաշված է քաղաքականության մեջ, ոմանք՝ ցանկանալով, ձգտելով իշխանության, մեծաթիվ զանգվածը՝ չցանկանալով, բայց ձգտելով մարդավարի ապրել: Այսինքն, մենք լավատեղյակ ենք պետության կազմավորիչ չորս գործոններից երեքին, սակայն լիովին անծանոթ ենք մեր կապիտալի մշակույթի պատմությանը, տնտեսական բաղադրյալին, որը խաղաղության պայմաններում ունի գերակա դիրք:

Ահա այս բացը լրացնելու մտահոգությամբ տողերիս հեղինակը վեց տարի անվարձահատույց աշխատեց Մատենադարանում, Ազգային գրադարանում, արխիվներում ու թանգարաններում, ուսումնասիրեց 24 դարի պատմություն, ժողովեց 2.500 էջ եզակի փաստական նյութ՝ աշխարհի ավելի քան 80 երկրներում հայերիս առևտրատնտեսական գործունեության վերաբերյալ: Եվ հանգեց այն եզրակացության, որ դա մեր ժողովրդի բացառիկության, հերոսականության, հայի տեսակի բնեղուն, ազգական պատմությունն է: Եթե ասեն, որ դա տառապագին աշխատանք էր, զուգորդված լիակատար անապահովածությանը, զրկանքներով, առողջական վիճակի վատթարացմամբ՝ կստացվի նվնդոց: Ո՛ւմ է դա պետք. ոչ ոքի, մանա-

վանդ որ փիղը հաճախ երկնում՝ մուկ է ծնում: Սակայն ես վաստակեցի որոշ բաներ ասելու բարոյական իրավունքը, բաներ, որոնք այսօր գրասեղանիս վրա դարսդարաված են 40 մամուլ անտիպ ձեռագրերի տեսքով:

Տնտեսական բաղադրյալի ոգին կապիտալն է և այն ձեռք բերելու ուղիների որոնումը: Եթե մենք կարողանանք ըմբռնել կապիտալի էությունը, ապա ի վիճակի կլինենք պարզել նաև այն սկզբունքները, որոնցով նա բարդագույն փոխհարաբերությունների մեջ է մտնում մյուս գործոնների հետ:

Capitalis լատիներեն նշանակում է՝ հիմնական ունեցվածք, և մարդու ու կապիտալի հարաբերությունների մասին առաջին ամբողջական, համապարփակ տեսությունը 18-րդ դարում ստեղծեց շոտլանդացի Ադամ Սմիթը: Այդ տեսության մեկ՝ քաղաքական կողմը, կապված մարդու կողմից մարդկանց շահագործման և կապիտալի անարդարացի բաշխման հետ, էլ ավելի քաղաքականացրեցին Մարքսն ու Էնգելսը, իսկ Լենինը հեղափոխականացրեց այն, և աշխարհի կեսին օգեցին կրակը: (Ժամանակակիցներից մեկն ասում էր, թե՛ Մարքսի հաշվապահությունը դեռ շատ փորձանքներ կբերի):

Սակայն ի՞նչ հետաքրքրում էր այլ հարց՝ ինչպես կարող ենք մենք լինել աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը և չունենալ մեր սեփական արահետը:

Որոշ հայ գիտնականներ և հեղինակներ գործածել են «հայ կապիտալ», «հայկական կապիտալ», «ազգի կապիտալ» արտահայտությունները, սակայն դրանք վիճահարույց են, թերասացություն են պարունակում ու երևույթը լիանշանակ չեն ներկայացնում. ուսումնասիրության ընթացքում ես հանգեցի միանգամայն տրամաբանական ու հիմնավոր եզրակացության՝ «հայոց ազգային կապիտալ» բնորոշման: Երբ տնտեսագիտության ֆակուլտետի գիտնական-դասախոսներից մեկը լսեց այս բառակապակցությունը, անմիջապես հակազդեց, թե՛ կապիտալը չի կարող ազգային լինել: Ընդդիմախոսը բիզնեսը շփոթում էր կապիտալի հետ. բիզնեսը կապիտալ ստանալու միջոց է և, այո, չի կարող ազգային հատկանիշ ունենալ, այնինչ կապիտալն արդյունք է, որի գործադրությունը հայերիս պարագայում եղել է խորապես ազգային:

Ո՞րն է մեր կապիտալի ազգայնականությունը: Իհարկե, կարող էի ասել՝ կա «ազգային շահ» հանրագիտարանային հասկացություն, և դրանով խնդիրը փակված համարել: Կարող էի ասել՝ մեր բանակը, եկեղեցին, մշակույթը կոչվում են ազգային, հապա ինչպե՞ս կարող է կապիտալն ազգային չլինել, և դրանով մեր առաջադրած թեզն ապացուցված համարել: Սակայն կասեն ավելին՝ կապիտալը մեր ազգակազմիչ բաղադրյալներից ամենահարատևն է, այն մեր ժողովրդի էության արտացոլումը և մեր պատմական ճակատագրի կրողն է:

Առհասարակ, հայ ժողովրդի **ներկայանալն** աշխարհին կատարվել է ռազմական ճանապարհով, աշխարհանված պատերազմներով ու ճակատամարտերով: Ռազմերթերի ժամանակ Արմենիայի զորախմբերին ու-



ղեկցում էր երկու դաս՝ պոռնիկները և վաճառականները: Վերջիններս զբաղվում էին պարզ առևտրով և գործին պարեն մատակարարելով: Երբ Արմենիան պարտությունների կրեց Յոթնից, պարթևներից, պարսիկներից և այլքից ու ստիպված եղավ ամփոփվել իր սահմանների մեջ, վաճառականների մեջ մնաց աշխարհագրական նոր տարածքների հուշը: Նրանք շարունակեցին իրենց խաղաղ զբաղմունքը և ապրանքափոխանակության, երթևեկի հետ միաժամանակ հայոց և այլ ժողովուրդների միջև փոխանակել տեղեկատվություն, պատկերացումներ, պատմամշակութային արժեքներ, կենցաղավարություն, լեզուներ, բարքեր ու սովորույթներ: Այսինքն, հայ վաճառականությունը միջնորդ դարձավ աշխարհի ու սեփական ժողովրդի միջև, և **դա քաղաքակրթական մեծագույն առաքելություն էր:**

Միջնադարյան Հայաստանում քաղաքները ծնվում էին առևտրական նպատակահարմարության հետևանքով և այլ ցեղերի համար համեղ պատառ դառնալով կործանվում իրենց իսկ հարստության պատճառով:

Հայաստանի քաղաքական անկումը, մասնատումը, պետականության կորուստը, բնականաբար, իր ազդեցությունն ունեցավ նաև կապիտալի վրա: Բայց կատարվեց զարմանալի մի հրաշք՝ 1605թ. Նոր Ջուղայի հիմնադրմամբ ստեղծվեց հայոց կապիտալի **առաջին** ազգային դպրոցը: Այդ քաղաքի պատմությունն այնքան եզակի է, որ աշխարհում նախադեպ, կրկնօրինակ չունի: Համաշխարհային առևտրի պատմության մեջ Նոր Ջուղան միակ բնակավայրն է, որտեղ, զուգորդելով տեսությունն ու գործնականությունը, գիտակրթական հիմունքներով պատրաստում էին պրոֆեսիոնալ վաճառականներ: Նորջուղայեցիները «նվաճեցին» գրեթե ամբողջ աշխարհը:

Հայոց կապիտալի **երկրորդ** բնօրրանը արևմտահայության Կ. Պոլսո դպրոցն էր, որի մի ճյուղն անցավ Եգիպտոս ու վիթխարի ներդրում ունեցավ այդ երկրի կայացման գործում:

Երրորդ դպրոցը համեմատաբար ուշ ասպարեզ իջած, այսպես ասած, ռուսահայոց կապիտալն էր, որն ստեղծեց Նոր Նախիջևան, Արմավիր, Գրիգորիոպոլիս, Թիֆլիս ու Բաքու:

Ուշագրավ է մի հանգամանք. կապիտալի այս երեք օջախների միջև երբեք չի եղել տարանջատվածություն, դրանց կողմերը չեն ունեցել տեղային պատկանելություն, հայրենակցական «հայրենասիրություն», ներագային գերադասության հոգեբանություն: Ընդհակառակն, առաջնորդվելով նույն ազգին պատկանելու բնական զգացողությամբ՝ նրանք բիզնեսում գործում էին միասնաբար, համերաշխորեն, մեկմեկու աջակցելով, իսկ ջարդերից ու կոտորածներից, ցեղասպանությունից հետո ձեռք-ձեռքի տված ստանձնեցին հայապահպանության գործառույթ: Կապիտալի այս եռամիասնությունն է, որ անվանում ենք **հայոց դասական ազգային կապիտալ:**

1918-ին Առաջին Հանրապետության ստեղծմամբ ասպարեզ իջավ, առաջնային դարձավ քաղաքական գործունը, և ձևակերպվեցին Հայաստան- Սփյուռք, արևելահայարևմտահայ հասկացությունները, այսինքն՝ պաշտոնապես արձանագրվեց ներագային տարանջատվածությունը:

1920-ին Առաջին Հանրապետությունում հաստատվեց բոլշևիկյան իշխանություն, որն Ավետարանի փոխարեն

ձեռքն առավ մարքս-լենինյան ուսմունքը, ջախջախեց մասնավոր սեփականությունը, և դասական ազգային կապիտալը հայտնվեց օտարության մեջ, մնաց Սփյուռքում:

Սոցիալիզմը (ոչ սոցիալիստականությունը) առհասարակ հակաբնական երևույթ էր, իսկ հազարամյա մեր ժողովրդի էության, նրա սեփականության համար՝ առավել ևս: ԽՍՀՄ-ն ինքը, ըստ էության, սեփականության մի տարատեսակ էր, դա ապակեպատ ջերմոցային մի տնտեսություն էր, որի սեփականատերը ՍՄԿ Զարդյուրուն էր: Աշխարհի հնադարյան ժողովուրդներից մեկի մի հատվածը հայտնվեց այդ ջերմոցում, որտեղ սահմանված էր, թե ինչ պիտի ցանվի և ինչ հնձվի: Ցեղասպանությունից փրկված այդ հատվածը հավատաց, որ կստանա կյանքի ապահովություն ու մի կտոր հաց և իսկապես ստացավ: Ունենալով այդ երկու անհրաժեշտությունները, խորհրդահայությունը զբաղվեց ստեղծարարությամբ և փայլուն հաջողությունների հասավ գիտության, արվեստի, մշակույթի ասպարեզներում:

Պատմական մի չնչին ժամանակահատված՝ ընդամենը 70 տարի պահանջվեց, որ խորհրդային ջերմոցը ջարդուփշուր լինի, և ապակու կտորտանքների միջից ծնվեց Հայաստանի Երրորդ Հանրապետությունը: Դա ազատության ու ինքնաստրկացման, հերոսության ու դավաճանության, զուլալ իղձերի ու պղծումների, վեհ առաքինությունների և ամենաստոր բնազդների երկունք էր, որից ծնվեց նաև ազգային կապիտալի **չորրորդ**՝ հայաստանյան օջախը: Դրա ինքնատիպությունն այն էր, որ առաջացավ ոչ թե արտադրության ու վերարտադրության, քաղաքակիրթ բիզնեսի կանոնների համաձայն, այլ հանրային վիթխարի սեփականության տարրական գողության մեջ: Բոլորն սկսեցին մեկնարկային 250-ական դրամ հիմնական դրամազվիսով, բայց մեկ օր անց բնակչության 90 տոկոսը հայտնվեց թշվառության մեջ:

Մարդկային միջակությունների հիշական խմբիշխանությունը, որպեսզի կարողանա կոկիկ, սիրունիկ երկիրն անպատիժ լափել, ստորացրեց-լեցրեց հասարակական հեղինակություններին, ոչնչացրեց գիտությունը (և առաջին հերթին՝ հայագիտությունը), երկրից վճռեց կոմունիստական վարչակարգի օրոք բարձակարգ կրթություն ստացած, կարող, փորձառու մարդկանց, հազարավոր ազգակիցների ստիպեց արտագաղթել, սահմանադրորեն փակեց Սփյուռքի ճանապարհը, իրեն հռչակեց համայն հայության միակ լիազոր և սկսեց անսպառ բաքոսախնջույքը: Այդպես միջակությունները հիմք դրեցին բնակչության բարոյական անկմանը, արթնացրեցին կյանքի վաղանցիկության ու տարրական անապահովության վաղուց մոռացված զգացողությունը և ստեղծեցին պլուտոկրատական փողի իշխանության համակարգ:

ՀՀ-ից հետո ինչ-որ բան փոխվեց՝ փորձենք խորամուխ լինել: Փորձենք պարզել պետականակազմիչ չորս բաղադրյալների փոխհարաբերության արդի պատկերը:

Գողության ու թալանի ծնունդ ներկայիս հայաստանյան կապիտալը ճիշտ և ճիշտ իր տարիքին համապատասխան 14-ամյա պատանի է: Դա սեռական հասունացման շրջան ապրող, անցյալ և ավանդույթ չճանաչող, փորձառություն, հետևաբար և՛ վախ չունեցող էրես առած մի քրեավտանգ անչափահաս է, որն արտասահմանյան ավտոմեքենայի դռները բացած՝ «ռաբիս» է քրքել, ինքն էլ

1605թ. Նոր Ջուղայի հիմնադրմամբ ստեղծվեց հայոց կապիտալի առաջին ազգային դպրոցը: Այդ քաղաքի պատմությունն այնքան եզակի է, որ աշխարհում նախադեպ, կրկնօրինակ չունի: Համաշխարհային առևտրի պատմության մեջ Նոր Ջուղան միակ բնակավայրն է, որտեղ, զուգորդելով տեսությունն ու գործնականությունը, գիտակրթական հիմունքներով պատրաստում էին պրոֆեսիոնալ վաճառականներ: Նորջուղայեցիները «նվաճեցին» գրեթե ամբողջ աշխարհը:



մայթին պագած «բքուն» է և պապայի ձեռքը գլխին լիակատար անպատժելի տերուտիրակալի վիճակում է:

Այս համեմատությունն ունի միանգամայն գիտական բացատրություն, որը կոչվում է **կոմպարադորական բուրժուազիա**: Այդ հասկացության հանրագիտարանային բնութագիրը հետևյալն է. «**Կոմպարադորական բուրժուազիա** (իսպաներեն comprador՝ գնորդ բառից), տնտեսապես հետամնաց երկրների (ինչպես գաղութային, այնպես էլ անկախ) բուրժուազիայի մի մասը, որն իրականացնում է միջնորդական գործունեություն արտասահմանյան կապիտալի և ազգային շուկայի միջև: Սերտորեն կապված է գաղութարարների և արտասահմանյան մենատիրությունների հետ ու պաշտպանում է նրանց՝ ի վնաս ազգային շահերի: Ձևավորվել է իմպերիալիզմի գաղութային համակարգի ստեղծման ժամանակ»:

Այս բնորոշման ամեն բառը մաթեմատիկական ճշգրտությամբ կիրառելի է թե մեր պետության, թե կապիտալի հանդեպ: Որևէ մեկը կասկած ունի՞, որ այսօրվա Հայաստանը տնտեսապես հետամնաց գաղութային-անկախ երկիր է, իսկ կապիտալիստական բուրժուազիայի վերնախավը կոմպարադորական է: Սակայն գոյություն ունի միանգամայն «հայկական» առանձնահատկություն. **դա իշխանության և կապիտալի սերտաձուլումն է**, միախառնումը երկու բաղադրյալների, որոնք, որքան էլ նշանակությամբ ու բնույթով տարբեր են, սակայն սեփական շահերից ելնելով՝ մեկմեկու ընդառաջ են գնացել և ներհյուսվել: Այստեղ է Հայաստանի դժբախտությունը:

Իսկ ո՞րն է դրա հետևանքը: Կապիտալը դադարել է ինքնուրույն գործոն լինելուց և վերածվել է իշխանության հարձի: Այս երկուսով փայ են հանում կիսապատերազմող ռազմական գործոնին, որովհետև պարզապես չեն կարող փայ չհանել: Սակայն դրա փոխարեն օրավուր տրորում, կոխկրտում, աղբանոց են նետում հոգևոր-մշակութային գործոնը, որը նախատեսված է իրենց ազնվացնելու, բարոյականացնելու համար: Բայց դա իրենց պետք չէ: XVII դարի հայ վաճառական եփրեն Սատին, ըստ իս, առհասարակ աշխարհի առաջին կոսմոպոլիտը, լինելով աներևակայելի հարուստ, չէր ընդունում ոչ ազգ, ոչ հայրենիք, ժողովել էր տարբեր ազգությունների ներկայացուցիչների և իր առազաստանավով շրջում էր աշխարհե-աշխարհ: Մեր իշխանության և կապիտալի ներկայացուցիչներն այդպիսի սատիներ են. նրանք հարստությունը բարձել են, ափից կտրվել և առազաստները պարզած ցանկանում են ծովածոցից բաց օվկիանոս դուրս գալ: Բայց ի՞նչ են թողնում ափին:

Մի երկիր, որտեղ ինչպես XI դ. կասեր Լաստիվերցին, արծաթափրությունը դարձել է Աստվածափրություն: Գովազդը դարձել է Տերունական աղոթք: Բիզնես-գրասենյակների են վերածվել պետական հիմնարկները, կուսակցությունները, գիտական, կրթական և առողջապահական հաստատությունները, հասարակական կազմակերպությունները: Ձանգվածային լրատվամիջոցներն ստեղծվում են իշխանության ու կապիտալի կողմից և դառնում են նրանց իսկ սպասարկուն: Ում պաշտոնը որքան բարձր է, այնքան խոշոր է կապիտալը, բայց զավեշտն այն է, որ ով որքան խոշոր կապիտալ ունի, այնքան իրեն խելացի է համարում:

Քանի դեռ աշխարհում գոյություն կունենա ազգային շահ, ամերիկացու, ռուսի, թուրքի շահ, մենք պետք է գիտակցենք, որ մեր տառապյալ ժողովուրդը չի ունենա մշտական բարեկամներ, բայց մշտական թշնամիները միշտ կլինեն: Երբ կդադարենք հիմա էլ Եվրոպական կայսրության ծայրագավառը լինելուց, երբ կդադարենք զավառամիտ ու ստրկահողի լինելուց, կկառուցենք ազգային զորեղ պետություն՝ այնժամ կկարողանանք պաշտպանել մեր ազգային շահը:

Այս համատարած այլասերությունից, դեգրադացիայից փրկվելու միջոցներ, անշուշտ, կան: Նախ, հարկ է իշխանությունն ու կապիտալը միմյանցից տարանջատել, օրենսդրորեն արգելել պետական պաշտոնյաներին և նրանց ընտանիքի անդամներին բիզնեսով զբաղվել, իսկ կապիտալիստներին ու նրանց մերձավորներին՝ պետական նշանակության մարմիններում աշխատել:

Երկրորդ, հարկ է կրթել-դաստիարակել կապիտալը, մայթին պագած լակոտին մարդ դարձնել: Որովհետև կապիտալը նույնպես ազգային արժեք է, որից պետք է պահանջել, սակայն պետք է և այն փայփայել:

Ահա երկու բան, որոնք անելն անչափ դժվար է: Նախ, պլուտոկրատիան, բնականաբար, դեմ է որևէ փոփոխության և ոչ մի գնով զիջումների չի գնա: Որևէ փոփոխություն չի ուզում նաև կապիտալը, որովհետև արդեն ընտելացել է իր անբնական վիճակին: Տիրում է կայունություն, բայց, ինչպես հայտնի է, բնության մեջ ամենակայուն տեղերից մեկը ճահիճն է:

Եթե ես գրել եմ 40 մամուլ՝ ազգային կապիտալի վերաբերյալ և հայաստանյան նորելուկին քարոզում եմ ընթանալ նախնայաց ուղիով, լինել ազգասեր, եկեղեցապաշտ, քսակը միշտ բաց պահել ազգի կարիքների համար, պատվերով բարեգործություն չանել, ստանձնել բնականոն առաքելություն, բայց այդ ամենը պետության ու կապիտալի կողմից մնում է անտիպ՝ կնշանակի պլուտոկրատիային խանգարում են: Սակայն պլուտոկրատիային խանգարում են ոչ միայն ես, այլև ցանկացած ոք, ով այս կամ այն ոլորտում դավանում և ապավինում է ազգայինին: Այդպես էլ պիտի լինեն. ինքն ազգ ու հայրենիք չունի, իսկ մենք՝ ունենա: Ինքը պարտավոր չէ պետության մասին մտածել, մենք ենք պարտավոր: Մենք էլ, ուրեմն, կմտածենք:

Ազգի ապագան հայության ներսում պարփակված ընդհանուր ներուժն է, որին անկարող է դիմակայել ոչ ոք և ոչինչ: Հարկ չկա հեծանիվ հորինել, մենք պետք է ձգտենք դառնալ երկրորդ Իսրայել: Քանի դեռ աշխարհում գոյություն կունենա ազգային շահ, ամերիկացու, ռուսի, թուրքի շահ, մենք պետք է գիտակցենք, որ մեր տառապյալ ժողովուրդը չի ունենա մշտական բարեկամներ, բայց մշտական թշնամիները միշտ կլինեն: Երբ կդադարենք հիմա էլ Եվրոպական կայսրության ծայրագավառը լինելուց, երբ կդադարենք զավառամիտ ու ստրկահողի լինելուց, կկառուցենք ազգային զորեղ պետություն՝ այնժամ կկարողանանք պաշտպանել մեր ազգային շահը:

Այո, հայ ժողովուրդը բացառիկ է, եզակի է իր պատմությամբ, նկարագրով, ճակատագրով, համաշխարհային քաղաքակրթության մեջ իր ներդրումով: Սակայն լինել բացառիկ՝ չի նշանակում լինել գերակա: Յուրաքանչյուր ժողովուրդ էլ իր տեսակի մեջ եզակի է և անկրկնելի: Պարզապես ամբողջ խնդիրն այն է, թե ով որքանով է կարողանում գիտակցել և իրացնել իր բացառիկությունը:

Կկարողանա՞նք մենք դա անել, ձերբազատվել համազգային իդիոտիզմից, պատեհապաշտությունից, ընչաքաղցությունից, երկիրն արևելյան բազարի վերածած ծախու պաշտոնյայից ու տխմար փողվորից: Ահա հարցերի հարցը...

ԽԱՆԱՏՈՒՐ ԴԱՂԱՅԱՆ



ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊԻ ԳՈՐԾ ՆԵՐԿԱՆ ՈՒ ՄՇՈՒՇՈՏ ԱՊԱԳԱՆ

Հուլիսը Հայաստանի քաղաքացիների կյանքում սոցիալ-տնտեսական առունձվ կարևորվեց բջջային կապի 2-րդ օպերատորի մուտքով: «Վիվասելի» մուտքը շուկա, կարելի է ասել, ընդունվեց մեծ ոգևորությամբ, ինչը բնական էր, եթե նկատի ունենանք, թե «Արմենթելը» ինչ վիճակի հասցրեց մեր կապի համակարգը: Մյուս կողմից էլ զավեշտալի է, երբ 21-րդ դարում մենք ցնծում ենք այնպիսի առօրեական իրի համար, ինչպիսին բջջային քարտն է: Այդ զավեշտն ավելի ընդգծվեց, երբ հուլիսի 1-ից՝ «Վիվասելի» շուկա մտնելու հենց առաջին օրվանից, կտրուկ վատթարացավ «Արմենթելի» բջջային կապի որակը: Այս զուգադիպությունը ոչ միայն տարօրինակ էր, այլև կասկածելի: Ի՞նչ պատահեց «Արմենթելի» բջջային ցանցին: Այս հարցը սպառիչ պատասխան այդպես էլ չստացավ, ինչը լավագույնս վկայում է, որ «Արմենթելի» օտարերկրացի տերերը բաժանորդների առջև իրենց առանձնապես պատասխանատու չեն զգում: Ընկերությունը, որն ի դեպ, բջջային ցանցի 220 հազար բաժանորդ ունի, հայտարարեց, թե իր մատուցած ծառայության որակի վատթարացման պատճառը չգիտի: «Արմենթելի» ղեկավարները հայտարարեցին նաև, որ իրենք արտերկրից մասնագետներ են հրավիրել, պարզելու համար, թե ինչ է կատարվում իրենց համակարգում: Իրեն հարգող ցանկացած հեղինակավոր ընկերություն՝ առնվազն կամաչեր իր բազմաազգար սպառողներին այդպիսի բացատրություններ տալուց: Թե ինչ պարզեցին դրսից հրավիրած մասնագետները, «Արմենթելի» պատասխանատուները այդպես էլ հարկ չհամարեցին տեղեկացնել: Եթե անսանք կապի և տրանսպորտի նախարար Ա. Մանուկյանի՝ այս առնչությամբ արված պարզաբանումներին, առաջին օպերատորի բջջայի կապի որակի վատթարացման պատճառը զուտ տեխնիկական է եղել և «Վիվասելի» շուկա մտնելու հետ որևէ կապ չունի: Այսինքն՝ անբարեխիղճ ու անօրինական մրցակցության մասին խոսք չկա: Եթե իրոք այդպես է, ուրեմն ստիպված ենք արձանագրել, որ «Արմենթելը», որն ըստ շահույթի մեծության, ՀՀ ձեռնարկությունների առաջատարն է, իրականացնում է տեխնիկական անգրագետ կառավարում:

Պաշտոնական տվյալներով, միայն 2004թ. «Արմենթել» ՀԶ ՓԲԸ հեռախոսային ընկերության մաքուր շահույթը կազմել է 25 միլիարդ 395 մլն դրամ, ինչը համարժեք է մոտ 50 մլն դոլարի: Ըստ AEPLAC-ի փորձագետների՝ «Արմենթելի» ստացած եկամուտների 45%-ը վերածվում է գործառնական շահույթի, իսկ ակտիվների եկամտաբերությունը, ըստ մաքուր շահույթի, մոտ 19% է կազմում:

Դիտարկման արժանի է մեկ այլ հանգամանք ևս: «Արմենթելը» երկրորդ օպերատորի մուտքին ընդառաջ՝ եականորեն նվազեցրեց իր սակագները: Այսպես, կանխավճարային «Իզի» քարտերի բաժանորդներից բոլոր ուղղություններով զանգահարելու համար 1 րոպեի դիմաց գանձվում է 66 դրամ՝ ԱՄՀ ներառյալ 79.2 դրամ: Պայմանագրային քարտերի «Սիմ» համար 1 րոպեն մույն ուղղություններով արժե 36 դրամ՝ ԱՄՀ-ն ներառյալ՝ 43.2 դրամ: Այս սակագներն անվանվել են «ամառային զեղչեր», որոնց սեզոնայնությունը չերկարացվելու դեպքում, դրանք աշնանը կբարձրանան: Ուշագրավ է, որ միանգամից կտրուկ նվազեցնելով իր սակագները, «Արմենթելի» ղեկավարները հայտարարեցին, որ դա իրենց եկամուտների վրա չի ազդի: Այսինքն՝ կապի երբեմնի մեծատերերը

անուղղակիորեն խոստովանեց, որ մինչ այժմ ունեցել են գերշահույթներ: Մեր կառավարությունը փաստորեն կամ չի կարողացել, կամ էլ չի պաշտպանել իր քաղաքացիներին մասնավոր ընկերության հարստահարումից:

Կիրկի արդյո՞ք 2-րդ օպերատորի մուտքն այդ նախադեպից, առայժմ վաղ է ասել: Կապի խայտառակ որակը չի բարելավվում: «Բաժանորդն անհասանելի է, խնդրում ենք փորձել մի փոքր ուշ» արտահայտությունը կարելի է լսել 10 հերթական զանգից առնվազն 9-ի դեպքում: Իբրև որոշակի փոխհատուցում՝ բաժանորդներին 1000 դրամի անվճար խոսելաժամանակ է տրամադրելու և սիմ քարտերի բաժանորդավարձի 50 %-ը՝ 2500 դրամ: Բայց ո՞վ է



հաշվարկել, որ բաժանորդների կրած տնտեսական վնասը հենց 1000 դրամին է համարժեք: Բարոյական վնասի փոխհատուցման մասին խոսք չկա: Մեր օրենսդրությամբ «բարոյական վնաս» հասկացությունը չի սահմանված: Եթե եվրոպական որևէ երկրում սպասարկողը բաժանորդներին մատուցեր այնպիսի կապ, ինչպիսին մեզ մատուցում է «Արմենթելը», ապա առնվազն աստղաբաշխական մեծությամբ տուգանքներ կվճարեր:

Այն հարցին, թե «Ի՞նչ պատահեց «Արմենթելի» բջջային ցանցին», որոշ մասնագետներ պատասխանում են, որ սակագների նվազեցմանը զուգընթաց՝ զանգերն ավելացել են: Բջջային ցանցը տեխնիկապես ի գործու չէ սպասարկել իր բաժանորդներին, վերջ...: Կապի և տրանսպորտի նախարարը մույնիսկ սպառնաց, թե «Արմենթելին» կզրկի նաև մյուս մենաշնորհներից: Փառք ու պատիվ խիզախ նախարարին... Նա կարծես ուզում էր, որ ամեն ինչ լավ լինի, բայց ստացվեց սովորականի պես:

Ինչ վերաբերում է 2-րդ օպերատորին՝ «Դ-Թելեկոմին», ապա նրան առայժմ հաջողվել է շուկայում մրցակցություն առաջացնել: «Վիվասելի» որակը դեռևս երաշխավորված համարել չի կարելի: 30-40 հազար բաժանորդի որակյալ կապ մատակարարելը մի բան է, մեկ այլ բան՝ 300 հազար բաժանորդի սպասարկելը: Մի քանի ամիս անց միայն կուրվագծվի, թե Հայաստանի կապի համակարգը շարժվո՞ւմ է դեպի առաջ, թե՞ հակառակը: Առայժմ նոր օպերատորի սահմանած սակագները արմենթեյան սակագների համեմատ, մրցունակ չեն: Ուստի 2-րդ օպերատորի շուկայում հզորանալու միակ կռվանը որակն է լինելու:

Ամփոփելով մշենք. ժամանակին իշխանությունները ռազմավարական հաղորդուղին՝ կապը, վաճառելով օտարերկրյա ընկերության, կոպիտ սխալ թույլ տվեցին: Դրանում հանդավելու առիթներ բազմիցս են եղել: Այժմ այդ սխալը ուղղելու միակ ճանապարհը՝ ազատ շուկայի կանոնները ճիշտ կիրառելն է:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ



ՀԱՅ ԵՎ ՎՐԱՅ ՎԱՐՉԱՊԵՏՆԵՐԸ ԶԱՎԱԽՔՈՒՄ



Վ ե ռ ջ ե ր ս Վրաստանի վարչապետն իր հայ գործընկերոջը դիմավորեց հայ-վրացական սահմանագլխին: Կարճատև գրուցից հետո Ջուրաբ Նոդայիդեղին և Անդրանիկ Մարգարյանը

ուղևորվեցին Նինոծմինդայի շրջանի Սաթխա գյուղ, որտեղ էլ գյուղացիների հետ կարճատև հանդիպման ընթացքում նշեցին, որ կառավարությունների նպատակն է Սաթխայում, ինչպես նաև տարածաշրջանի մյուս գյուղերում ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի մարդիկ կարողանան բնականոն կյանքով ապրել: Ա. Մարգարյանը և Ջ. Նոդայիդեղին ուղևորվեցին Գանձա, որտեղ ծնվել է հայ նշանավոր բանաստեղծ Վահան Տերյանը:

Գանձայի եկեղեցում ավելի քան 150 տարի հայերենով աղոթք է հնչել, ինչը գյուղացիների ասելով, նրանց հայ մնալու կարևոր երաշխիքներից է: Երկու երկրների վարչապետները մոմ վառեցին Սուրբ Կարապետ եկեղեցում, որը կառուցվել է 1852-ին Վահան Տերյանի պապի՝ Տեր Ղազարի նախաձեռնությամբ:

Գանձան ունի երկու դպրոց, որոնցից մեկը՝ Վ. Տերյանի անունով կոչվողը, վթարային վիճակում է: Վրաստանի նախագահի անմիջական նախաձեռնությամբ կառուցվում է նոր դպրոց, որը կկրի Վ. Տերյանի անունը և այս ուսումնական տարվա առաջին օրը դռները կբացի իր սաների առջև:

Հյուրերն այցելեցին Վ. Տերյանի տուն-թանգարան, ապա մասնակցեցին գրողի ծննդյան 120-ամյակի առիթով կազմակերպված տոնակատարությանը, որի ժամանակ Հայաստանի վարչապետն ասաց. «Երկու կառավարությունների ցանկությունն է ստեղծել պայմաններ, որ ջավախահայությունը կարողանա ապրել իր հողի վրա»:

Ա. Մարգարյանը ցանկություն հայտնեց, որ դարերից եկող ժողովուրդների բարեկամությունը չխաթարվի՝ անկախ որևէ ուժի սադրանքից և ցանկությունից. «Մի մտածեք, որ բոլորը մեր բարեկամներն են, մենք ենք վրացի ժողովրդի հետ մեր ապագան կերտելու, մենք ենք մեր ձեռքերով մեր պետությունները հզորացնելու»:

Ի՞նչ են պահանջում Սամցխե-Ջավախքի հայերը երկու երկրների վարչապետներից.

- դադարեցնել շրջանի հայերի նկատմամբ խտրական քաղաքականությունը,
 - Սամցխե-Ջավախքում և Ծալկայում հայոց լեզվին տալ տարածաշրջանային լեզվի կարգավիճակ,
 - Վրաստանի հայկական դպրոցներում պահպանել հայերենով ուսուցման ավանդույթը, ուսումնական ծրագրի մեջ ներառել հայ ժողովրդի պատմությունը՝ որպես պարտադիր առարկա,
 - դադարեցնել հայկական մշակութային ժառանգության վրացականացման և ոչնչացման պետական քաղաքականությունը,
 - կարճ ժամկետում կառուցել ճանապարհները, որոնք Ջավախքը կկապեն Հայաստանին և Թբիլիսիին:
- Արժանավեցին նաև այլ հարցեր, օրինակ՝ կապված Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթուղու կառուցման

հետ, որը Անդրանիկ Մարգարյանը համարեց Վրաստանի **ներքին խնդիր**:

Յուրաքանչյուր մեծ բանաստեղծի երևան գալը գրեթե նման է հայտնության, որը սկզբում թվում է անակնկալ, անսովոր և զարմանալի, բայց հետո ներկայանում է իբրև՝ խորապես իմաստալի և անհրաժեշտ մի երևույթ:

Վ. Տերյանի կյանքի ու գործի սահմանները շատ կարճ եղան: Նա ապրեց ընդամենը 35 տարի (1885-1920թթ.), իսկ նրա գրական գործունեությունը հազիվ մեկուկես տասնամյակ տևեց: Պատմական վիթխարի նշանակության դեպքերով հագեցած տարիներ էին դրանք: 20-րդ դարի սկզբից ապրելով Մոսկվայում և Պետերբուրգում, Տերյանը մոտիկից ականատես եղավ ռուսական առաջին հեղափոխության շրջանում սկսված հասարակական շարժումին ու նրան հաջորդած դեպքերին, Առաջին համաշխարհային պատերազմին և հայ ժողովրդի մեծ ողբերգությանը, 1917-ին հեղափոխական իրադարձություններին ու քաղաքացիական կռիվներին: Այս ամենը ժամանակագրական առումով համընկավ հենց այդ տարիներին, երբ սկսվեց ու ծավալվեց հայ բանաստեղծի գրական գործունեությունը:


Ավետիք Իսահակյանն իր մեծ հեղինակությամբ հայտարարեց. «Տերյանը մի նոր գույնով, մի նոր ձայնով երգեց և՛ սերը, և՛ հայրենիքը, և՛ բնությունը: Նա թարմացրեց հայ պոեզիայի և՛ նյութը, և՛ լեզուն»:

Վահան Տերյանի ստեղծագործությունը, նրա մարդկային և քաղաքացիական նկարագիրը, միշտ մեզ հետ է և մեր մեջ:

ՆԱՐԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ՎԵՐԱՂԱՐԸ

Ես լուռ կըսպսեմ այն ահեղ ժամին,
 Արթուն կըմնամ,
 Եւ երբ լուսածագ ավետող քամին
 Անտառում որդա,
 Եվ երբ սարերի կատարները սև
 Արծաթը շողա,
 Դուք դեռ մշուշում քնած կըլինեք,
 Սիրտըս կըճչա վսեմ հուզումից,
 Ես Ձեզ մոտ կըգամ-որ զվարթ ճչամ
 - Եղբայրներ, ելեք...



-
- Սիրտըս ցավում է անցած գնացած
 Օրերիս համար.
- Մեկը շշուկով պատմում է կամաց, Մեկը իմ հոգին տանջում է համառ: Այդ հուշերի մեջ կա մի քաղցր ցավ, Մի թովիչ երագ.
 - Մեկը իմ սիրտը փշրելով անցավ Ու հեզությունով մայում է վրաս: Սակայն չեն կարող ես նրան ատել-Սիրում եմ նրան.
 - Իմ կյանքը մի նուրբ մշուշ է պատել, Գուրգուրում է ինձ մի լույս-հանգրվան... Մեկը իմ սիրտը փշրելով անցավ.
- Օ՛, քաղցր արբանք:
 - Օրհնված եք դուք, սեր, ցմրոք ու ցավ, Օրհնված եք դուք, երկիր, երգ ու կյանք...



ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ՀԵՌՈՒ, ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ



Վերջերս լեհական դիվիզիայի հայ խաղաղապահների հերթական ջոկատը (սակրավորներ, բժիշկներ ու վարորդներ) մեկնեց Յանայա ծառայության: Ինչ-ինչ պատճառներով 2 օր հետաձգումից հետո՝

հուլիսի 13-ին, նրանք մեկնեցին Քուվեյթ, որտեղից էլ մի քանի օր անց տեղափոխվեցին Իրաք: Նպատակը մեկն էր՝ գտնվելով հայրենիքից հեռու, ծառայել հայրենիքի համար՝ միշտ բարձր պահելով հայ ժողովրդի անունը:

Մինչ մեկնումը՝ նախապատրաստական դասընթացներ էին ընթանում, որոնք անցկացնում էին ամերիկացի սպաները, նրանք գոհ էին հայ զինվորականների պատաստությունից: Ամերիկացիներին հաճելիորեն զարմաց-

րել էր հայերի մարտական ոգին, եռանդն ու պատրաստականությունը: Ուսուցողական աշխատանքների ժամանակ, նրանք կրակում էին, պայթուցիկ սարքեր վնասագերծում, ինչպես նաև բեռնատար մեքենաներ վարում և բուժպատրաստություն անցնում: Մի խոսքով, մարզվում և սովորում էին պատրաստ լինելու հնարավոր և անհնար դժվարին փորձությունների:

Մեկնելուց առաջ նրանք հրաժեշտ տվեցին իրենց հարազատներին, բարեկամներին ու ընկերներին: Տղաներից մեկը՝ գրկելով մորն, ասաց. «Մայրիկ, խաղաղապահ եմ, գնում եմ մեր առաքելությունը կատարենք օտար երկրում, որ աշխարհում բարձր պահենք Հայաստանի սուրբ անունն ու պահպանենք հայ մարդու խաղաղ ու հանգիստ կյանքը»:

Մեզ մնում է հույսով ու հավատով սպասել տղաների վերադարձին, իսկ հայրենիքին մատուցած ծառայությունն, անշուշտ, բարձր կգնահատվի ժողովրդի կողմից:

L. Յ.

Հ Ա Յ Ո Ց Բ Ա Ն Ա Կ

Շարունակելով «Հայոց բանակ» շարքը՝ որոշեցինք գրուցել ծառայության մեկնելու պատրաստվող, ծառայության մեջ գտնվող և արդեն զորացրված տղաների հետ:



Նարեկ Քթոյան. քաղաք երևան, 110 դպրոց, 10-րդ դասարան.

Գտնում եմ, որ բանակը կարևոր է տղայի համար, քանզի բանակում տղայի մոտ ձևավորվում են իսկական տղամարդու, ապագա ընտանիքի գլխավորին չափազանց անհրաժեշտ բնավորության գծեր, տղան ծեռք է բերում ինքնուրույնություն, նվիրվածություն, ի վերջո, մարզվում է և կոփվում: Առանց բանակային կյանքի՝ տղամարդու կյանքն ինչ-որ չափով դատարկ կլինի: Միանշանակ սխալ եմ համարում այն, երբ շատերը բանակն իրենց տեղը չեն համարում:

Երբ դպրոցն ավարտելուց հետո անմիջապես բանակ են գնում, հանդիպում են դժվարությունների, օրինակ՝ զինվորական խստության, պարտավոր են լինել կոկիկ, ինքնուրույն: Բացի այդ, տանջում է կարոտը, արտաքին աշխարհից կտրվածությունը: Դժվար է նաև շփումը նոր երիտասարդների հետ, քանզի ինչպես հայ տղաներին է բնորոշ, նրանք կամ շատ մտերիմ են, կամ շատ հեռու:

Շատ դեպքերում անհանգստության տեղիք է տալիս Ղարաբաղում ծառայելու հարցը, սակայն, կարծում եմ, որ Ղարաբաղյան խնդրի լուծումը շատ կարևոր է: Ղարաբաղը պետք է ձեռք բերի ինքնուրույնություն, պետք է դադարի կռվախնձոր լինել Հայաստանի և Ադրբեջանի միջև:

Մակար Եղիազարյան. 19 տարեկան (նկարում աջից). Երբ հրաժեշտ տվեցի հարազատներին և ավտոբուս բարձրացա, զգում էի, որ կյանքն այդ պահից բեկունմային ընթացք ստացավ:

Հիմա կարծում եմ, որ նույնիսկ ծառայելու ընթացքում պետք է կարողանաս պայմանները քեզ հարմարեցնել, ոչ



թե՛ հակառակը: Չնայած որ բանակում դառնում ես ավելի հարմարվող, զուսպ և հանդուրժող: Քանի որ բանակ են մեկնել երկու տարի համալսարանում սովորելուց հետո, զորամասի ավագներից մեկն եմ, և ինձ համար դժվար է, հատկապես, տարբեր տարիքի անձանց հետ շփվելը: Հետևողականություն ցուցաբերելով զինվորների հանդեպ՝ ինքս իմ հանդեպ էլ եմ դառնում ավելի պահանջկոտ: Իսկ

մեր երիտասարդների որոշ մասի հայրենասեր չլինելը կապում եմ Հայոց պատմությունը լավ չհիմնալու փաստի հետ:

Հարութ Ավագյան. 22 տարեկան (նկարում ձախից).

Նախքան բանակ գնալս պատկերացումներս լրիվ այլ էին հայոց բանակի մասին: Գնալուց հետո փոխվեցին թե՛ կարծիքներս, թե՛ մտածելակերպս: Սկզբում մտածում էի, թե զուր վատնում եմ երկու տարվա թանկ ժամանակս, քանի որ ծրագրերս անավարտ մնացին: Կիսատ էի թողել ուսումս, և մտածում էի, որ ծառայությունս ավարտելուց հետո ցանկություն չեմ ունենա շարունակել ուսումս, երկու տարվա ընթացքում կմոռանամ ձեռք բերած գիտելիքներիս մեծ մասը:

Շփումը սկզբնական շրջանում շատ բարդ էր, քանի որ զորամասում հավաքվել էին տարբեր մտածելակերպի, սովորույթների և բնավորությունների տեր մարդիկ, որոնք, սկզբնական շրջանում, ագրեսիվ էին տրամադրված, սակայն այդ պահվածքը ամիսների ընթացքում վերափոխվեց մտերմության և ընկերության:

ԼԻԱՆԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ



ԱՌՈՂՁ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ, ԱՌՈՂՁ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ

15 տարի առաջ, Հայկ Աբգարյանը Ջավախքից (գյուղ Գանձա) տեղափոխվել է Երևան: Ուժեղ կամքի ու սեփական ուժերի հանդեպ հավատի շնորհիվ Հայկը սպորտի բնագավառում հաջողությունների է հասել: Նա ապացուցել է, որ հաջողակ ու նպատակասլաց մարդուն բարձունքների հասնելու ճանապարհին, ոչինչ չի կարող խանգարել: Նույնիսկ՝ չարաբաստիկ ավտովթարը:

«Ֆիզիկական խնդիրները երբեք չպետք է ընկճեն մարդուն, և վերջ դնեն նրա ձգտումներին, նպատակներին ու երազանքներին: Առողջ միտքն ու պայքարելու ցանկությունը յուրաքանչյուրին կարող են տալ այն ամենը, ինչին



Հայկ Աբգարյանը առաջին շարքում՝ ծախից երրորդը:

նա ձգտում է», - կյանքի նկատմամբ, ահա այսպիսի մոտեցում ունի մեր գրուցակիցը՝ Հայկ Աբգարյանը.

- Ինչպե՞ս սկսվեց «Փյունիկ» հասարակական կազմակերպության հետ Ձեր համագործակցությունը:

- Գալով Երևան՝ իմացա «Փյունիկ» կազմակերպության մասին: Սկսեցի համագործակցել: «Փյունիկն» ինձ հնարավորություն տվեց շարունակել ապրել՝ ձգտելով լավագույնին: Մասնակցեցի միության սպորտային ծրագրերին, որոնց աշխարհագրությունը Հայաստանի սահմաններից դուրս էր:

- Ո՞ր սպորտաձևով եք զբաղվել և ի՞նչ հաջողությունների եք հասել:

- Սկզբում զբաղվել եմ լեռնադահուկային սպորտով: Դեռ Սովետական Միության տարիներին էր, երբ մասնակցեցի Ռուսաստանի առաջնությանը (գրավել եմ մրցանակային 3-րդ տեղը): Հետո սկսեցի զբաղվել առազաստանավային սպորտով: Այդ ժամանակ դեռ դպրոցական էի, և դասերի հետ զուգահեռ այդ սպորտաձևը յուրացնում էի տեսականորեն, մինչև հնարավոր եղավ այն գործածել Սևանա լճում:

1994-ին մրցումների մեկնեցի Անգլիա և մասնակից 14 երկրների մեջ գրավեցի 7-րդ տեղը: Հաջորդը 1996-ի Եվրոպայի առաջնությունն էր, որին մասնակցության իրավունք ձեռք բերեցի՝ Ատլանտայի 1996 թվականի Բարոլիմպիկ խաղերին:

Մասնակցել եմ նաև անվասայլակներով վազքի՝ Լոս Անջելեսի, Չիկագոյի և Նյու Յորքի մրցումներին, որոնցից մեկի ժամանակ 110 մասնակիցների մեջ գրավել եմ 7-րդ տեղը՝ 45կմ տարածությունն անցնելով 1 ժամ 50 րոպեում: Ջբաղվել եմ նաև ալպինիզմով և շատ այլ սպորտաձևերով:

- Կյանքում եղե՞լ են այնպիսի պահեր, երբ Ձեզ հուսահատությունն է պատել ու մեկուսանալու ցանկություն եք ունեցել:

- Վթարից հետո, բնականաբար, եղել են պահեր, երբ փորք-ինչ հուսահատվել եմ, իսկ մեկուսանալ՝ երբեք չեմ ցանկացել: Հայաստանում չկան բավարար պայմաններ, հարմարություններ հաշմանդամների համար, սակայն ես սովորեցի հարմարվել, այլ կերպ՝ չգիտեմ՝ ինչ կլիներ: Ընդհանրապես, հաշմանդամը չպետք է վատ զգա այդ ամենից, հնարավոր չէ, որ ամեն ինչ հարմար լինի նրան, պետք է ուղղակի համակերպվել, այլապես նա հուսահատություն կապրի և կունենա մարդկանցից մեկուսանալու ցանկություն:

- Ի՞նչ դժվարությունների եք հանդիպում և ինչպե՞ս եք դրանք հաղթահարում:

- Դժվարությունները շատ են, մասնավորապես՝ հասարակությունից կտրվածությունը, որն ականա ստացվում է մարդաշատ վայրեր դուրս չգալու և շփման պակասի արդյունքում: Օրինակ՝ ես փորձեցի ընդունվել Ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտ, սակայն ինձ չընդունեցին՝ պատճառաբանելով, որ հաշմանդամ եմ, դժվարություններ կունենամ: Իրականում, դա մարդկանց թերի մտածելակերպն է, որ ստիպում է նման պատճառաբանություններ անել ու հաշմանդամներին դուրս մղել հասարակական կյանքից: Մենք զրկվում ենք շատ մրցումներին մասնակցելու հնարավորությունից նաև: Մեր հանդեպ նման վերաբերմունք դրսևորելու պատճառներից մեկն էլ այն է, որ շատ սպորտաձևերում սաները թույլ են պատրաստված, ֆիզիկապես առողջները պարտվում են սայլակավոր սպորտսմենների հետ մրցելիս: Այդ մտավախությունն է շատերին ստիպում չընդունել մեզ: Նրանք հասկանում են, որ շատ դեպքերում մենք իրենցից պատրաստված ենք և ուժեղ, սակայն ասում են, որ թույլ ենք ու չենք կարող մասնակցել: Եվ այդ ամենն այն պատճառով, որ մեր երկրում լավ չեն պաշտպանված հաշմանդամների և, կարելի է ասել, նաև այլ քաղաքացիների իրավունքները:

- Ինչպե՞ս եք ընկերների հետ անցկացնում ազատ ժամանակը: Ի՞նչ նախասիրություններ ունեք:

- Ազատ ժամանակ համարյա չունեմ, բայց եթե հարմար պահ է լինում, շատ եմ սիրում ընկերներով լինել Սևանում, լողալ ու հետաքրքիր ժամանակ անցկացնել:

- Կյանքում ի՞նչ նշանաբանով եք առաջնորդվում:

- Պետք է առաջին հերթին մտածել առողջ. ահա իմ նշանաբանը: Եթե որևէ առողջական խնդիր ունես, չպետք է ընկճվել ու դրանով վերջ դնել բոլոր ձգտումներին, երազանքներին: Չպետք է մտածել, որ այլևս առաջ գնալու, հաջողության հասնելու հնարավորություն չի լինի: Ֆիզիկական խնդիրը չպետք է հաշմանդամ դարձնի նաև մարդու միտքը, որը, ցանկության դեպքում, կարող է նույնիսկ լեռներ շրջել:

- Ի՞նչ կպատմեք Ձեր նորաստեղծ ընտանիքի մասին:

- Հիանալի կին ունեմ, միմյանց լավ ենք հասկանում ու գնահատում: Այդ հարցում էլ ես խնդիրներ ունեցա, քանի որ նրա ծնողները չէին ցանկանում իրենց աղջկան անուսնացնել ինձ հետ: Մենք նույն դասարանում ենք սովորել և դեռ դպրոցական տարիներից սիրում էինք միմյանց: Նրանք մեզ չկարողացան խանգարել, քանի որ իսկական սերը հաղթում է: Ես նրան փախցրի, որպեսզի ոչ ոք արգելք չլինենր մեր սիրուն:

- Ի՞նչ կարծիք ունեք մերօրյա երիտասարդության մասին: Փորձեք համեմատել արտասահմանյան երի-



տասարդության հետ, ինչպիսի՞ տարբերություններ եք տեսնում:

- Մեր երիտասարդությունը մաքուր է, այնքան էլ մնան չէ արտասահմանցի երիտասարդներին: Եթե նրանց մոտ շատ շուտ են ինքնուրույն կյանք սկսում և չափազանց ազատ են մտածում, ապա մեզ մոտ մի քիչ այլ է: Երիտասարդը, իհարկե, կարող է շատ հարցերի շուրջ ունենալ ուրույն տեսակետներ, որոշումներում լինել ազատ, սակայն կան այնպիսի առանձնահատկություններ, որոնք հայի արյան մեջ են և երբեք չեն աղտոտվի արտասահմանյան մերժելի բարքերի ազդեցության տակ: Մեր երիտասարդները այսօր որոշ չափով կրկնօրինակում են արտասահմանյանը, բայց հայը իր ակունքներից չի հեռանում:

- Մանկուց ի՞նչ նվիրական երազանք եք ունեցել, որը փորձում եք իրականացնել:

- Որպես հայ քրիստոնյա՝ իմ ամենամեծ երազանքն է մատուռ կառուցել: Ինձ թվում է՝ տարիների ընթացքում ինձ կհաջողվի իրականացնել հոգուցս բխող այդ նպատակը: Իսկ ընդհանրապես, ուզում եմ հնարավորինս օգնել մարդկանց: Այսինքն՝ ինչպես «Փյունիկը» ինձ օգնեց հասկանալ, որ կյանքը չի վերջացել, ամեն ինչ դեռ առջևում է, այնպես էլ ես կցանկանայի ֆիզիկական խնդիրներ ունեցող մարդկանց օգնել, որ հոգով ու մտքով ամուր լինեն, սխալ ուղիով չգնան: Մի խոսքով, նրանց համար կանեն այն ամենը, ինչ հնարավոր է:

- Ո՞րն է Ձեր կյանքի ամենամեծ ձեռքբերումը:

- Պարզ մտածել, հոգեպես չընկճվել: Իմ ամենամեծ ձեռքբերումը սա է, պարզ ու խաղաղ հայացք կյանքի նկատմամբ: Հենց դա ինձ օգնեց երբեք զլուխ չխոնարհել դժվարությունների առաջ:

- Բազմիցս եղել եք արտասահմանյան զարգացած երկրներում: Գիտե՞նք, որ շատ քչերն են թողնում այնտեղի փափուկ կյանքն ու վերադառնում: Երբևէ չե՞ք

մտածել այնտեղ մնալու մասին:

- Համաձայն եմ, որ արտասահմանում գրավիչ պայմաններ կան, սակայն, երբ ապրում ես այնտեղ, զգում ես, որ դա քեզ համար չէ, խորթ է: Չափից դուրս ազատությունը և մերժելի բարքերը ինձ վանում են: Ոչնչի հետ չեն փոխի հայրենիքս ու այն հանգստությունը, որ այստեղ ունեմ:

- Ի՞նչ խորհուրդ կտայիք այն մարդկանց, ովքեր, կյանքում դժվարությունների հանդիպելով, հուսահատվել են, և այլևս չեն ձգտում առաջընթացի ու հաջողությունների:

- Ամեն ինչ հաղթահարելի է, չկա ոչինչ անհաղթահարելի: Եթե ունես առողջ միտք, կունենաս նաև նոր մտահղացումներ՝ ամեն ինչ փոխելու, նորովի սկսելու հնարավորություններ: Երբ բարդ իրավիճակների ես հանդիպում, չպետք է կարծես, թե կյանքը վերջացավ: Միշտ պետք է մտածես, որ կան քեզանից ավելի վատթար վիճակում գտնվող մարդիկ, ու շարունակես կյանքդ՝ պայքարելով և ուրախանալով ամեն նոր բացվող օրվա համար, որ Աստված տալիս է ապրելու և կյանքը վայելելու համար:



ԼԻԼԻԹ ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱԼ

ՓԱՐԻԶՈՒՄ ԿՐԿԻՆ ԺԱՆՍԵՍ



Ամեն տարի՝ ամռանը, փարիզյան պետկերասրահի տերերն արվեստասերներին ուրախացնում են նոր և հետաքրքրական ցուցադրություններով: Փարիզի «Աշխարհ» թերթը տեղեկացնում է, որ օրերս Մատինյոն փողոցում գտնվող հայտնի պատկերասրահում բացվել է ֆրանսահայ ականավոր նկարիչ ժանսեմի գործերի հերթական ցուցադրությունը: Ցուցահանդեսի բացման ժամանակ արվեստասերների բազմությանը, ինչպես նաև Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Էդվարդ Նալբանդյանին և նրա տիկնոջը դիմավորել է անձամբ ժանսեմը:

Ներկա ցուցադրությունը բաղկացած է 3 բաժնից: Պատկերասրահի մեծ սրահում ներկայացված են վարպետի վերջին շրջանի նշանակալի կտավները՝ «Հարա-

վային երկար փողոց», «Արևի ժամացույց», «Եկեղեցու որմնախորշ» և այլն: Նախասրահում ներկայացված են ժանսեմի 70-ականների գործերը, գլխավորապես՝ կենցաղային տեսարաններ: Իսկ երկրորդ հարկի սրահը նվիրված է հրճվանքի և մահվան «կառնավալներին»:

Միաժամանակ ցուցադրված են Սոնյա Դյունեի, Ֆտորիեի, Պիկասսոյի, Մարի Լորանսենի, Լամի, Սուտինի, Էռնստի, Բլեյի որոշ նկարներ, ինչպես նաև ճենապակե և արծաթե իրեր:





ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՆԵՐԸ ՊԱՏՃԱՌԱՐԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Թրաֆիկինգը՝ մարդկանց վաճառքը, որպես երևույթ, իրենից ներկայացնում է բարդ, ինչ-որ չափով նաև խճճված համակարգ, կարելի է ասել սարդոստայնի նմանվող թակարդ, որի մեջ հայտնվելուց հետո դուրս գալը շատերի համար մի ողջ կյանք է արժենում:

Արդեն մշել ենք, որ հայ մարմնավաճառները հիմնականում գործունեություն են ծավալում Արաբական Միացյալ Էմիրություններում (ԱՄԷ) և Թուրքիայում երկրներ, որտեղ սեքս-բիզնեսը տնտեսության անբախտելի մասն է կազմում: Ու եթե թրաֆիկինգի ցանցը, որպես այդպիսին, ներկայացնենք ԱՄԷ-ի օրինակով, ապա, բնականաբար, ամենագլխավոր և կենտրոնական օղակների «տերերը» հանդիսանում են արաբ և հայ կավատները, մարմնավաճառների լեզվով ասած՝ «բոսերը», որոնք համագործակցության եզրեր, ասել է, թե «կապեր» ունեն մի կողմից ԱՄԷ միգրացիոն ծառայությունների և արաբական ոստիկանության, մյուս կողմից՝ հայ իրավապահների հետ: Սեքս-բիզնեսի հիերարխիկ կառուցվածքը համեմատելի է նաև հավաքագրողների և միջնորդների օղակներով: Պարզ է, որ հայաստանյան հավաքագրողները հենց Հայաստանից են ցուցակագրում հնարավոր «թեկնածուներին»՝ իրենց գործում չզլանալով գործի դնել թե՛ խաբելու և թե՛ համոզելու կարողությունները: Հարկ ենք համարում բառացիորեն մեջբերել հայ կավատներից մեկի խոսքն ու կոչը՝ ուղղված երկմտող «թեկնածուներից մեկին».

«Դուքայում աղջիկների համար լավագույն պայմաններ են ստեղծված: Գնա՛, կյանք տես, քո կյանքով ապրի, ամեն ինչով, ուտելիքդ, խմելիքդ, հագնելիքդ ծրի: Փողն էլ կա. էստեղ որ մնաս, ի՞նչ պիտի անես»:

Այստեղ, գերծ մնանք մեկնաբանություններից ու անդրադառնանք այն խնդրին, որ մինչ այդ «լավ» պայմանները կատեղծվեին, հայ կանայք էլք ու մուտք ունեին ԱՄԷ որպես առևտրականներ՝ այդտեղից Հայաստան համեմատաբար էժան ապրանք ներմուծելով: Այնուհետև, ցուցաբերելով հային բնորոշ «խելք և հեռատեսություն», սկսեցին մեծ մասնակցություն ցուցաբերել բիզնեսի մի նոր ոճի զարգացման մեջ, որի համար այլ նախնական կապիտալ հարկավոր չէր, քան՝ սեփական մարմինը: Ավելի հեռատեսներն էլ սկսեցին արդեն, որպես «նախնական» կապիտալ, «ներմուծել» կանանց: Նույն այդ հեռատեսությունը նաև հուշում էր կավատներին՝ ընտրել այնպիսի աղջիկների, որոնք լինեն ոչ նորմալ ընտանիքներից, լինեն ծնողազուրկ, մանկատան սան կամ գտնվեն սոցիալապես խիստ անապահով պայմաններում, կարճ ասած՝ այլընտրանք չունենան: Հասարակությունն այն թյուր կարծիքին է, որ մանկատան բոլոր սաներն «պատրաստ են» և «հակված» սխալ ուղի բռնելու:

Փաստ է, որ «վաճառքի ենթակա» կանայք խումբ-խումբ չեն տեղափոխվում, որ աչք չծակի, քանի որ օդանավակայանում խնդիրներ կարող են ծագել: Սովորաբար նրանք սկզբում ուղարկվում են Մոսկվա, որտեղ էլ մի քանի հոգի հերթափոխով դիմավորում են նրանց: Դիմավոր

ողողները, որպես կանոն, սերտ կապեր են ունենում օդանավակայանում՝ այսպիսով՝ հայկական սեքս-բիզնեսի ցանցում կարևոր օղակ կազմելով և հանդես գալով որպես միջնորդ: Մոսկվայում կանանց անձնագրերը փոխվում են, տրվում են կեղծ, հիմնականում ռուսական անձնագրեր, որոնցում նրանց տարիքը փոխված է՝ նվազագույնը 31 տարեկան, քանզի 31-ից ցածր կանանց մուտքը ԱՄԷ արգելվում է, եթե նրանք ծնողների կամ ամուսնու հետ չեն: Հաճախ տարիքի կեղծումները, նույնիսկ չցանկանալու դեպքում, ակնառու են, քանի որ շատ դեպքերում կանայք լինում են չափազանց երիտասարդ, նույնիսկ անչափահաս:

Դուքայ ժամանելիս՝ օդանավակայանում յուրաքանչյուր ուղևորի աչքի բիբը նկարվում է, ըստ այդմ էլ՝ ստուգվում, արդյոք տվյալ անհատը գրանցված է ԱՄԷ-ի միգրացիոն ծառայության «սև ցուցակում»: Եթե այո, ապա ոստիկանությունը սկսում է զբաղվել նրանով, ընդհուպ մինչև երկրից վտարում: Սակայն, ինչպես ցանկացած բնագավառում, այդտեղ էլ փողն իրենն է անում «սև ցուցակում» արդեն իսկ գրանցված անձանց մուտք ապահովելով ԱՄԷ և նույնիսկ ապագայում «հաջողություն» խոստանալով: Եվ այսպես շարունակ, այն էլ ավելի ու ավելի մեծացող տեմպերով: Իսկ թրաֆիկինգի դեմ ուղղված աշխատանքները տարեկան ամփոփվում են ՀՀ գլխավոր դատախազության կոլեգիայի նիստերում: Առաջին հայացքից ներկայացվում են խոսում փաստեր և թվեր, տասնյակ քրեական գործեր, բացատրություններ, կալանքներ: Այո, նույնիսկ մնան «բուռն» աշխատանքից հետո կանանց վաճառքը նոր թափ է առնում, արաբական երկրներ մեկնողների թիվը՝ աճում: Վերջին չորս տարում ԱՄԷ-ից բանկային համակարգի միջոցով Հայաստան փոխանցված գումարների կտրուկ աճ է արձանագրվել:

- 2001թ. - 654.200 դոլար
- 2002թ. -3.933.300 դոլար
- 2003թ. -5.769.500 դոլար
- 2004թ. -8.792.800 դոլար

Ընդհանուր առմամբ՝ 19մլն 149 հազար դոլար (տվյալները տրամադրել է ՀՀ կենտրոնական բանկի մամուլ ծառայությունը):

Իսկ ի՞նչ գումարներ են սրանք, եթե ոչ հայ մարմնավաճառների և կավատների՝ Հայաստան ուղարկված գումարները: Եվ վերջապես, ինչո՞վ է պայմանավորված այս «առաջընթացը»: Վստահաբար կարելի է ասել, որ աշխարհում ամենալայն տարածում ունեցող թմրանյութերի բիզնեսին հասնելու միտում ունեցող թրաֆիկինգ-բիզնեսն իր հիմքում ունի թե՛ ոստիկանության, թե՛ հանցագործ աշխարհի հովանավորությունը, ինչն էլ վկայում են բազմաթիվ փաստերն ու օրինակները: Թրաֆիկինգի և կավատության հատկանիշներով բնութագրվող դատական գործերով զբաղվում է, հիմնականում, ՀՀ գլխավոր դատախազությունը, իսկ տվյալ դատավճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր գործերն



ավարտվել են հենց առաջին ատյանում, այնինչ՝ այլ գործերն անցնում են երեք դատական ատյաններով: Արի ու տես, որ թրաֆիկինգի պարագայում կողմերից և՛ ոչ մեկը երբևէ դատավճիռը չի բողոքարկել...

Փաստորեն, երևույթի արմատներն ավելի խորն են, քան թվում է առաջին հայացքից: Ուստի, խնդրի լուծումը պետք չէ սկսել վերևից՝ մարմնավաճառներից՝ ձերբակալելով նրանց կամ արտաքսելով, այդպես անտեսելով խնդրի սկզբնաղբյուրը, դա նույնն է, թե եռացող կաթսան ամուր փակելով փորձենք դադարեցնել ջրի եռալը, փոխանակ զազն անջատելու:

Ի վերջո, ի՞նչ պատիժ է սահմանում ՀՀ քրեական օրենսգիրքը կավատների համար: Քրեական օրենսգիրքը կավատությունը դիտում է որպես.

ա) Անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություն՝ գլուխ 17-ի 132 հոդվածով բնորոշելով երևույթը՝ որպես մարդկանց առևտուր,

բ) Հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություն,

գ) Հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություն՝ գլուխ 25-ի 261 հոդվածով բնորոշելով՝ որպես ներգրավում պոռնկությամբ զբաղվելու մեջ,

դ) Նույն գլխի 262 հոդվածով՝ բնորոշելով երևույթը՝ որպես պոռնկությամբ զբաղվելու համար որջ կազմակերպել, պահել և կավատությամբ զբաղվել:

Որպես պատժամիջոց՝ ընդունված է կամ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանք՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կալանք՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկում՝ համապատասխանաբար երկուսից չորս, նվազագույնը երկու կամ առավելագույնը հինգ տարի ժամկետով: Պատիժը խստանում է, երբ արարքները կատարվել են.

- մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- կամ առողջության համար բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
- անչափահասների նկատմամբ,
- երկու կամ ավելի անձանց նկատմամբ:

Վերոհիշյալ օրենքներից զատ՝ բիզնեսի այս ոլորտը ունի իր սեփական և ուրույն օրենքները, և այս ոլորտում բոլոր կողմերը համաձայնության են գալիս միանգամից: Ի՞նչ իմաստ ունի վճիռը բողոքարկել, չէ՞ որ նրանք առանց բողոքարկման էլ խուսափում են պատժից կամ, համենայն դեպս, խիստ պատժից: Որպես այդ երևույթի հետևանք՝ կավատները պարբերաբար ձերբակալվում են, «անհրաժեշտաբար»՝ ազատ արձակվում: Իսկ այնտեղ՝ ԱՄԷ-ում, կանայք տարբեր ազգությունների են՝ ռուս, չինացի, իրանցի, հայ և այլն, տարբեր տարիքի՝ հիմնականում՝ երիտասարդ, նույնիսկ՝ անչափահաս: Ըստ այդմ կանայք բաժանվում են գնային խմբերի: Որպես կանոն՝ մարմնավաճառները լինում են կամ իրենց «բոսի» աշխատողը, կամ էլ, եթե արդեն վճարել են իրենց տիրոջ կողմից իրենց վրա ծախսված գումարները, աշխատում են ինք-

նուրույն: Առաջին դեպքում փողոցի անկյուններում, դիսկոտեկներում, կամ գիշերային ակումբներում կանայք երբեք իրավունք չունեն թողնել իրենց «աշխատանքի վայրը», քանի որ նրանց «բոսը», ինչպես նշում են մարմնավաճառներից շատերը, օրվա տարբեր ժամերի գալիս է ստուգայցի: Մարմնավաճառ կանանց «տերերը» բռնություն և ճնշում են գործադրում այն աստիճանի, որ նույնիսկ ընտանիքի տեր կանայք, իրենց հարազատներին զանգելու համար թույլտվություն են խնդրում և խոսում «բոսի» ներկայությամբ:

Հայ մարմնավաճառների թիվը ԱՄԷ-ում ստույգ չէ (մոտ 2.000): Ամեն դեպքում, հայերն աշխատում են միմյանց հետ չչփվել (ըստ երևույթին՝ ամոթից), այնինչ հայ և ադրբեջանցի կանայք Դուբայում մտերիմ «կոլեգաներ» են:

Ունենալով իրենց հիմնական հաճախորդները՝ մարմնավաճառները հաճախ երկու և ավելի հոգով օգտվում են մեջտեղից վարագույրով փակված սենյակից, քանի որ այդպիսով սենյակի վարձը կիսվում է: Խնդիրներ ունենալու դեպքում էլ նրանց օգնում է իրենց ընդհանուր բժիշկը, ով հանդիսանում է սեքս-բիզնես ցանցի բաղադրիչ օղակներից մեկը:

Սակայն, պետք չէ անտեսել մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր հանգամանք. խաբեությամբ և բռնությամբ ստրուկի կարգավիճակում հայտնված կանանցից շատերը, կարծես ապացուցելով «Ստրկական արարքը միշտ չէ, որ ստրուկի արարք է» խոսքը, ամեն կերպ ջանում են դուրս պրծնել այդ վիճակից, այդ երևույթից՝ նույնիսկ փորձելով փախուստի դիմել: Փախուստից բացի կա ևս մի ելք՝ հանձնվել ոստիկաններին, որոնք էլ նրանց ուղարկում են Հայաստան: Սակայն նույնիսկ ոստիկանությունում էլ կանայք անհասանելի չեն. հաճախ նրանց «բոսերը», վճարելով ոստիկաններին, հետ են բերում իրենց «ապրանքը», այնուհետև նույնիսկ մինչև մահամերձ վիճակի հասցնելը ծեծում են՝ ստիպելով շարունակել աշխատել: Ի դեպ, ծեծելիս էլ ի հայտ է գալիս թրաֆիկինգի ցանցի բաղադրիչ



օղակներից ևս մեկը, այսպես կոչված պատժիչ խումբը, որոնք ահ ու սարսափ են «տարածում» մարմնավաճառների շրջանում և հատկապես մեծ «հեղինակություն» են վայելում առավել զազանային վարքագծով աչքի ընկնողները:

Այդ իրավիճակներից դուրս պրծնելուց հետո ի՞նչ ակնկալիքներ ունեն հայ մարմնավաճառները Հայաստան վերադառնալու հետ կապված: Չէ՞ որ անվանարկված կնոջ համար դեպի հայ հասարակություն, դեպի ընտանիք հետդարձի կամուրջները այլևս այրված են, էլ ի՞նչ խոսք կարող է գնալ աշխատանք գտնելու մասին: Իսկ ի՞նչ է մնում անել խորտակված ճակատագրի տեր կնոջը: Այստեղ հանգույցի ենք դեմ առնում, իսկ հանգուցալուծման ուղիները, ցավոք, փակուղու են տանում:

Ասում են՝ չկա չարիք առանց բարիքի: Տեսնես կա՞ արդյոք բարիքի գոնե մի նշույլ այս դեպքում:

**Լ. Ե.
Նյութերը վերցված են «Հետք»
հետաքննչական թերթի
«Անապատի գիշերներում» շարքից**



ՄԻՇՏ ՊԱՅԱՆՁԵԼ ԵՄ Ե՛Վ ԻՆՁԱՆԻՑ, Ե՛Վ ՈՒՐԻՇՆԵՐԻՑ



Բանաստեղծ, հրապարակախոս Դավիթ Յովհաննեսի համար կյանքի խրատներից մեկը (ինչպես ինքն է ասում) խտացված է իր Վարդուհի տատի ասույթներից մեկում. **«Չարից, փորձանքից, լրբի շառից հեռու լինես»:**

- Տարիներ հետո միայն հասկացա, որ դա շատ որոշակի կյանքի փորձից, իմաստությունից եկած մի բարեմաղթանք է,

որն այնքան տարողունակ է, որ իր մեջ ներառում է աշխարհի բոլոր դժբախտությունները, որոնք կարող են գալ մարդու գլխին: Եվ ես փորձեցի այն դարձնել ապրելու իմ սկզբունքը, բայց չարից, փորձանքից և լրբի շառից հեռու մնալ ինձ այդպես էլ չհաջողվեց:

- Ինչպիսի՞ն է այսօր բանաստեղծ Դավիթ Յովհաննեսի ստեղծագործական աշխարհը:

- Ստեղծագործական աշխարհը երջանկություն բերող մի մթնոլորտ է: Երբեք ստեղծագործական իմ աշխարհից դուրս չեմ եղել, անգամ, երբ ունեցել եմ հասարակական պարտականություններ, ասեմք՝ պատգամավորական կամ աշխատանքային... Մասնավորապես՝ «Արևիկ» հրատարակչության տնօրենների խորհրդի նախագահն եմ. այդ ամենի հետ՝ նաև կենսական, կենցաղային հարցեր, խնդիրներ... Սակայն ինձ երբեք չեն լքել ստեղծագործական մթնոլորտն ու զգացողությունը: Աշխատել եմ իմ պարտականությունների մեջ նույնպես մտցնել ստեղծագործական տարր: Գրելը ինձ համար մշտապես եղել է «վերին» մխիթարություն, որն ինձ տվել և տալիս է կյանքում ապրելու, դիմակայելու մեծ պաշար: Անգամ այսպիսի մի տող ունեմ. **«Պոեզիա-իմ միակ մխիթարություն»:**

- Ի՞նչ նոր ստեղծագործություններով կուրախացնեք Ձեր ընթերցողներին:

- Բանաստեղծությունների նոր ժողովածու եմ պատրաստում, որն աշնան վերջին, կարծում եմ, լույս կտեսնի: Գրում եմ բանաստեղծություններ՝ փոփոխական հավաքականությամբ: Չեմ տպագրվում մամուլում, որովհետև գրական մամուլ կամ մամուլ, որը Դուք հարիր կհամարեք՝ որպես գրական ելույթ, չկա մեզանում: Չնչին տպաքանակներ են, որոնք չեն ապահովում այն հրատապ ներկայությունը, ասեմք՝ պոեզիայի առումով, մի բան, որ ես շատ կցանկանայի... Այնպես որ, առաջմ չեմ տպագրում իմ նոր գործերը: Դրանք կամբողջացնեմ աշնանը՝ նոր հրատարակվող գրքիս մեջ:

Իմ պոեզիան ուրախացնելու կամ տխրեցնելու համար չէ միայն: Նախ՝ ինձ համար դա անհրաժեշտություն է, կենսակերպի, գոյակերպի առաջնահերթ պայման, իսկ ընթերցողի համար՝ հոգևոր աշխատանք կատարելու մի առիթ, որովհետև այն պոեզիան, որ ես եմ գրում,

ավելի շատ մտածելու համար է, քան թե՛ ուրախացնելու կամ տխրեցնելու:

- Այս դժվարին ժամանակներում ի՞նչն է Ձեզ ապրելու և ստեղծագործելու ուժ ներշնչում:

- Ինձ ապրելու և դիմակայելու, կյանքի համը զգալու հոգևոր ուժը տալիս է միակ մխիթարությունս՝ պոեզիան: Եթե դա չլիներ, հատկապես խավարի, ցրտի, սովի տարիներին, ես շատ արագ կարող էի լրացնել այն գրողների շարքերը, ովքեր չդիմանալով այդ ամենին՝ գրականության հետ խզեցին իրենց կապերը. մի մասը դարձավ բոմժ, այսինքն՝ մարդ առանց կոնկրետ բնակության վայրի (և դա՛ ոչ միայն բառիս ուղղակի առումով, այլև՝ հոգևոր), իսկ մի մասն էլ պարզապես ժամանակից շուտ կնքեց իր մահկանացուն: Ինչո՞ւ եմ այդպես ասում. բանզի այդ անցած 10-12 տարիների ընթացքում ես շատ ծանր հարվածներ եմ կրել: Կորցրել եմ ծնողներիս, ովքեր իրենց բնական մահով չզնային, և նրանց մահվան պատճառը ծանր ժամանակներն էին: Սահեր, որոնք կարող էին ինձ ապրելու հավասարակշռությունից հանել: Ուստի, ինձ բոլոր ժամանակներում և հիմա էլ պահում է պոեզիան, որն իմ հոգու գործն է:

- Ո՞րն է այսօր հայրենասիրության Ձեր բանաձևը:

- Հայրենասիրության իմ բանաձևը շատ պարզ է. ամեն մեկը իր տեղում պիտի անի իր գործը խղճի մտքը:

Սակայն ինձ երբեք չեն լքել ստեղծագործական մթնոլորտն ու զգացողությունը: Աշխատել եմ իմ պարտականությունների մեջ նույնպես մտցնել ստեղծագործական տարր: Գրելը ինձ համար մշտապես եղել է «վերին» մխիթարություն, որն ինձ տվել և տալիս է կյանքում ապրելու, դիմակայելու մեծ պաշար: Անգամ այսպիսի մի տող ունեմ. **«Պոեզիա-իմ միակ մխիթարություն»:**

Կինն էլ պիտի լինի իր տեղում, տղամարդն էլ: Եթե ամեն մեկն իր գործն անի խղճի մտքը, դա կլինի ամենամեծ հայրենասիրությունը, այդպես մենք կկարողանանք ծաղկեցնել մեր հայրենիքը՝ Հայաստանը՝ և ոչ թե անպագորգոռ ճառեր ու կենացներ ասելով: Մեծ երեսպաշտությունը, որ թագավորում է մեր դժբախտ Հայաստան աշխարհում, ապակողմնորոշում է շատերին. հիմարին՝ խելոք դարձնում, ստին՝ ճշմարիտ, գլուխ պահողին՝ հայրենասեր հռչակում: Սա՛ է մեզ կործանում՝ մեր արժեքների գլխիվայր շուռ եկած լինելը: Թո՛ղ դիվանագետն

իր տեղում իր գործն անի, և մենք կունենանք լավ արտաքին քաղաքականություն և Դարաբաղի հարցի թեթևացում, գուցե՛ նաև լուծում: Ձինվորն իր տեղում իր գործն անի, պաշտոնյան ձեռքից մաքուր լինի, գրողը, եթե կոչված է գրելու, գրի, իսկ եթե ոչ՝ գրամոլորությամբ չզբաղվի: Այսօր մեզանում պետական, հասարակական մտածողությունն է բացակայում: Ես, համենայն դեպս, միշտ աշխատել եմ հետևել իմ այդ սկզբունքին, և այդ պատճառով գուցե դժվարահաճ մարդ եմ, որովհետև միշտ պահանջել եմ և՛ ինձանից, և՛ ուրիշներից: Բայց փոխվելու համար արդեն ուշ է, ավելին՝ փոխվել չեմ էլ ցանկանում:

Բանաստեղծուհի ԼԻԼԻԹ



ԱՆԱՎԱՐՏ «ԱՌԱՎՈՏ»

ԺՈՐԱ ԱՎԱԳՅԱՆ



Հին վարպետները խրատում էին մեզ, որ գույները թանկարժեք են, ինչպես ոսկին կամ շափյուղան:

Նկարիչը կարող էր ինքն ընտրել գույնը, բայց այն գույնը որն իր մեջ իմաստ և խորհուրդ ուներ. թռչունը կարող էր լինել երկնագույն, ծառը՝ ոսկեգույն, ձուկը՝ արծաթագույն, ամպը՝

ալ կարմիր, բայց նկարիչը համոզում էր մեզ նրանում, թե ինչքան կարևոր են ցավ պատճառող լարվածության հասցնող այդ գույները:

Մեղմացած երանգներ՝ զուգորդված ցայտուն, հյութեղ ու պայծառ գույներով: Նկարիչը սիրում է երանգի հակադրությունների շեշտման սկզբունքը, գույների ակնհաս համադրությունը՝ ստեղծագործական որոշակի ինքնուրույնությամբ, որոնք ստեղծում են յուրահատուկ հանդիսավոր տրամադրություն:

Ժորա Ավագյանը ծնվել է 1952 թվականին, Ջավախքում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ավարտել է Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի գեղագիտության բաժինը: Մասնակցել է բազմա-

թիվ ցուցահանդեսների, հանդես է եկել աշխատանքների անհատական ցուցադրությամբ: 1993-ի հոկտեմբերի 13-ին, ծանր հիվանդության պատճառով, անժամանակ կնքեց մահկանացուն:

«...Արևի ճառագայթները ընկել էին պատերի մուգ կանաչին փակցրած ոսկեգոծ շրջանակներով նկարների վրա: Նկարիչը երկար մայեց անավարտ կտավին ու կրկին, ինչպես ամեն անգամ վրձնահարվածներ դնելիս, հիշեց իր վարպետին. «Մի՞թե այդ ես էի, որ դեռ անծանոթ՝ իմ մեծ վարպետի գործն էի կրկնում, իսկ մարդիկ, ներկը դեռ չչորացած, դրամ էին տալիս»: Ու հիշեց նաև, թե ինչպես էր բանաստեղծն իրեն համոզում, որ իր ապրումներով լի կտավներում ռոմանտիկ շունչն իր մեջ անդորրության տարր է թաքցնում:



Կգտնվե՞ն արդյոք մարդիկ, բացահայտելու և ներկայացնելու իր արած գործի արժեքը... Արվեստանոցում պատերից կախված նկարների կողքին դրված էր համեստ պատկերով, գողտրիկ մի նկար՝ անունն «Առավոտ», որ մնաց կիսատ:

ՀԱՍՄԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ



Խ Ա Ղ Ո Ղ

Զվիճարկելով, թե որն է խաղողի հայրենիքը, արժե փաստել, որ Հայաստանը խաղողագործության և զինեգործության հնագույն

կենտրոններից է, որի ապացույցը Կարմիր բլուրի և Էրեբունու պեղումների ժամանակ հայտնաբերված զինու մառաններն են, կարասները, խաղողի ածխացած սերմերը: Այն կարծիքը կա նաև, որ խաղողի հայկական հինավուրց տեսակների մեծ մասը սերել է տեղական վայրի տեսակից:

Խաղողից ստանում են զինի և կոնյակ, հյութ, պատրաստում են դոշաք, մուրաբա, օգտագործում են թարմ և չորացած՝ չամիչի տեսքով: Խաղողը ունի նաև բուժիչ հատկություն և օգտագործվում է սրտի, թոքերի, լյարդի և այլ հիվանդությունների բուժման նպատակով:

Իրենց քաղցրությամբ, համ ու հոտով առանձնանում են խաղողի հայկական տեսակները (Խարջի, Քիշմիշ, Ոսկեհատ, Մուսկաթ և այլն), որոնց շնորհիվ մեր զինիներն ու կոնյակները միջազգային ճանաչում են ստացել:

Զմոռանանք նշել, որ զինին աստվածային խմիչք է, ասել է թե՛ անմահական, հայկական կոնյակն էլ ողջ աշխարհում հայտնի է:

Դեռ շատ հին ժամանակներից մեր նախնիների համար ուրախության և խնդության տոներից է եղել խաղողի բերքահավաքը՝ այգեկութը: Թե որքանով է այգեկութը կարևորվել, վկայում են հայկական միջնադարյան հուշ-

արձանների բարձրաքանդակների վրա պատկերված խաղողահավաքի տեսարանները: Ընդհանրապես, խաղողը հայ արվեստի զանազան տեսակների՝ խաչքարերի, գարդաքանդակների, մանրանկարչության ամենասիրելի զարդանախշերից է, մեր հոգու՝ զվարթության և կենսախնդության խորհրդանիշը:

Մենք՝ հայերս, խաղողի հետ կապված ունենք եկեղեցական տոն՝ «Խաղողօրհներ»՝ անունով: Այդ տոնը հայոց եկեղեցին նշում է օգոստոսի 15-ին: Ժողովրդի մոտ, կարծես թե, ավանդույթ է դարձել. «չուտել խաղող, մինչ օրհնելը»:

Վագ- խաղողենի. Ասում են՝ վագից առաջ խաղողենին ճյուղատարած ծառ է եղել, որն ուներ ձիգ ու սլացիկ բուն: Նույնն էին միայն ողկույզները՝ հյութեղ, քաղցրահամ: Խաղողը շատ դուր եկավ մարդկանց, և նրանք սկսեցին մտածել այն մասին, թե ինչ անեն, որ այդ հրաշալի պտուղը ճաշակեն տարին բոլոր: Պատրաստեցին տապակած մի մեծ տաշտ և խաղող լցրեցին մեջը, որ ձմռանն ու գարնանն էլ ուտեն: Բայց դեռ ձմեռը վրա չհասած, հենց որ այգում խաղողը վերջացավ, գնացին տեսան խաղողը տաշտի մեջ ձգմվել, հյութ է դարձել: Մարդիկ ընկան տաշտի վրա և անհագ խաղողահյութ խմեցին: Խմեցին, խենթացան, սկսեցին կոտրատել խաղողենի ծառերը, հետո՝ կապտել ծուռումուռ: Այդ ժամանակվանից էլ վագերը ծուռումուռ են մնացել:

ԼԻԼԻԹ ՄԱՆՈՒԿՅԱՆ



Մ Ե Բ Ե Ռ Ա Փ Ո Խ Ո Ի Թ Յ Ո Ի Ե

Հմուտ այգեպանը գիտի, որ կանաչ այգի ունենալու համար պարտոս հող է հարկավոր:

Պարարտ հողում վարպետն իր ձեռքերով այգի տնկեց, աճեցրեց, այսօր արդեն մենք վայելում ենք այգու պտուղները:



37 տարի առաջ Հրաչյա Ղափլանյանը մի թատրոն ստեղծեց, իսկ նոր թատերախմբի ծնունդը հրաշք էր այդ տարիներին: Մեծ է վաստակաշատ արվեստագետի դերն ու ավանդը հայ թատրոնում, իսկ մահից հետո թատրոնը արդարացիորեն վերանվանվեց՝ Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն:

Էմմա Վարդանյան, Ժասմենա Մսրյան, Իշխան Ղարիբյան, Լևոն Թուֆիկյան, Գուժ Մանուկյան, Անահիտ Թովիշյան, Վիոլետա Գևորգյան, Վլադիմիր Մսրյան, Կիմ Երիցյան... ահա այն անունները, ովքեր ավելի քան երեք տասնամյակ առաջ՝ առաջին անգամ, բարձրացան բեմ: Բեմադրվեցին առաջին ներկայացումները՝ Հ. Թումանյանի «Անուշ»-ը, Երվանդ Օտյանի «Սեր և ծիծաղ»-ը, Ի. Շտոկի «Աստվածային կատակերգություն»-ը, Գ. Հարությունյանի «Քո վերջին հանգրվանը», որոնցից շատերն այսօր էլ ապրում են: Ավելի ուշ եկան նոր անուններ՝ Հրաչյա Հարությունյան, Հովհաննես Բաբախանյան, Լիլիթ Մեսրոպյան, Լուիզա

Ղամբարյան, Արմեն Բարսեղյան, Նահիրա Շահիրյան, ովքեր այսօր թատրոնի միջին սերնդի ներկայացուցիչներն են:

Բայց ծնելը դեռ բավական չէ, շունչ ես տվել, ուրեմն պատասխանատու ես նրա համար. պարտավոր ես սնել, մեծացնել...

Այն, ինչ կենդանի է, ժամանակի մեջ մահանում է: Թատրոն. կենդանի ու բարդ օրգանիզմ: Ինչպե՞ս անել, որ այն չդադարի ապրել...

Հրաչյա Ղափլանյանը տվեց այդ հարցի ճիշտ պատասխանը.

Սերնդափոխություն:

Այն, որ Ռոմեոյի կերպարը բազում աղջիկների սրտեր է նվաճել, բոլորիս է հայտնի: Բայց, արդյո՞ք ցանկալի կլիներ այդ նույն Ռոմեոյին տեսնել արդեն 60 տարեկան հասակում. իհարկե՞ ոչ:

Շքեսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» ներկայացումն առաջին անգամ բեմադրվել է 1996-ին, որտեղ Ռոմեոյի կերպարը մարմնավորում էր

Հրաչյա Հարությունյանը: Այսօր նրան փոխարինում է նոր սերնդի երիտասարդ դերասան Գրիգոր Խաչատրյանը:

Թատրոնում կա մի օրենք՝ երիտասարդ սերնդի հանդիսատեսը սիրում է բեմում տեսնել իր սերնդակցին: Գուցե երիտասարդները կյանքի ու բեմական փորձով զիջում են ավագ սերնդին, սակայն անժխտելի փաստ է, որ թարմ արյուն են ներարկում ստեղծագործություն ասվածին:

Շատ կարևոր հանգամանք է, որ հանդիսատեսն էլ իր հերթին երիտասարդ տարիքից գա թատրոն ու դերասանի հետ մեկտեղ մեծանա: Սա կհանգեցնի նրան, որ դերասանի ու հանդիսատեսի միջև նախնական կապ կստեղծվի և տարիներ անց, երբ այդ նույն հանդիսատեսը հան-

դիպի դերասանին (արդեն՝ որպես միջին կամ ավագ սերնդի ներկայացուցիչ), ջերմ հիշողությունը կօգնի տեսնել իրեն հասակակից ու հարազատ դարձած դերասանի բեմական աճը:

Հրաչք է, երբ թատրոնում կա նոր, երիտասարդ սերունդ: Սակայն դա չի նշանակում, որ հիմա ավագ սերունդը կարող է հանգստանալ:

Բեմը տարբեր տարիք է պարտադրում: Ինչպես Ռոմեոն 60 տարեկան չի կարող լինել, այնպես էլ նոր սերնդի 20 տարեկան երիտասարդը Հերոստրատի կերպար չի կարող մարմնավորել:

Կարող ես ստել քաղաքականության մեջ, բայց արվեստում երբեք:

Սերնդափոխություն ասվածն անհրաժեշտ է ոչ միայն նրա համար, որ հանդիսատեսը տարիքային տարբերության առումով կարողանա իրեն տեսնել բեմում, այլ նաև՝ խաղացանկը պահպանելու համար:



Հատված «Սեր և ծիծաղ» ներկայացումից:


Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնը ոչ միայն կարողանում է պահպանել հին ու նոր ներկայացումները, այլև շարունակում է խաղացանկը հարստացնել նոր ու հետաքրքիր ներկայացումներով:

ԱՆԻ ՄԱՅՏԱԿԱՆՅԱՆ



ՄՈՌԱՑՎԱԾ ՆՂԽՆԻՆԵՐԻ ԱՏՎԵՐՆԵՐԸ

ՍԵՐՁԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎ



Համաշխարհային փառքի արժանացած գլուխգործոց ֆիլմերի հեղինակ Սերգեյ Փարաջանովը՝ ծնվել է 1924-ին Թիֆլիսում՝ հայկական ընտանիքում: Դպրոցն ավարտելուց հետո՝ մեկ տարի սովորել է Երկաթուղային տրանսպորտի ինստիտուտում, որից հետո ևս երկու տարի սովորել է Թիֆլիսի կոնսերվատորիայի վոկալի բաժնում, ինչպես նաև՝ խորեոգրաֆիկ ուսումնարանում: 1945-ին ընդունվել է ԿԳԻԿ-ի ռեժիսորական ֆակուլտետ: 1952-ից աշխատել է Կիևի Դովժենկոյի անվան կինոստուդիայում, որտեղ՝ որպես ռեժիսոր-բեմադրիչ, նկարահանեց իր առաջին ֆիլմը՝ «Աղբիշե», իսկ 1959-ին գեղարվեստական ֆիլմը՝ «Առաջին տղան»: Մինչև «Մոռացված նախնիների սովերները», որը ռեժիսորին բերեց համաշխարհային հռչակ, Ս. Փարաջանովը նկարահանել է մի քանի վավերագրական և գեղարվեստական ֆիլմեր: 1967-ին Երևանի փաստավավերագրական ֆիլմերի ստուդիայում նկարահանել է «Հակոբ Հովնաթանյան» ֆիլմը, իսկ 1968-ին «Հայֆիլմ» կինոստուդիայում ավարտել է «Նռան գույնը» («Սայաթ-Նովա») ֆիլմերը, որտեղ կատարելության հասցրեց իր գեղագիտական սկզբունքները:

վում արևելյան, այդ թվում նաև հայկական և եվրոպական արվեստների ավանդույթներով սնվող քանդակագործության արվեստը:

Չեղինակի ինքնատիպ ռեակցիան կյանքի իրադարձությունների նկատմամբ, նրա գեղագիտական աշխարհը նկատուճարտահայտված են նրա ստեղծագործությունների՝ ասամբլաժների, տիկնիկների, խեցեղենի, հարթ և տարածական կուլաժների, գծանկարների, կինոֆիլմերի, էսքիզների միջոցով: Սրանց կիրառումը թույլ է տալիս նրան համարել հազվագյուտ և ինքնատիպ արվեստագետ:

Փարաջանովի ստեղծագործությանը բնորոշ է սերը ժողովրդական արվեստի, բանահյուսության, ժողովրդի անցյալն ու ներկան սնող մշակույթի ակունքների նկատմամբ, վառ պատկերայնությունը, գեղանկարչական մեծ ճաշակը, վավերագրական հավաստիությունը, մտքի փիլիսոփայական խորությունը: Նրա ստեղծագործությունը իր համանմանը չունի համաշխարհային արվեստում: Այն այքի է ընկնում իր բարձր վարպետությանը, վառ երևակայությանը և սրամտությանը: Նրա աշխատանքներին առանձնահատուկ հմայք և փայլ է հաղորդում օգտագործված առարկաների և նյութերի զանազանությունը:



Հ. Բ. Անդերսենին նվիրված «Հրաշք Օրդենսում» ֆիլմի վրա աշխատելու ժամանակ Ս. Փարաջանովը բանտարկվել է և Կիևի շրջանային դատարանի կողմից դատապարտվել հինգ տարի ազատազրկման: Միջազգային կինոգործիչների ճնշման տակ ժամանակից շուտ ազատվել է և վերադարձել է Թիֆլիս՝ հայրական տուն:

1983-88թթ. աշխատել է «Վրացֆիլմ» կինոստուդիայում, որտեղ նկարահանել է «Լեգենդ Սուրամի մասին», «Փիրոսմանի» և «Աշուղ Ղարիբ» ֆիլմերը, որոնց մեծ մասի սցենարների հեղինակն է: Շուրջ քսան սցենարներ, այդ թվում՝ «Արա Գեղեցիկ», «Սասունցի Դավիթ», «Շուշանիկի չարաքանքները», «Արարատ լեռան գանձերը» այդպես էլ չիրականացան: Նրա ֆիլմերն արժանացել են միջազգային մրցանակների:



Կինոռեժիսոր-նկարչի գեղանկարների առաջին ցուցահանդեսները բացվել է 1985-ին Թիֆլիսի Կինոյի տանը, իսկ հաջորդ երկու ցուցահանդեսները կազմակերպվել են Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանում:

1989-ին «Հայֆիլմ» կինոստուդիայում ռեժիսորը սկսեց «Խոստովանանք» ինքնակենսագրական ֆիլմի աշխատանքները: Հազիվ սկսած նկարահանումները ընդհատվեցին Ս. Փարաջանովի առողջական վիճակի վատթարացման պատճառով: Նա վախճանվեց Երևանում՝ 1990-ին:

«Փարաջանովի հեռանալով՝ կինոյի աշխարհը կորցրեց իր «կախարհներից» մեկին», - այսպես արտահայտվեցին համաշխարհային մշակույթի և կինոյի խոշորագույն գործիչները: Ժամանակակիցների կողմից բարձր գնահատված նրա պոետիկական կինոլեզուն՝ յուրահատուկ ներդրում էր կինոարվեստում: Սերգեյ Փարաջանովի գեղագիտության համակարգում առանձնակի տեղ է զրա-

1991-ին Երևանում բացվեց հանճարեղ ռեժիսոր և արվեստագետ Սերգեյ Փարաջանովի թանգարանը: Թանգարանի հավաքածուի հիմնական մասը նրա աշխատանքներն էին՝ գծանկարներ, ֆիլմերի համար արված էսքիզներ, տիկնիկներ, զլխարկներ. ինչպես նաև կենդանության օրոք նրա կամքով, Երևան տեղափոխված թիֆլիսյան տան կահ-կարասին և անձնական իրերը: Թանգարանում պահպանվում են ռեժիսորի նամակները՝ ուղղված Լիլի Բրիկին, Ա. Կարկովսկուն, Յու. Նիկոլինին և մշակույթի այլ գործիչների: Թանգարանի ցուցադրությունում ընդգրկված է շուրջ 250 ստեղծագործություն: Երկու հատուկ սենյակներում վերականգնվել են արվեստագետի թիֆլիսյան տան և կիևյան բնակարանի ներքին հարդարանքի որոշ հատվածներ:

Այս տարիների ընթացքում մեծ կինոգործի մասին նկարահանվել է մոտ երկու տասնյակ ֆիլմ, իսկ թանգարանը կազմակերպել է բազմաթիվ ցուցահանդեսներ, այդ թվում՝ Կաննում, Սալոնիկում, Մոսկվայում, Հռոմում, Լոնդոնում, Լոս Անջելեսում, Թեիրանում և այլուր: Երևանում թանգարանը մեծ մասսայականություն է վայելում, որտեղ կյանքի են կոչվել Սերգեյ Փարաջանովի արվեստի գեղարվեստական և ցուցադրական սկզբունքները:

ՄՐՆԱԿ ԳԱՐԻԻԵԼՅԱՆ



Մ Ա Ղ Ա Կ Պ Ա Ր Թ Ե Վ



Չորրորդ դարի վերջին քառորդում, երբ Հայաստանը դարձել էր կռվախնձոր բյուզանդական և պարսկական տերությունների միջև, գոյության կռիվ և ինքնապահպանման խնդիր էր առաջացել: Այդ ժամանակ հայ ժողովրդի պատմության մեջ բեկունային իրադարձություն

մակարգման հարցով, մոտ վեց գլխից բաղկացած **կանոնական թղթի** հեղինակ է, որտեղ արժարժվում են եկեղեցական, ամուսնա-ընտանեկան և աշխարհիկ դասերին վերաբերող հարցեր: Կանոնները դրսևորում են տվյալ ժամանակաշրջանի ներքին կյանքն իր մանրամասներով՝ կենցաղ, բարքեր, սովորույթներ: Հետագայում **կանոնական** այս **թուղթը** գետեղվել է Հայոց Կանոնագրքում: Մ. Մաշտոցի հետ միասին կազմել է «Մաշտոց» կղզվող ծեսերի և օրհնությունների գիրքը: Սահակ Պարթևը հեղինակ է շարականների, ինչպես օրինակ՝ Ավագ շաբաթվա կարգի շարականները, որոնք աչքի են ընկնում իրենց պարզ ու հստակ լեզվով և քնարականությամբ: Որպես եկեղեցու հովվապետ՝ Սահակ Պարթևը հղել է մի շարք թղթեր ժամանակի աշխարհիկ և հոգևոր իշխաններին՝ Թեոդոսիոս կայսերը, Անատոլիոս զորավարին, Ատտիկոս եպիսկոպոսին, որոնցում խոսվում է, օրինակ, Հայաստանի հունական հատվածում հայ եկեղեցու իրավասության մասին (քանի որ Հայաստանը 387թ. բաժանվել էր երկու մասի):

տեղի ունեցավ՝ Հայոց գրերի գյուտը, նրանով պայմանավորված հայկական դպրոցների ստեղծումը և ազգային կրթությունը, քարգմանական մշակույթի բուռն զարգացումը, որոնք նպաստեցին հայ հոգևոր և մտավոր կյանքի զարգացմանը, եկեղեցու հեղինակության և հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացմանը: Սրանք, ըստ էության, պիտի հանդիսանային այն կենսունակ միջոցները, որոնցով հայ ժողովուրդը պիտի պայքարեր իր գոյության ու զարգացման համար: Պետության կողքին հիմնական դերը ստանձնել էր եկեղեցին:

Սահակ Պարթևի անունով հայտնի են **դավանաբանական թղթեր**՝ Կոստանդնուպոլսի Պրովոպատիարքին ուղղված, որը պատասխան նամակ էր: Այս թուղթը իր մեջ ամփոփում է քրիստոնեական դավանանքին վերաբերող այնպիսի հարցերի քննություն, որոնք այդ ժամանակաշրջանում բազմաթիվ վեճերի առիթ էին հանդիսացել: Այստեղ հստակ կերպով արտահայտվում է հայ եկեղեցու դիրքորոշումը՝ Քրիստոսի մարդեղության վերաբերյալ. «Որովհետև յանձն առավ լինել մարդ կատարեալ Աստուածածին Մարիամէն, Ս. Հոգիով, շունչ եւ մարմին առնելով ճշմարտապես եւ ոչ կարծիօք, այսպես եւ իրագործեց մեր մարդկութիւնը փրկել: Նա ճշմարտապես չարչարուեցաւ, ոչ թէ որովհետեւ ինքը պարտաւոր էր չարչարուիլ, որովհետեւ Աստուածութիւնը ազատ է չարչարանքներէն, այլ մեզ համար յանձն առաւ չարչարանքները, խաչուեցաւ եւ թաղուեցաւ եւ երրորդ օրը հարութիւն առաւ եւ համաբարձաւ երկինք եւ մտաւ: Հօր աջ կողմը եւ պիտի գայ դատելու ողջերին եւ մեռելներին»: Նա հեղինակ է աստվածաբանական բնույթի թղթի՝ ուղղված Ակակիոսին: Հայ եկեղեցին կրոնական ու քաղաքական լուրջ վտանգների էր դիմագրավում, և վերը նշված երկու թղթերն էլ ուղղված էին հայ եկեղեցու դավանանքը պաշտպանելուն և զանազան աղանդների դեմ պայքարին:

Ահա այսպիսի բարդ իրավիճակում է պայրել և գործել Սահակ Պարթև կաթողիկոսը, որի դերը հայոց պատմության մեջ, հիրավի, մեծ է. նրա ջանքերով հայ եկեղեցին, մշակույթը և դպրոցը ստանում են ազգային նկարագիր: Մովսես Խորենացին և Կորյունը վկայում են նրա բազմակատակ եկեղեցական, քաղաքական, մշակութային գործունեության մասին:

Սահակ Պարթևը՝ որպես ժամանակի հզոր քաղաքական ու մշակութային գործիչ, իր ազգամեր գործունեությամբ մեծ ազդեցություն թողեց իր ժամանակի պատմական ընթացքի վրա:

Ծնվել է 348թ. Կեսարիայում, Ներսես Մեծ Պարթևի որդին է, ուսանել է Կեսարիայում, Կոստանդնուպոլսում, Ալեքսանդրիայում՝ հմտանալով ասորերենի և հունարենի մեջ: 370թ. ամուսնացել է և ունեցել մեկ դուստր՝ Սահականույշին, որն էլ սպարապետ Վարդան Մամիկոնյանի մայրն էր: 386թ. (կամ 387թ.) Սահակ Պարթևը դարձել է Հայոց կաթողիկոս: 428թ. պարսից արքայի կողմից դավադրաբար իրավիճվել է Տիգրան (հայոց Արտաշես արքայի հետ) և ձերբակալվել: 432թ.՝ հայերի դժգոհությունները մեղմելու համար, Պարսից Վռան 5-րդ արքան, ազատելով Սահակ Պարթևին, նրան վերապահել է Մեծ դատավորության պաշտոնը, եկեղեցական տուրքերի տնօրինությունը և ձեռնադրության իրավունքը: Նա մահացել է 438-ին՝ Բլուր կոչվող գյուղում, թաղվել՝ Աշտիշատում: Եկեղեցին նրան դասել է սրբերի շարքը:

ԱՇԽԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԵՊՅ աստվածաբանության ֆակուլտետի հայ-գործ

Սահակ Պարթևը Մեսրոպ Մաշտոցի և աշակերտների հետ միասին հայոց գրերի ստեղծումից հետո ձեռնամուխ է լինում հայկական դպրոցների բացմանը, Աստվածաշնչի, Ծիսական մատյանների, Պատարագամատույցի, ժամագրքի, ինչպես նաև եկեղեցու հայրերի զանազան աշխատությունների, Ս. Գրքի մեկնությունների, և այլ իմաստասիրական և պատմագրական երկերի թարգմանությամբ: Սահակ Պարթևը մասնակցել է Աստվածաշնչի թարգմանությանը, զբաղվել եկեղեցական կանոնների սահմա-

Գրականության.
1. Կորյուն, «Վարք Մաշտոցի», Երևան, 1981թ.,
2. Մովսես Խորենացի, «Պատմություն հայոց», Երևան, 1968թ.,
3. Գիրք Թղթոց, Նորայր Արք. Պողարեան, 1901թ.,
4. «Դավանանք Հայ Եկեղեցույ», Շահե Արք. Աճեմեան, Էջմիածին, 2001թ.,
5. Կանոնագիրք Հայոց (աշխ. Վ. Հակոբյանի), Երևան, 1964թ.:



ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑԻ

Սուրբ Գայանե եկեղեցին հայկական ճարտարապետության ծաղկման շրջանի լավագույն հուշարձաններից է և իր պատճառաբանված հորինվածքով դասական կատարելության նմուշ: Այն գմբեթավոր-բազիլիկ կոչված տիպի եկեղեցի է, որի ուղղանկյուն հատակագիծն արևելյան կողմից կիսաշրջան արքայի դուռ ու նրա երկու կողմերում գտնվող խողովակներով սերտորեն առնչվում է բազիլիկատիպ եկեղեցիների հատակագծին: Ներքին տարածությունը երկշառք մոթերով բաժանված է երեք նավերի: Մոթերն իրենց վրա են առնում միջին և կողքային նավերը ծածկող թաղերի մի մասի և գմբեթի ծանրությունը: Տաճարի գմբեթապսակ մասում խաչվում են միջին և լայնական նավերը: Իսկ ներքին տարածական ձևերի խաչաձևումը եկեղեցու արտաքին ծավալներում արտահայտվում է երկթեք կտուրների հատումով: Առաջացած քառակուսու չորս սյուների վրա վեր է խոյանում ութանիստ մի թմբուկ (գմբեթ պահող հիմք), որն իր վրա է կրում գմբեթի վեղարը և ընդգծում կառույցի բարձրությունը: Եկեղեցին ունի երեք դուռ. հյուսիսային և հարավային դռները դեմդիմաց են, օգտագործվում է հիմնականում արևմտյան դուռը: Խորանի միջից բացվում է մի դուռ, որը տանում է Ավագ սեղանի տակ գտնվող տապանատուն, որտեղ թաղված է Գայանե կույսը: Եկեղեցին հիմնովին վերանորոգվել է 1652-ին՝ Փիլիպոս կաթողիկոսի օրոք: Այդ մասին տեղեկություններ է տալիս Առաքել Դավրիժեցին: Յետագայում շինարարական աշխատանքներ են կատարվել Եղիազար կաթողիկոսի գահակալության տարիներին (1688թ.): Այդ ընթացքում տաճարի արևմտյան պատին կից կառուցվում է երեք գմբեթներով պսակված գավիթ, որի երկու ծայրերին կառուցում են փոքր զանգակատուն՝ պսակված երկու խորաններով մեկը՝ Սբ. Պետրոս, մյուսը՝ Սբ. Պողոս առաքյալների անուններով: Պարսպապատվում է վանքի շրջապատը, իսկ արևմտյան կողմից կառուցված է թաղածածկ սրահ:

Այդ ժամանակ կատարված վերաշինական աշխատանքների շնորհիվ Սբ. Գայանեի տաճարը հիմնովին

վերանորոգվել և մեզ է հասել այն ժամանակվա տեսքով: Վերաշինական աշխատանքներ են իրականացվել նաև 1872-ին Գայանե վանքի վանահայր Վահան Բախտամյանցի վանահայրության օրոք:

Յետագայում Սբ. Գայանեի տաճարում, վերանորոգման աշխատանքներ են սկսվում 1959-ին՝ Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության շրջանում: Վերանորոգվել, սալարկվել է հատակը, ներսի և դրսի պատերի քայքայված քարերը փոխարինվել են նորերով: Վերանորոգվել է տանիքը, դռներն ու



պատուհանները: Տեղական տուֆով ցանկապատել են վանքի շրջապատը: Վանքի հյուսիսային կողմի և միաբանական գերեզմանոցի պարսպապատումը իրականացվել է ճաղերի միջոցով: Եկեղեցու ներսում Ավագ խորանը փոխարինվել է նորով, այստեղ տեղադրել է Մայր տաճարից հանված Իջման սեղանի մարմարյա գմբեթը: Այդ ժամանակահատվածի շինարարական աշխատանքներից է մատաղարանի կառույցը: Մատաղարանի դիմաց (ճարտ. Ռ.Իսրայելյանի նախագծով) կառուցվում է նոր աղբյուրը, որի վրա փորագրված է «Շինեցայ աղբիւրս այս ի յիշատակ Ա. Դերձակեան-Սերոբեան, ծնեալ ի Կ.Պօլիս ամիս տեառն 1886, վախճանեալ ի Նիւ Եորք 1859 ԱՄՆ Արդեանք Քեռ Նորա Զրանոյշի»:

Յետագա տարիներին վանքի բակի կամարակապ դարպասի երկու կողմերն ընկած միահարկ շենքերը նորոգվեցին և հարմարություններով օժվեցին՝ որպես երեցտուն և բնակարան:

Սբ. Գայանե եկեղեցու տարածքում գործում է Մայր Աթոռի «Քարոզչական կենտրոնը», որը հիմնադրվել է Գարեգին Ա կաթողիկոսի գահակալման տարիներին: Եկեղեցու բակում են գտնվում բարձրաստիճան հոգևորականների և անվանի մարդկանց գերեզմանները: Նրանց մեջ են Րաֆֆու հերոսներից Խենթի, Ջորավար Անդրանիկի զինակիցներից Սմբատ Բորոյանի՝ Մախլուտոյի, Սարդարապատի հերոս զորավարներից Դանիել Բեկ Փիրումյանի, Ամենայն հայոց սոխակ՝ Լուսինե Ջաքարյանի շիրիմները:

ԳԱՅԱՆԵ ՀՈՒՍԵՓՅԱՆ



ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(պայմանները, ժամանակը, միջավայրը)

Հայ գրավոր մշակույթն իր առաջին քայլերն արեց ամենից առաջ թարգմանության բնագավառում: Մեր մատենագրությունը, բնականաբար, պետք է ձևավորվեր հարևան քրիստոնյա ժողովուրդների գրավոր փորձի և նվաճումների յուրացման հիմքի վրա: Դա էր պատճառը, որ գրերի գյուտից հետո՝ դպրոցների ստեղծմանը զուգընթաց կատարվում էր թարգմանչական ծրագրված աշխատանք, որը գերմանացի հայագետ Ֆրանց Ֆինկը որակում է՝ որպես «մշակույթի փոխանցման գիտակցված ծրագիր»: Դրանով է պայմանավորված, նախ և առաջ, «Աստվածաշունչ» մատյանի թարգմանությունը, ապա և արարողական գրքերի, հայաբնակ երկրների, մեկնողական, կանոնական, սրբախոսական աշխատությունների հայցումը, որն անհրաժեշտ էր Հայոց եկեղեցու անմիջական կարիքների բավարարման և հայ ազգային մատենագրության զարգացման համար: Սկզբնական շրջանում թարգմանությունները կատարվել են բացառապես ասորերենից և հունարենից. Աստվածաշունչը, վերջնականապես, հայերեն է թարգմանվել է 430-ական թվականների վերջերին:



5-րդ դարի Հայաստանի քաղաքական վիճակը իր անդրադարձն ուներ մշակութային և հոգևոր կյանքում: Երկփեղկված Հայաստանը պայմանավորում էր երկփեղկվածություն նաև այլ մարզերում: Հայաստանի արևմտյան՝ բյուզանդական մասում քաղաքական և մշակութային ոլորտներում առկա ճահճացած վիճակը ամբողջովին ենթարկված բյուզանդական ազդեցությանը, կրոնական, մշակութային և քաղաքական առաջընթացի հիմնական ծանրությունը «պարտադրում» էր Հայաստանի արևելյան մասին, որտեղ (չնայած Պարսկաստանի գերիշխանության տակ գտնվելուն) դեռևս իշխում էր Արշակունի հայ թագավորը: Եկեղեցին, որ առավել ազատ և ինքնուրույն էր գործում Հայաստանի պարսկական մասում, ստիպված էր քույր եկեղեցիներից հարաբերություն ունենալ առավելաբար այն եկեղեցիների հետ, որոնց հետ շփումը պարսից արքունիքում որևէ դժգոհություն չէր առաջացնի: Այս պայմաններում ավելի նպաստավոր էին կապերն ասորական եկեղեցու, քան Պարսկաստանին հակառակորդ բյուզանդական եկեղեցու հետ:

4-րդ դարը քրիստոնեական ընդհանրական եկեղեցու համար բավականին դժվար և դավաճաբանական վեճերով ու պայքարներով հագեցած ժամանակաշր-

ջան էր: 325 թվականին Նիկիայում Արիոսի դեմ և 381 թվականին Կ.Պոլսում Մակեդոնի դեմ հռչակած բանադրանքներով ու նզովքներով մերժվում է նրանց հերետիկոսությունները, և այս երկու Տիեզերաժողովների արդյունքում՝ հռչակվում է հավատո հանգանակ, ուր բանաձևվում է Ս. Երրորդության խորհուրդը՝ հռչակելով մեկ Աստված, բայց «երեք անձինք մի բնութիւն»: 431 թվականին Եփեսոսում գումարվեց Տիեզերական երրորդ ժողովը, որտեղ դատապարտվեց նաև Նեսթորի վարպետությունը, ձևավորվեց ու կազմվեց ընդհանրական եկեղեցու Հավատո հանգանակը, որն այժմ էլ կարդացվում է Ս.Պատարագի ժամանակ՝ մեր եկեղեցիների բեմերից: Հայ եկեղեցին էլ ուղղակի, թե միջնորդավորված հաղորդակից էր ընդհանրական եկեղեցուն տեղի ունեցող այս իրադարձություններին և, բնականաբար, դրանք չէին կարող իրենց անդրադարձը չունենալ մեր եկեղեցու ներքին կյանքում: Ընդհանրական եկեղեցու հետ հայ եկեղեցու սերտ կապերն աստիճանաբար թուլանում էին, քանի որ Հայաստանում քաղաքական աննպաստ իրավիճակ էր տիրում պայմանավորված պարսկական և բյուզանդական ձուլիչ քաղաքականությամբ (1):



Ողջ 5-րդ դարը դառնում է քաղաքական, մշակութային ու կրոնական պայքարի մի շրջան, որը կարելի է որակել որպես գոյամարտ՝ «Վասն հաւատոյ, վասն հայրենաց»:

Ահա այս պայմանների առկայությամբ է, որ սկիզբ է առնում մշակութային, կրոնական ու ազգային այն զարթոնքը, որ ազգի ճակատագիրն էր փոխելու: Եվրոպայի համար 5-8-րդ դարերը խավարի շրջան էին, իսկ հայոց մեջ՝ լուսավորության ու զարթոնքի, որ ամփոփվում է մեկ բառի մեջ՝ **ՈՍԿԵՂԱՐ**:

ԱՐՏԱԿ ՕՅԱՆՅԱՆ

Գրականություն.

1. Մեսրոպ Մաշտոց, Հոդվածների ժողովածու, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, Երևան, 1962թ., էջ 26-29:




«ՄԵՂՈՒ» ԵՐԳԻԾԱԿԱՆ ՀԱՆԳԵՍԸ



Արևմտահայ իրականությունը հայ մամուլի զարգացման խոշորագույն կենտրոններից մեկն է: Այստեղ է սկզբնավորվել հայ երգիծական մամուլը:

Երգիծանքը միշտ էլ ծնվում է այն ժամանակ, երբ հասարակական կյանքում տեղի են ունենում հեղաբեկումներ, ուստի արևմտահայ իրականության մեջ երգիծական ընկալումների երևան գալը 19-րդ դարի երկրորդ կեսերին ժամանակի թելադրանքն էր: Իսկ դա այն ժամանակն էր, երբ զարթոնք էր ապրում ազգային ազատագրական գաղափարախոսությունը, և արևմտահայ 1860-ականների սերունդը (ի դեմս Սվաճյանի, Օտյանի, Պարոնյանի և մյուսների), կրթվելով Եվրոպայում և ազդվելով եվրոպական առաջադեմ գաղափարախոսներից, վերադառնում են Արևմտյան Հայաստան և փորձում փոփոխություն մտցնել արևմտահայության կյանքում:

Դեռևս 1700-ականներին Կ. Պոլսում երևում են երգիծական բնույթ ունեցող ծաղրաբերթոններ, որոնք փակցվում էին պատերին՝ մարդկանց ժամանակն ավելի հետաքրքիր դարձնելու համար: Արդեն 1840-ականներին՝ սկզբնավորումից մոտ մեկ տասնամյակ անց, արևմտահայ մամուլում երևան են գալիս երգիծական բնույթի հոդվածներ: 1848-ին ծնված «Բյուզանդիոն» պարբերականի երևան գալն արդեն խոսում էր այն մասին, որ արևմտահայ իրականությունում երգիծանքը սկսում է տեղ զբաղեցնել, հաստատվել, իսկ կայունաճ սկսում է 1855-56թթ., երբ Պոլսում հրատարակվում է «Չվարձախոս» երգիծական պարբերականը: Արևմտահայ երգիծանքը որակական նոր փուլ է մտնում և իր բարձրությանն հասնում Պոլսում հրատարակված «Մեղու» հանդեսի էջերում: «Մեղու»-ն ընդհատումներով հրատարակվել է 1856-65թթ. և 1870-74թթ.: Հիմնադիր-խմբագիրն եղել է Հարություն Սվաճյանը, այնուհետև՝ Աբրահամ Մուրադյանը, Հովհաննես Հովհիվյանը, իսկ 1872-74թթ.՝ հայ մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանը:



Հ. Սվաճյանը պարբերականի հրատարակությունը նախաձեռնել և սկսել է արևմտահայ հասարակական-քաղաքական կարևորագույն դեմքերից մեկի՝ Գ. Օտյանի աջակցությամբ: Առաջին մի քանի համարները հրատարակում են միասին, այնուհետև Գ. Օտյանը հեռանում է՝ հրատարակության գործը թողնելով Հ. Սվաճյանին: Նրա հեռանալուց հետո պարբերականն ընդունում է միայն ժողովրդավարական բնույթ:

«Մեղու»-ն ժողովրդավարական ուղղվածության պարբերական էր, և, ընդհանրապես, բոլոր երգիծական պարբերականներն ունեին դեմոկրատական առաջադիմական ուղղվածություն: Դրանք իրենց ժամանակի առաջամարտիկներն էին, քանի որ երգիծանքը՝ որպես ժանր, որպես քաղաքականություն, իրականության երգիծական դրսևորում, միշտ էլ ուղղվում է հնի մերժմանը: Սվաճյանի խմբագրության տարիների «Մեղու»-ն անդրադարձել է ազգային սահմանադրությանը, աշխարհիկ լեզվին, գրականությանը, գավառահայության կյանքին: «Մեղվի» սվաճյանական առաքելությունն այն էր, որ նա 1862-ին շրջագայում է Արևմտյան Հայաստանի գավառներով, ծանոթանում գավառահայի կյանքի պայմաններին, վերադառնում և այդ ամենը ներկայացնում իր պարբերականում՝ «Մեշուխեզան» ստորագրությամբ: Դա նրա կեղծանունն էր, նա խայթում էր

արևմտահայ իրականությունում առկա խորք և հոռի բարքերը, որոնք արժանի էին խայթոցի:

Հ. Սվաճյանն ու Միքայել Նալբանդյանը՝ արևմտահայ և արևելահայ դեմոկրատիայի պարագլուխները, գաղափարական և ընկերական մտերմիկ հարաբերությունների մեջ էին: Նրանք բարձր էին գնահատում մեկմեկու, հատկապես Սվաճյանը՝ Նալբանդյանին: Հայության երկու հատվածների գաղափարական, մշակութային և բարոյական մերձեցման գործում նրանք են համարվում հիմնադիրներ: Սա Մ. Նալբանդյանի երազանքն էր՝ մերձեցնել արևմտահայ իրականությանը, որի իրագործումը նա տեսնում էր ի դեմս Հ. Սվաճյանի գործի:

Հանդեսը Հ. Սվաճյանի խմբագրման տարիներին վերածվում է տաղանդների օրրանի: Չնայած որ ուներ երգիծական բնույթ, սակայն այստեղ հանդես են եկել արևմտահայ շատ ստեղծագործողներ՝ իրենց ոչ երգիծական գործերով: Օրինակ՝ պարբերականում է առաջին անգամ հրատարակվել Պ. Դուրյանի «Սիրել», «Դրժել» բանաստեղծությունները: Սակայն խմբագրի ամենամեծ ծեռք բերումը հայ հրապարակագրությունում այն է, որ ի հայտ է բերել Հ. Պարոնյան երգիծաբանին: Թեև Հ. Սվաճյանի երգիծանքը գավառական մակարդակի էր, սակայն նրա գրչով արևմտահայ մամուլում հիմք է դրվում երգիծանքին և երգիծական գրականությանը, իսկ նա, և իր համախոհ Մ. Նալբանդյանը համարվում են հայ երգիծանքի նախակարապետներ:

1870-ին, երբ Հ. Սվաճյանը վերաբացում է «Մեղու»-ն, իրեն համագործակցության է վերցնում Սկյուտարի վարժարանի երիտասարդ ուսուցիչ Հակոբ Պարոնյանին: Խմբագիրն այն կարծիքին էր, որ երիտասարդը կկարողանա փոխարինել իրեն: Վերջինս ոչ միայն փոխարինեց, այլև իր բարձրակետին հասցրեց արևմտահայ երգիծանքը: Եթե նրա օրոք «Մեղվի» երգիծանքը գավառական մակարդակից չէր բարձրանում, ապա Հ. Պարոնյանի գրչով այն ստանում է դասական բնույթ: «Մեղու»-ն ավելի հեռու է ճախրում և ավելի ուժեղ է խայթում, չնայած որ Հ. Պարոնյանը դեռ սկսնակ երգիծաբան էր՝ իր շուրջը գննող, ուսումնասիրող: Առաջին իսկ համարներից խմբագիրը նկատում է տաղանդին, և որոշ ժամանակ անց խմբագրությունը հանձնում է նրան:

Ինչպես «Մեղվում», այնպես էլ Հ. Պարոնյանի մյուս պարբերականներում, երգիծանքն արտահայտվում է իր ամենատարբեր դրսևորումներով: Պարոնյանը եղել և մնում է մեր ամենամեծ երգիծաբանը՝ չզերազանցված ցայսօր: Նրա մոտ ուժեղ էր հատկապես սոցիալական երգիծանքը. հունձրը շատ ենթատեքստային էր, նուրբ, և առաջին հայացքից կարծես թե անըմբռնելի, այսինքն՝ դա երգիծանքի դրսևորման մի եղանակ էր, որի ընկալման համար պետք էր շատ պատրաստված լինել: Երգիծաբանը դասականության է հասցրել հայ երգիծանքը, սոցիալական ծայրահեղ վատ պայմաններում, մեկը մյուսի հետևից պարբերականներ հրատարակելի՝ չխնայելով առողջությունն ու իր ունեցած սուղ նյութական միջոցները՝ զարգացնելով երգիծանքի տարաբնույթ ժանրերն ու արտահայտչամիջոցները:

ԼԻԼԻԹ ՀՐՈՒԹՅՈՒՆՆԱՆ



ՊՈԼՍԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԻ ԳՈՅԱՑՈՒՄԸ



Կոստանդնուպոլսում հայերն ապրել են օսմանյան տիրապետությունից դեռ շատ առաջ, բյուզանդական կայսրության ժամանակներում: Հայերն այստեղ ունեցել են Սբ. Սարգիս եկեղեցի և իրենց առաջնորդ-եպիսկոպոսներ. ուրեմն, նաև համայնք կամ նրանց շուրջ խմբված հանրություն: Կ. Պոլիսը թուրքերի կողմից նվաճվելուց գրեթե մեկ և կես դար առաջ՝ 1307-ի Սսի ժողովում, հիշվում է «Ստինպոլայ հայերուն» եպիսկոպոս Հուսիկը, իսկ 1403, 1433 և 1438թթ. հիշվում են համապատասխանաբար Կ. Պոլսի հայերի արքեպիսկոպոս Տեր Ջաքարի-հան, Հովհաննես եպիսկոպոսը և Հովակիմ արքեպիսկոպոսը: Այս վերջինն էլ համարվում է Կ. Պոլսի հայերի պատրիարքի տիտղոսը կրող առաջին հոգևոր առաջնորդը (ըստ Մ. Ջամչյանի):

Բյուզանդական շրջանում Կ. Պոլսի հայերը հազիվ թե նշանակալի թիվ կազմող համայնք ունենային, որովհետև հայտնի են բյուզանդական պետության և եկեղեցու դարավոր դավանական հալածանքները հայերի հանդեպ, որ մասամբ մեղմացել էր վերջին Պալեոլոգների կայսրության շրջանում: Ավելացնենք, որ մինչև օսմանյան նվաճումը, հայ վաճառականական գաղթօջախ էր գոյացել Կ. Պոլսի մերձակա Կալաթայում (Պալաթա, Բերա), որն այդ ժամանակ չէր մտնում Կ. Պոլսի շրջագծի մեջ, այլ ճեմովազների անկախ բնակավայրն էր և որտեղ գործում էին Սբ. Սարգիս և Սբ. Գ. Լուսավորիչ եկեղեցիները: Ժամանակակիցների վկայությամբ՝ 1453-ի մայիսին թուրքերի կողմից պաշարված Կ. Պոլսի պաշտպանների մեջ հերոսաբար մարտնչել են հայկական ջոկատները, անշուշտ, որպես բյուզանդական կայսեր դաշնակիցներ կամ վարձկաններ:

1453-ի մայիսի 29-ին, կոտրելով պաշտպանների հզոր դիմադրությունը, թվական մեծ գերակշռություն ունեցող թուրքերը ներխուժեցին քաղաք: Պաշտպանների մի մասը բնակչության հետ կոտորվեց տեղում, մի զգալի մասն էլ գերեվարվեց: Քաղաքը ենթարկվեց կողոպուտի և թալանի: Քաղաքը դարձնելով իր մայրաքաղաքը՝ սուլթան Մեհմեդը ձեռնարկեց այն վերաշինելու, վերաբնակեցնելու և իր հետագա նվաճումներին համապատասխան մահմեդական խոշոր կենտրոն ստեղծելու գործին: Դրա համար անհրաժեշտ էր վերակառուցել ավերված և մարդաթափ եղած Կ. Պոլիսը և այն լցնել բնակչությամբ: Նվաճողները ձեռնամուխ եղան ոչ միայն թուրքերի, այլև իրենց հնազանդեցրած տարածքների ոչ մահմեդական

բազմությունների տեղափոխմանը Կ. Պոլիս, որը տևեց տասնամյակներ և նույնիսկ մեկ հարյուրամյակից ավելի ժամանակաշրջան: Նվաճված շրջաններից բռնի տեղափոխման ենթարկվեցին բազմաթիվ քրիստոնյաներ՝ հույներ, հայեր, սերբեր, բուլղարներ և այլ ազգության արհեստավորներ ու առևտրականներ, իրենաներ, արաբներ և այլն: Նրանց շնորհներով, ձեռներեցությամբ ու ճարտարությամբ սուլթանը հետամտում էր Կ. Պոլիսը ծաղկած մայրաքաղաք դարձնել: Գավառներից բնակչության տեղահանումները կատարվում էին բարբարոսական եղանակներով՝ բռնություններով ու թալանով, բռնի կրոնափոխմամբ և այլն: Առաջին տեղահանվածներից էին Անկյուրիայի (Անկարա) հայերը (1450-ականներ) կամ դրանից քիչ առաջ Կ. Պոլիս տեղափոխվեցին Բուրսայի հայերը՝ իրենց առաջնորդ Հովակիմի հետ միասին:

Ժողովուրդների հոծախումբ բռնագաղթերը Կ. Պոլիս՝ մեծ չափերի հասան 1460-70-ականներին, երբ Մեհմեդը հերթական նվաճումներ արեց սևծովյան շրջաններում՝ Հունաստանում, Տրապիզոնում, Ղրիմում, Բալկաններում, Կարամանում և այլուր: Ողբերգական էր Ղրիմի (Կաֆա) բնակչության, այդ թվում և բազմահազար հայերի գերեվարումն ու բռնագաղթը Կ. Պոլիս: Թուրքերը Կաֆան գրավեցին 1475-ի հունիսի 5-ին, արյունալի կոտորածի ենթարկեցին քաղաքի պաշտպաններին, այդ թվում և հայերին: Այստեղ բնակվող ճեմովազներից, հայերից ու հույներից շուրջ 40 հազար մարդ գերեվարվեց և քշվեց Կ. Պոլիս: Սուլթանին նվեր ուղարկվեցին 1000-ի չափ գեղեցիկ աղջիկներ և պատանիներ, բազմահազար դեռահասներ ենիչերի դարձվեցին:

1464-79թթ. ընթացքում Մեհմեդը մի քանի անգամ արշավեց Կարամանի տարածքներ՝ այստեղից ևս բռնագաղթեցնելով հույն, հայ և թուրք բազմաթիվ ընտանիքների: Սրանց հետ էին նաև Կիլիկիայի որոշ շրջանների հայերը: Առհասարակ, Կարամանի տարածքներից իրականացված բռնագաղթերի հետևանքով հայերը բազմամարդ դարձան Կ. Պոլսում՝ հույներից, ապա իրենաներից հետո (բնականաբար մահմեդական թուրքերը իրենց թվով գերակշռում էին նրանց): Հայ գաղթականները բնակեցվեցին Սամաթիայի եկեղեցու (Սբ. Գեորգ) շուրջ ծավալվող ընդարձակ մի թաղում, որը մինչև 1805թ. կոչվում էր Կարաման մահալլեսի: Երեմիա Քյոմուրճյանը (17-րդ դարի նշանավոր պատմաբան, բանասեր և գրող) իր ժամանակի Սամաթիայում հաշվում էր ավելի քան 1.000 տուն հայ, այսինքն՝ ավելի քան 5.000 մարդ և այդ միայն Սամաթիայում: 1479-80թթ. Կ. Պոլսում հայտնվեցին հայ ընտանիքներ Ամասիայից, որոնց այստեղ էին բերել բռնությամբ:

Բռնագաղթերը շարունակվեցին ամբողջ 16-րդ դարում՝ Մեհմեդի հաջորդների ժամանակ ևս: 1514թ. պարսիկներից գրավելով Թավրիզը՝ Սելիմ 1-ինը դարձյալ ելնում էր Կ. Պոլիսը հնուտ արհեստավորներով ու առևտրականներով (ինչպես նաև հողագործներով) ապահովելու պահանջից: Նրա բռնագաղթեցրած հայերը «ճարտար» արհեստավորներ էին: Հայ բնակչության բռնագաղթերը շարունակվեցին մինչև 1580-ականները: 1534թ. Սուլեյման Կանունի սուլթանը Կ. Պոլիս քշեց հայերիին՝ Վան-Վասպուրականի շրջաններից, այսպես՝ մինչև 1578-79թթ.:

Հայ գաղթականության վերջին խոշոր հոսքը Կ. Պոլիս կապվում է 1590-ականների 2-րդ կեսերից Օսմանյան



Թուրքիայում ծայր առած և մինչև 17-րդ դարի 2-րդ տասնամյակը ձգվող ջալալիների ապստամբության հետ: Ջալալիները անասելի դաժանությամբ ու ամայացնող արշավանքներով տակնուվրա արեցին գրեթե ամբողջ Հայաստանը, Փոքր Ասիան, թուրքերի արևելյան տիրույթները: Հայ բնակչությունը, փախչելով այս նոր արիավիրքից, տեղահան եղավ իր

հնամենի հայրենիքից դեպի Ղրիմ, Արևելյան Եվրոպա, Թուրքիայի և Պարսկաստանի ապահով շրջաններ՝ գոյացնելով բազմամարդ հայկական գաղթօջախներ: Կ. Պոլիս անցան Երզրումի, Երզնկայի, Կամախի, Ակնի, Թուկատի, Սեբաստիայի, Եվրոկիայի և այլ վայրերի հայերը:

Շահ Աբասի արշավանքների հետևանքով և արևելահայերի մի որոշ հատված տեղափոխվեց Կ. Պոլիս և արդեն 1608թ. գտնվում էր օսմանյան մայրաքաղաքում: Սիմեոն Լեհացին՝ այս իրադարձությունների ժամանակակիցը, գրում էր, որ Կ. Պոլսում հայերի թիվը հասնում էր 40 հազարի: Այս ժամանակաշրջանում Կ. Պոլիսը տնքում էր տարբեր ցեղերի ու դավանանքների գաղթականների բազմամարդությունից, որի հետևանքով մայրաքաղաքի իշխանությունների առջև ծառայող փախստականներին որևէ կերպ տեղավորելու, համաճարակների դեմն առնելու, պարենային մատակարարման և այլ հիմնահարցեր: Խնդիրը մասամբ լուծվելու էր արևելյան բռնակալությունների հատուկ գործելակերպով. եթե մի ժամանակ սուլթանները բռնությամբ էին վերաբնակեցնում քաղաքը, այժմ սկսեցին, դարձյալ բռնությամբ, հակառակ գործողությունը՝ Ահմեդ 1-ինը և Սուրադ 4-րդը հրամայեցին մայրաքաղաքից վտարել ու բնակության նախկին վայրերը քշել գաղթականներին: 1609 և 1635թվականների աքտորները («այուրգյուն») իրականացվեցին վայրագ մեթոդներով, որոնցից տուժեցին նաև հայ գաղթականները: Ժամանակակիցները մեկը գրում է, որ օսմանյան իշխա-

նությունները վճռել են քաղաքում նվազեցնել հայերի թիվը 100 հազարից: Անկախ այս թվի ճշգրտությունից, փաստերը ցույց են տալիս մարդաշատ հայ համայնքի առկայությունը 17-րդ դարում՝ օսմանյան մայրաքաղաքում: Ավելացնենք, որ հայերն ապրում էին նաև Թուփ կափու, Ենիքոյ, Կուն կափու, Էդիրնե կափու և այլ թաղամասերում, ավելացել էր Ղալաթիայում ապրող հայերի թիվը:

Մեհմեդի բռնագաղթերը հասցրեցին Օսմանյան կայսրության մեջ միլեթների՝ կրոնական-ազգային հանրությունների (ոչ մահմեդական) ստեղծմանը: Պետության կողմից ճանաչվեցին ուղղափառ (հույներ, սլավոններ), Հայ Առաքելական եկեղեցու դավանության (գերագանցապես հայեր, ինչպես և ասորիներ, արևելյան այլ եկեղեցիների մի որոշ մասի հետևորդներ) և հրեական համայնքները: Սրանց գլուխ էին կանգնած իրենց հոգևոր առաջնորդները (հույն և հայ պատրիարքներ, հրեա խախամապետ):

Կ. Պոլսում հայերը խմբվեցին իրենց եկեղեցիների շուրջ (15-17-րդ դարեր՝ Աբ. Ստեփանոս, Սուլու Մանսուրի Աբ. Գեորգ և Աբ. Աստվածածին, Աբ. Սարգիս և Աբ. Նիկողայոս, Ղալաթիայի Աբ. Աստվածածին, Աբ. Հրեշտակապետ)՝ դարերի ընթացքում ստեղծելով իրենց համագալին-մշակութային անկրկնելի արժեքները:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ
Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

Նկարներում՝ 1. Պոլիս, 2. Գունգաբուլի Աբ. Աստվածածին Հայոց Մայր Եկեղեցին, 3. Գնալը կղզու Աբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու խորանը:



ԱՂԹԱՄԱՐԻ ՍԲ. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ Ե

Արդեն մեկ ամիս է, ինչ Վանա լճի Աղթամար կղզում գտնվող Աբ. Փրկիչ եկեղեցին վերանորոգվում է:

Տեղեկացնելով այդ մասին՝ թուրքական DHA գործակալությանը տված հարցազրույցում վերանորոգման աշխատանքներն իրագործող կապալառու գործակալության ղեկավար Ջահիդ Ջեյրանլըն ասել է, որ եկեղեցիների վերանորոգման ոլորտում մասնագիտացած ճարտարապետ գտնելու համար հանդիպել է Կ. Պոլսո պատրիարք Սեբրոպ Բ Մութաֆյանի հետ, վերջինս էլ իրեն առաջարկել է Ջաքարիա Միլղանօղլուին: Նա եկեղեցու վերանորոգման աշխատանքներին մինչև վերջ կմասնակցի հենց թուրքահայ ճարտարապետը, ում թեկնածությանը հավանություն են տվել նաև Թուրքիայի վարչապետը, մշակույթի նախարարը և Վանի նահանգապետը:

Գործակալությունը հայտնել է, որ 915-921թթ. հայոց թագավոր Գագիկ Ա-ի կողմից կառուցված եկեղեցու վերանորոգման աշխատանքները ծրագրված են ավարտին հասցնել 2006-ի վերջին:



ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ 85-ԱՄՅԱԿԸ



85 տարի առաջ՝ 1920թ. օգոստոսի 4-ին՝ Ադանայում, հռչակվեց Կիլիկիայի անկախ հանրապետության ստեղծումը: Հաջորդ օրը հրապարակվեց կառավարության կազմը՝ վարչապետ Միհրան Տամատյանի գլխավորությամբ: Սակայն նույն օրը ֆրանսիական իշխանությունները զենքի ուժով ցրեցին կառավարությունը, մի քանի օր անց զինաթափ արեցին հայկական ոստիկանությունը, իսկ սեպտեմբերի 20-ին զինարձակեցին նաև ամբողջ հայկական լեզոնը: Ձինաթափվում և աքսորվում էին հայ կամավորները և ազգային գործիչները, ովքեր, հավատալով դաշնակիցների հավաստիացումներին, Առաջին աշխարհամարտի տարիներին, կռվել էին ֆրանսիական դրոշի տակ՝ Կիլիկիայում՝ Ֆրանսիայի հովանու ներքո, ինքնավարություն ստանալու ակնկալիքով: Սակայն «ասպետական» Ֆրանսիան և նրա դաշնակից Անգլիան պատրաստվում էին ստահակաբար վաճառել ամբողջ կիլիկիահայությանը՝ հակառակ 1915թ. հոկտեմբերի 27-ին Պողոս Նուբար փաշա - ժորժ Պիկո (Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության արևելյան բաժնի պետ) համաձայնության, որով Ֆրանսիան պարտավորվում էր Կիլիկիայում ապահովել հայկական ինքնավարություն, եթե հայերը մասնակցեին Օսմանյան կայսրության դեմ մղվող պատերազմին: Բայց ահա պատերազմի հաղթական ավարտից հետո, կտրուկ փոխվեց Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը:

Ուսումնասիրելով 1919-20թթ. Կիլիկիայի իրադարձությունները և Ֆրանսիայի մերձավորարևելյան քաղաքականությունը՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ Ֆրանսիան, ելնելով իր տնտեսական ու քաղաքական շահերից, պատրաստվում էր անջատ համաձայնության գալ քեմալականների հետ: Եվ որպես այդ համաձայնության փոխատուցում նա պատրաստ էր զոհաբերել և՛ Կիլիկիան, և՛ կիլիկիահայությանը՝ միանգամայն անտեսելով այդ երկրամասի քրիստոնյաներին տված իր խոստումները: Ֆրանսիայի քաղաքական ու ռազմական գործիչները չէին թաքցնում, որ «Ֆրանսիան Կիլիկիան գրաված է՝ իր սեփական շահը միայն ի նկատի ունենալով»: Իսկ քննարկվող ժամանակաշրջանում Սիրիայում, ամրանալու և քեմալական շարժումը իր երեկվա դաշնակցի՝ Անգլիայի և հատկապես՝ Խորհրդային Ռուսաստանի դեմ դուրս բերելու ձգտումը, Կիլիկիայում ունեցած շահերը դարձրել էին երկրորդական:

ՀԱԿՈՒ ՍԱՆՁՅԱԼ

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՔՏԸ

Ստորագրեալքս իրաւասու ներկայացուցիչներ Կիլիկիոյ բոլոր Քրիստոնեայ հասարակութեանց, այսու կը յայտարարենք.

«Նկատելով, որ Կիլիկիոյ մեծ պատերազմին, որպէս հետեւանք, զրաւուեցաւ դաշնակից ուժերով, որ այդ զրաւումը և ֆրանսական վարչութիւնը հոն պահուեցան զինադադարի ամբողջ տեսողութեան:

Նկատելով, որ բոլոր այս միջոցին թուրքերը չդադրեցան խանգարելէ երկրին անդորրութիւնը՝ ներմուծելով մահ, աւեր, արհաւիրք, որով եւ անոնք յայտնօրէն բռնաբարեցին իրենց յանձնառութիւնները եւ զինադադարը:

Նկատելով, որ իրենց այս կացութիւնը մեր կրօնակիցներուն արժեց կեանքը տասնեակ հազարաւորներու, որ ֆրանսական արիւնն եւ միաժամանակ հոսեցաւ առատօրէն մեր մարտիրոսներուն հետ:

Նկատելով, որ նոյնիսկ թուրքիոյ հետ կնքելի խաղաղութեան վաղորդեանին մեր շատ մը քաղաքներ սպառնալիքի տակ են՝ պաշարուած կամ ռմբակոծուած արիւնարբու հորդաններու կողմէ՝ կազմակերպուած ներողամիտ աչքերուն տակ թուրք իշխանութեանց, որոնք ատկէ զատ են եւ պիտի ըլլան միշտ անկարող զսպելու մանօրինակ վայրագութիւններ եւ ըմբոստութիւնք, ենթադրելով՝ թէ անոնք պիտի ուզէին ընել զայդ:

Նկատելով, որ լման խաղաղութեան այս շրջանին անգամ մենք պիտի շարունակենք ապրիլ դեռ երկար ատենուան համար պատերազմական վիճակի մէջ, որ վերջ չպիտի գտնէ, եթէ ոչ միայն զինուորական կարգ-կանոնով գործողութիւններու՝ ձեռնարկուած ֆրանսական քաջարի ուժերու կողմէ, որոնք միշտ ալ պիտի երկրորդուին նաեւ անվերապահ աջակցութիւններով քրիստոնեայ հասարակութեանց, որոնց այդ աջակցութիւնը այնքան օգտակար հանդիսացաւ ֆրանսական ուժերուն յաջողութեանց:

Նկատելով, որ այն պահուն իսկ, երբ պատրաստելու վրայ ենք սոյն Յայտարարութիւնը, այս երկրին հին տէրերուն զնդակները կը ճարձատեն մեր գլուխներուն վերեւէն, որ այս միեւնոյն կացութիւնը կը տիրէ նաեւ Տարսուսի եւ Մերսինի մէջ:

Նկատելով, որ անըմբռնելի է, որ օտար երկրի մը մէջ կնքուած խաղաղութիւն մը մման կացութեան մը պատճառ դառնայ:

Նկատելով, որ Կիլիկիոյ 275.000 քրիստոնեաները՝ սերտիւ համերաշխ իրենց եղբայրական զգացումներուն, իրենց շահերուն, թուրքերուն դէմ նողկանքի եւ Ֆրանսիայի հետ իրենց յարումին մէջ՝ առանց իսկ պէտք ունենալու վերջիչել սարսազդեցիկ յիշատակները անիծեալ անցեալի մը - խմորուած ամէնքն ալ ջարդերով, բռնագաղթերով, ւայրառութիւններով, քեներով, բռնարարութիւններով, ամէն տեսակ արհաւիրքներով եւ խայտառակութիւններով - հպարտ են, որ չկասեցան առջեւ ոչ մէկ զոհողութեան ու ջանքերու, որոնք ճնշուած ժողովուրդներուն համար կը կազմեն փրկագինը իրենց անկախութեան, որ, ընդհակառակն, անոնք կրնան ի նպաստ իրենց յուշածել՝ պատերազմի եւ զինադադարի երկար եւ ցաւալից շրջանին վճարած ըլլալ ամենէն թանկագին եւ ամենէն սարսափելի փրկանքները:

Նկատելով, որ Կիլիկիոյ քրիստոնեայ համայնքները ամէն պարագայի մէջ՝ Ամերիկեան երկու քննութեանց, թէ իրենց բոլոր դիմումներու ընթացքին ֆրանսական իշխանութեանց մօտ անփոփոխելիօրէն յայտնեցին իրենց անսասան որոշումը չընդունիլ վերադարձը թուրք տիրապետութեան:

Նկատելով, որ, մասնաւորաբար, իրենց անցեալ Մարտի 31 եւ Մայիս 15 թուակիր բողոքագիրներովը՝ ուղղուած Համաձայնական պետութիւններուն եւ խաղաղութեան Խորհրդաժողովին, ինչպէս եւ իրենց առաջուց կատարած դիմումներովը, որոշակի հասկցուցին թէ զիրենք չպիտի



թոյլ տային գոհանալ կիսամիջոցներով, արուեստական կարգադրութիւնները կամ խորթ, (batard) անհարազատ լուծումներով, թէ իրենք, մանաւանդ, վերջին ծայր ուժգնութեամբ բողոքեցին ընդդէմ հաշտութեան այն դաշինքին, որ արուեստականօրէն Կիլիկիան - պատմականօրէն, ցեղագրականօրէն, ռազմականօրէն, եւ տնտեսապէս մէկ եւ անբաժանելի - կը բաժնէր երկու մասերու, որմէն մէկ մասը ֆրանսական Սուրիոյ մնացած, եւ միւսը կը վերածէ թրքական գաւառի մը:

Սկստելով, որ ժողովուրդները, զորս իրենք կը ներկայացնեն, վստահալից սպասումէ մը վերջ՝ հանդէպ Դաշնակիցներուն արդարադատութեան, պիտի դատապարտուին ամենէն դառն յուսախաբութեան եթէ խաղաղութեան խորհուրդին վերջնական որոշումները չպատկեն իրենց օրինաւոր պահանջները եւ իրենց ամենէն թանկագին յոյսերը, այդ պարագային սոյն Յայտարարութիւնը ստորագրող ներկայացուցիչները, չկարենալով պէտք եղածին պէս պատասխանել իրենց պատկան ժողովուրդներուն ցանկութեանց, անոնք խմբովին պիտի ըմբոստանան, ընդդէմ այդ հրէշային փորձին, եթէ կ'ըսենք, Կիլիկիոյ մէջ վերահաստատուի թրքական վեհապետութիւնը եւ վարչութիւնը:

Սկստելով, որ մինչեւ վերջին վայրկեան չստացուեցաւ հաւաստիքը թէ՛ իրենց պահանջները ընդունուած են, թէ՛ խաղաղութեան դաշինքը պիտի բարեփոխուի, ինչպէս որ պէտք է, թէ՛ իրենք նոյնիսկ այսօր, խաղաղութեան դաշինքին կնքումի վաղորդայնին, լքուած են ամենէն անձկալից անորոշութեան:

Սկստելով միանգամայն, թէ ներկայ շփոթ կացութիւնը եւ անիշխանական վիճակը մասամբ մը արդիւնք են տեղական թուրք վարչութեան անդամալուծման, եւ որ չէ այլեւս, եթէ ոչ անուանական կառավարութիւն մը, թէ այս պայմանաց մէջ միմիայն անհրաժեշտ իշխանութեամբ օժտուած տեղական իշխանութիւն մը կրնայ ամենուն ալ յարգանք եւ վստահութիւն ներշնչելով, փրկել երկիրը անիշխանութենէ եւ լիակատար աւերումէ:

Բոլոր այս պատճառներուն համար եւ արժեցնելով բոլոր իրաւունքները՝ փաստերը եւ վերոյիշեալ 31 Մարտ եւ 25 Մայիս թուակիր երկու յիշատակագրութեանց մէջ մատնանշուած նկատումները, որոնց տրամաբանական վերջաւորութիւնն է ներկայ ձեռնարկը: Մենք հիմնուելով, մանաւանդ բոլոր ժողովուրդներուն եւս յստակ անանցանելի իրաւանց վրայ՝ ճշդելու իրենց ճակատագիրը, իրաւունք մը, որ իր առաջին աղբիւրն ունի Ֆրանսական յեղափոխութեան անմահ սկզբունքները:

Մենք հանդիսաւորապէս կը յայտարարենք. Կիլիկիան, սկսեալ այս օրուանէն, ազատ երկիր մը՝ բոլորովին անկախ Թուրքիայէն, օժտուած տեղական ինքնավար քրիստոնէայ վարչութեամբ մը՝ զետեղուած Ֆրանսայի հոգատարութեան տակ: Կիլիկիոյ հողամասերուն Օսմանեան նախկին կայսրութենէն այս անջատումը մենք կ'ըմբռնենք նոյնքան կատարեալ եւ վերջնական եւ այն միեւնոյն ձեւով, ինչպէս՝ Հայաստանը, Սուրիան, Պաղեստինը, Միջա-

գետքը եւ Արաբիան:

Իրագործելու եւ պահպանելու համար այս անկախութիւնը՝ թշնամին մեր դուռներէն վտարելու եւ մեր պաշարուած քաղաքները փրկելու համար, վերակազմելու համար այդ քաղաքները եւ գրաւուած շրջանները, եւ ազատելու համար մեր քրիստոնէայ եղբայրները իրենց գերութենէն, մենք պատրաստ ենք ամէն կարգի զոհողութիւններու, մենք այս երկրին հոգատար Ֆրանսայի ծառայութեան տակ կը դնենք մեր ժողովուրդներուն բոլոր կենդանի ուժերը:

Հատուածները, դաւանութիւնները, համայնքները, քրիստոնէայ ցեղերը, մենք ամէնքս միացած ենք միեւնոյն նուիրական նպատակին համար:

Մենք պիտի աշխատինք ձեռք-ձեռքի բարձրացնելու այս երկրին բարոյականը, մշակոյթը եւ տնտեսականը հովանիին տակ Ֆրանսայի: Կը փափաքինք Կիլիկիան ընել մէկ երկարածօղումը Եւրոպայի, մէկ նոր կեդրոնը քաղաքկրթութեան եւ զարգացման, ուր իսկան անջատ ցեղերը նոյնպէս հաւասարապէս պիտի վայելեն ազատութեան եւ յառաջադիմութեան բարիքները եւ երաշխաւորութիւնները, որոնք իրենց անձանօթ էին թուրք կառավարութեան ներքեւ եւ պիտի օրհնեն այն օրը, երբ իրենք եւս անջատուեցան անկէ:

Անկախութիւնը Ֆրանսայի հոգատարութեան տակ, բացարձակ պայմանն է Քրիստոնէից գոյութեան՝ աս երկրին մէջ: Մենք նախապատիւ պիտի սեպենք մեռնիլ, քան ընդունիլ ուրիշ լուծում:

Վստահ ենք՝ թէ մեծանձն եւ ասպետական Ֆրանսան, աւանդական պաշտպանը Արեւելքի Քրիստոնէից, պիտի գնահատէ մեր պահանջաց արդարութիւնը, թէ ան պիտի բարեհաճի ճանչնալ մեր այս անկախութիւնը՝ առնելով զայն իր պաշտպանութեան տակ:

Կեցցէ՛, անկախ Կիլիկիան:
Կեցցէ՛, Ֆրանսան՝ հոգատարը Կիլիկիոյ:

Մ. Տամատեան
Ամբողջական Հայաստանի Երկայացուցիչ
Գ. Վրդ. Արսլանեան
Ատանայի Հայոց Առաջնորդ
4 օգոստոսի, 1920թ.

ՆԻԿՈՒԼԱ ՍԱՐԿՈՋԻ. «ԹՈՒՐԹԻՎՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՏԵՂ ՉՈՒՆԻ»

Ֆրանսիայի կառավարող «ժողովրդական շարժում միութիւն» կուսակցութեան նախագահ եւ ներքին գործերի նախարար Նիկոլա Սարկոզին հայտարարել է, որ Եվրոմիութեան սահմանադրութեանը ֆրանսիացիների «ոչ» ասելու պատճառով Ֆրանսիայի ղեկավարութեան անջակցութիւնն է Թուրքիայի ԵՄ անդամակցութեանը:

Թուրքական NTV հեռուստատեսութիւնը հայտնել է, որ Ֆրանսիայի ղեկավարութիւնն ասելով՝ Սարկոզին նատի ունի նախագահ ժակ Շիրակին: Սարկոզին լրագրողներին ասել է. «Թուրքիան ԵՄ անդամ չի կարող լինել այն պարզ պատճառով, որ այդ երկիրը չի պատկանում Եվրոպային: Նշելով, որ Թուրքիայի ԵՄ անդամակցութիւնը մեծ շնչով է Եվրոպայի համար, և որ Ֆրանսիացիները դեռևս չեն կարողանում հասկանալ ու մարտել Արևելյան Եվրոպայի միացումը ԵՄ-ին», - Սարկոզին ավելացրել է, - «Թուրքիան միանշանակ տեղ չունի Եվրոպայում՝ Եվրոպական երկիր չլինելու պատճառով»:



ԺՈՂՈՎՐԴԻ ՀՈԳՈՒՄԱՐՍՈՒՆԵՐԻ ՏԱՐԵԳԻՐԸ

Արևմտահայ գրականության ամենեն կատարյալ գրագետներեն մեկն է Ջ. Եսայան, եթե ոչ ամենեն կատարյալը: Իբրև տաղանդ եւ իբրև գործունեություն, մանավանդ, իբրև վաստակ՝ լիովին արժանի է գրագետի իր տիտղոսին:

Ջ. Եսայանի մեջ հայ գրականության ամենեն սխրալի շնորհները, կանացի զգայնության ամենեն սրտահույզ և իր ժողովուրդին հոգիին ամենեն խորունկ սարսուռները իրարու կմիանան: Անհկախ խղճմտանք մըն է, սիրտ մը, միտք մըն է, հավասար ամբողջությամբ ու արդարությամբ... Եսայանի գործը ամբողջ մըն է: Անոր երկու մեծ բեռները՝ անհատներու հոգին ու ժողովուրդներուն հավաքական զգայունությունը ընդմիջտ նվաճված կը մնան անխորտակելի գործերու մեջ:

ՀԱԿՈՐ ՕՇԱԿԱՆ

Ճակատագիրը որքան շռայլ, նույնքան էլ անողորմ գտնվեց հայ գրականության փառքերից մեկի՝ Ջապել Եսայանի (Հովհաննիսյան) հետ: Անողորմ, քանզի նրա կենսագրության վերջին, ամենամռայլ էջը զոցվում է գրեթե ոչինչ չստող, պարզ, սահմանկեցուցիչ բնութագրումով տրված կենսագիրների կողմից. «Կը մեռնի Սիպիրիո մեջ տեղ մը, 1948 թվականին»:

Եղերաբախտ գրողը, զտարյուն հայ մտավորականը, հասարակական ազգային գործիչը, որի համար կյանքը հայի «հոգեկան ապրումներու պատկերացմամբ» (Ն. Աղբալյան) էր միայն դրսևորելի, ուժերի ներածին չափով, ողջ բովանդակ կյանքը ապրեց՝ իբրև մի ստեղծագործական սխրանք, արդ, անհայտորեն հանգչում է իր ժողովրդի այն սուրբ մեռյալների պես, որոնց չարչարանքի ու մահվան ականատեսն է եղել տակավին 1909 թվականին, երբ Պոլսից մի հանձնախմբի հետ մեկնել է Ադանա՝ աղետյալներին օգնություն ցուցաբերելու:

Ջ. Եսայանի տպավորությունների մատյանը տպագրվեց երկու տարի անց («Ավերակներուն մեջ», Կ. Պոլիս, 1911թ.), այն թերևս առաջին ուղղակի արծագանքն էր մի ողջ ժողովրդի ցեղասպանության, առաջին ճիշտ, որ մարդկությանը տեղյակ էր պահում, առաջիկա արհավիրքի՝ 1915 թվականի մասին: Այն, ինչ լսելի չեղավ և այդպես էլ արծագանք չգտավ:

Ջ. Եսայանի «Ավերակներուն մեջ» ուղեգրությունը ամենևին էլ ողբերգության սոսկական գրառում կամ արձանագրում չէ, այլ բառով՝ ողբապատում, այլ ամբարված տառապանքի պոռթկման, վերաժայթքման կենսապատում, երբեմն՝ հայ հոգու ալեկոծումի ճշմարտաճիչ բողոքի արտահայտում. «Երկինքը սեւցավ ինձի... ըսի թուրք կնոջը՝ երեսն ի վար լալով. Աստծո բոլոր կայծակները ձեր ոճիրները չպիտի կրնան պատժել, ո՞ր օրը և ո՞ր ժամուն ձեր քավության ժամանակը հասած պիտի ըլլա, այրիին, որքին ու մոր արցունքներուն մեջ պիտի խեղդվիք...»: Չափազանց դժվար է տալ ժամանակի սահմանկեցուցիչ իրականության պատկերը՝ ժամանակի «ինչպես որ է»-ի շեշտադրումներով: Լինելով ուղղակի ականատեսը դարասկզբյա ծավալվող իրադարձությունների՝ նա չէր կարող հայի և մտավորականի, ազգային գործչի իր անխառն ավունով չտրվել հայության անլռելի ճիչի հորձանքին, անմասնակից լինել «տառապանքի պատկերին» որքան էլ զարհուրելիության ու «սարսափներուն» փոթորկումը ընկճեր լիաբուխորեն տրոփող նրա հայրօգին:

Այնուհանդերձ, անագորույն ցավի մեջ, անմահանջ էր երկինքն ի վեր սլացող անկոտորուն հավատը: Հուսաբեկությունն ու ջլատումը տեղի էր տալիս «ճառագայթող ճշմարտության» դեմ: Այլ կերպ՝ անհնարին էր, նաև ան-

հավատալի և ազգավնաս. «Իրենց պարզ հոգեբանությունը չէր տանջվեր բնավ, ու հավատք ալ ունեին, թե մեկ օրեն մյուսը պիտի ճշտվեր իրենց դերին մեծությունը ու այն մարդիկը, որ շղթա կանցնեին իրենց ոտքերուն, օր մը թերեւս իրենց կուրծքը պիտի զարդարեին պատվանշաններով: Մեզի կարելի չէր երկար խոսիլ իրենց հետ, բայց յուրաքանչյուրին դեմքը տպավորված էր անջնջելի կերպով մեր միտքերուն մեջ: Բան մը կար, որ կներդաշնակվեր մեր մտածումներուն հետ, եւ ատ ալ տառապանքին հպարտութիւնն էր»:

Ջ. Եսայան գրողի, ազգային գործչի առաքելությունը այսպես և այսչափ չի ավարտվում: Ադանայում, ականատեսը լինելով վաղօրոք ծրագրված հայաջինջ քաղաքականության, նա արդեն պարզորոշ տեսնում էր «սարսափի արտահայտության» հետագա ողջ ընթացքն ու զարգացումը: 1915թ. նախօրեին Ջ. Եսայանը, մի կերպ փրկվելով, ծայրյալ անցնում է Բուլղարիա, այնտեղից՝ Կովկաս: Նրան շարունակ տանջում է արևմտահայոց գաղթականության օրհասական վիճակը, հարյուր հազարավոր մարդկային այն զանգվածների, որոնք ապաստանել էին կովկասյան տարբեր քաղաքներում, բնակավայրերում: Մինչև 1919թ. Ջ. Եսայանը իր գործուն դերակատարությունն է ունենում ազգային և հանրային կյանքում աշխատելով տարբեր խնամակալ մարմիններում:

Այսպիսին էր նրա մարդկային, ազգային, գրողական եւությունը, իսկ ինքը՝ չափազանց անկոտորուն մնացորդաց ճակատագրին ապավինաբար նեցուկ լինելուն պարտ: 1920թ. Ջ. Եսայանը մեկնում է Եվրոպա, մաս կազմում Ավետիս Ահարոնյանի զլխավորած Հայաստանի պատվիրակության շարունակաբար բաղվելով գաղթահայության և որբերի ճակատագրով: Ջ. Եսայանը ազգային հասարակական գործունեությանը զուգահեռ ստեղծագործում էր: 1935թ. հաստատվում է Երևանում, Արևմտահայ գրականություն է դասավանդում ԵՊՀ-ում: Գրում է «Սիլիստրի պարտեզներ», «Կրակե շապիկը», «Պրոմեթևսը ազատագրված», «Պարպա խաչիկ» չափազանց ուշագրավ ստեղծագործությունները: Գեղարվեստական այն աշխարհը, որ ստեղծել է Ջ. Եսայանը, մեր գրականության պատմության մեջ տակավին արժևորված և ըստ ամենայնի ուսումնասիրված չէ, և հոբելյանական բարեպատեհ առիթը կարելի է (և պարտավոր ենք) նպատակամիտել նրա ստեղծագործության վերարժևորմանը, քանզի Ջ. Եսայանի գրողական կենսադիրքորոշումը և գեղագիտական ըմբռումները, վիպային-հոգեբանական թափանցումները անխամրելի են նաև մեր ժամանակներում:

ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ



ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ. «ՊԱՏՇԱՃ Է, ՈՐ ԶԻՍ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՀՐԱՎԻՐԵՆ»



Թ ու ը ք ա - կան «Ռոլլ» ամսաթերթը հեռախոսային հարցազրույց է ունեցել Շառլ Ազնավուրի հետ, զետեղելով նաև նրա լուսանկարը: Վարպետը նախ ներկայացվում է որպես սիրված, հանրածանոթ

թուրք պաշտոնատար լինի, ասենք, Ֆրանսիայում թուրքիայի դեսպանը: «Հայերուն միշտ կկրկնեն. Ցեղասպանության ընդունած օրը- օր մը անպայման պիտի ընդունվի, պետք չէ փողոցներ իյնալ եւ աղմկել: Մեծ տոն մը պետք է կազմակերպել, որուն ամեն մարդ հրավիրված ըլլայ: Ոչ եսասիրական տոն մը: Թերեւս թուրքիո մեջ ալ կը տոնվի: Օրինակ, կարդացի, թէ Կարսի քաղաքատը բաներ մը ընելու ժամանակը հասած կը նկատես», - ասել է Ազնավուրը:

Անդրադառնալով Աթաթուրքին Ազնավուրը նրան աշխարհի մեծերի թվում կարևոր դեմք է համարել, սակայն նաև ասելով. «Մեր տեսակետից կատարյալ չէր, որովհետև անոր պատճառով այսօր մենք մեր հայրենիքին մեջ չենք գտնվիր: Բայց ձեր երկրին համար կատարյալ էր»: Նա ասում է, որ Աթաթուրքը ցեղասպանությունն ընդունած ղեկավար է, քանի որ 1926-ին հանցագործներին մահվան է դատապարտել:

երգիչ, երգի պատմաբան և այլն: Սակայն զրույցը, բնականաբար, թեքվում է դեպի 1915 թվականը, Հայաստան-Թուրքիա հարաբերությունները, Թուրքիայի հանդեպ Ազնավուրի անձնական կեցվածքը: Ազնավուրը գտնում է, որ հարկավոր է 1915-ով ստեղծված փշերը մաքրել և ձգտել բարեկամանալ: Դրա համար հարկավոր է, որ Անկարայի կառավարությունը և երկու կողմից ոչ քաղաքական դեմքեր մեկտեղվեն. դա վերջնական վճիռ չպիտի լինի, սակայն Անկարայի կողմից ճանաչում պիտի նշանակի:

Երգիչը գտնում է, որ ներկայումս 300-400 հազար թրքացած հայեր կան, և հասել է ժամանակը, որ այդ թրքածորարն էլ բացվի: «Մեռնելես առաջ հարկ է, որ ատիկա ընեն», - ասել է նա:

Խոսքի ավարտին Ազնավուրն անդրադարձել էր իր Թուրքիա այցելելուն: Կրկնելով, որ իր մոր հայրենիքը այցելելն իրեն մեծապես կերջանկացնի, ինչպես նաև Պոլսի ծովեզրյա մի ճաշարանում ճաշելը, իրեն անծանոթ Թուրքիայում շրջագայելը, նա բացատրել է, որ որպեսզի կարողանա գնալ Թուրքիա, Անկարան իրեն պաշտոնապես պիտի ընդունի: «Որովհետև Հայաստանի պատվակալ դեսպանի կարգավիճակ ունեն, դիվանագիտական անձնագրի տեր եմ: Հետեւաբար՝ պատշաճ է, որ զիս պաշտոնապես հրավիրեն»: Ըստ Ազնավուրի, եթե այդ փափագն իրականանա, սփյուռքի հայերի համար դա մի հրաշալի բան կլինի:

Եթե Անկարան ասվածն անի, Ֆրանսիայի 400 հազար հայությունը նրա դեմ չի քվեարկի, որովհետև ուզում է իր մեծ հայրերի, մեծ մայրերի ծննդավայրը տեսնել:

Ազնավուրը հիշում է, որ թուրքական թերթերից մեկը գրել է, թե ինքը մասնակցել է ապրիլի 24-ի ցույցին, և «Ֆիզարոն» էլ տպագրել է լուսանկարը: Նա ժխտում է դա, ասելով, որ մասնակցելու համար կուզեր, որ իր հետ

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ

Հանրապետական կոնգրեսականներ Ջո Նոլենբերգը և Ջորջ Ռադանովիչը, ինչպես նաև դեմոկրատ Ֆրենկ Փալունը օրենսդրական նախաձեռնությամբ են հանդես եկել Միացյալ Նահանգների ներկայացուցիչների պալատում, ըստ որի, ԱՄՆ կառավարությանն արգելվում է ֆինանսական օժանդակություն տրամադրել այն երկաթգծերի կառուցմանը, որոնք շրջանցում են Հայաստանը: Օրենսդրական նախաձեռնությունը, ըստ Վաշինգտոնի Հայ դատի հանձնախմբի տարածած հաղորդագրության, կոչվում է «Հարավային Կովկասի ինտեգրացիա և բաց երկաթուղիների ակտ 2005»: Նախաձեռնության տեքստում, մասնավորապես, ասվում է, որ Հայաստանի դուրսմղումը տարածաշրջանային, տնտեսական և առևտրային նախաձեռնություններից հակասում է Միացյալ Նահանգների տարածաշրջանային քաղաքականության նպատակներին:

Մայիսի վերջերին Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի նախագահները Բաքվում հայտարարել էին Բաքվից Թբիլիսիով դեպի Թուրքիա երկաթուղու կառուցման իրենց մտադրության մասին: Հայ դատի հանձնախումբը հիշեցնում է, որ վերոհիշյալ նախաձեռնությունը կարող է փոխարինել Կարս - Գյումրի երկաթգծին, որն ավելի քան 10 տարի չի գործում Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման պատճառով: Նախնական հաշվառումներով՝ Բաքու - Թբիլիսի - Կարս երկաթգծի շինարարությունը կարժենա 600 մլն-ից 1 մլրդ դոլար:



ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

2003թ. դեկտեմբերին հայութիւնը ի սփիւռս եւ ի Հայաստան աշխարհի կրեց ազգային, եկեղեցական եւ մարդկային մեծ կորուստ յանձինս Մեսրոպ Արք. Աշճեանի: Երկու տարի անցած է հոգելոյս սրբազանի մահէն, սակայն յաւիտենականութեան հաւատքը մեր ժողովուրդի, տակաւին անոր յիշատակն ու հետքերը վառ կը պահեն մեր սիրտերուն մէջ: Սրբազանը լոկ սքեմաւոր հոգեւորական չէր, որ յատկանշուէր միայն եկեղեցական արարողութիւններով ու ծեսերով, սրբազանը իսկական ու էական հայ հոգեւորականն էր, որ մեր արմատներու ու պապերու հաւատքը բերաւ 20-րդ դար, վերարժեւորեց մեր այսօրուան մտայնութեամբ եւ սերմանեց նոր սերունդի հոգիներուն ու ծիներուն մէջ:

Մեսրոպ Արքազանի բազմակողմանի ծառայութեանց մէջ կարմիր գիծի նման կ'առանձնանայ ուխտաւորութեան գաղափարը, ապրումն ու իրագործումը: 1915-ի մարդկային, մշակութային ու հոգեւոր ցեղասպանութենէն ետք, նա եղաւ առաջինը, որ հայոց քրիստոնէացման 1700-ամեակի առիթով քանդեց անցեալի ողբերգական յիշողութեան բոլոր կապանքներն ու նախապաշարումները, ու նոր պատարագ հնչեցուց աւելի քան 90 տարի լուծութեան մատնուած հայոց եկեղեցիներուն մէջ:

«Ուխտ Արարատի» պարբերականով լոյս տեսնելիք այս շարքով մենք ձեր ուշադրութեան կը ներկայացնենք Մեսրոպ Արք. Աշճեանի 1997 եւ 2000 թուականներուն Արեւմտեան Հայաստան կատարած ուխտագնացութեանց տպաւորութիւնները, ուր առաջին անգամ մեր ընթերցողներու սեփականութեան կը յանձնուին սրբազանի լուսանկարներու հարուստ հաւաքածոն՝ աւելի շօշափելի դարձնելով մեր կորուսեալ հայրենիքի մատուցներու ըմբռշխումը:

Կարս. Կարսը կը գտնուի Ախուրեանի վտակ Կարս գետի աջ ափին: Կարսը կը յիշատակեն հայ եւ օտար մատենագիրները: Կարուց բերդը եղած է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Վանանդ գաւառի գլխաւոր բերդերէն մէկը: 10-րդ դարու առաջին տասնամեակներուն Կարսը արդէն յայտնի քաղաք էր: 929թ. Աբաս թագաւորը Կարսը դարձուց թագաւորանիստ, վերանորոգեց միջնաբերդը եւ 930-940-ականներուն կառուցեց Սբ. Առաքելոց եկեղեցին: 963թ. Կարսը դարձաւ Վանանդի թագաւորութեան կեդրոնը: 1071-ին՝ բիւզանդացիներու պարտութենէն ետք, Կարսը անցաւ սելճուքներուն: 1639թ. պարսիկներու եւ թուրքերու միջեւ կնքուած պայմանագրով Կարսը անցած է Թուրքիոյ եւ դարձած է համանուն վիլայեթի կեդրոն: 1828-ին ռուսական զօրքը գրաւեց Կարսը, բայց յաջորդ տարի վերադարձուց թուրքերուն: 1877-ին ռուսական զօրքը՝ զօրավար Լազարեւի գլխաւորութեամբ, կրկին գրաւեց Կարսը: Կարսը դարձաւ Կարսի մարզի կեդրոնը: 1913-ի տուեալներով քաղաքը ուներ մօտ 12.000 բնակչութիւն, որուն 10.000-ը հայեր էին: 20-րդ դարու սկիզբին Կարսը ուներ երեք հայկական եկեղեցի՝ Սբ. Նշան, Սբ. Աստուածածին, Սբ. Գրիգոր: 1918-ին Կարսը գրաւուեցաւ թուրքերու կողմէ: 1919-ին թուրքական զօրքը վտարուեցաւ եւ Կարսը մտաւ Հայաստանի Հանրապետութեան կազմին մէջ: 1920-ին թուրքերը կրկին գրաւեցին Կարսը: 1921-ի «Կարսի պայմանագրով» Կարսը անցաւ Թուրքիոյ:



Կարսը մտաւ Հայաստանի Հանրապետութեան կազմին մէջ: 1920-ին թուրքերը կրկին գրաւեցին Կարսը: 1921-ի «Կարսի պայմանագրով» Կարսը անցաւ Թուրքիոյ:


2000թ. ուխտագնացութենէն. Ուխտաւորները Սուրբ Էջմիածնէն եւ Երեւանէն տարբեր խումբերով ճամբայ ելան 16-17 օգոստոսին եւ զիրար վերագտան Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցւոյ շրջափակին մէջ: Ընտրութիւնը պատահական էր, բայց բազմիմաստ: Ախալքալաքը, իր դժբախտ քրոջ՝ Ախալցխայի նման, անտեսուած փոքր քոյրն է Հայաստանի՝ խրթին ճակատագրով, խրթին ճամբաներով: Բայց Հայոց աշխարհ է, Հայոց հող է, Հայոց երկիր է... Նոյն օրը երեկոյեան հասանք Կարս եւ պատրաստուեցանք յաջորդ առաւօտեան մեր առաջին հանդիպմանը, որ պիտի տեղի ունենար մեր եւ Կարուց Սուրբ Առաքելոց եկեղեցւոյ միջեւ:

Առաւօտեան եկեղեցւոյ մուտքին ենք: Դուռը փակ է, մեր վերջին այցելութեան՝ յաջողէր էի լուսամուտէն կերպով մը ներս մտնել: Հիմա անկարելի է երկաթ ճաղեր աւելցուցեր են, եկեղեցին ալ մզկիթի վերածե: Ատենին իմացեր էինք այդ մասին, եւ Հայաստանի պետական մարմիններէն խնդրեր, որ միջամտեն... Սոլլա մը կար ներսը, փորձեցինք լուսանկարել, աղօթել, անհնար եղաւ: Բայց միշտ ալ ճարպիկներ կը գտնուին: Ինծի կ'իյնար տէրութիւն ընել այդ եկեղեցւոյ, որուն օժումը ինքնին այնքա՛ն պերճախօս է:

Հրաւիրեցի ընկերներս, որ հաւաքուին հարաւային պատին տակ, իրենց ձեռքերը ամուր գետեղեն պատին վրայ, լացի պատ ընեն, ինչպէս հրեաները ունին, եւ մասնակցին աղօթքին: Ալէքն ու Սեյրանը սկսան երգել Առաքելոց նուիրուած շարականը.

Երանելի Սուրբ Առաքեալք
Հրաւիրեալք ի սկզբանէ...
Խաչակցեալք ընդ Քրիստոսի...
Պահը սուրբ էր, հրաւիրը՝ անակնկալ: Շատերը կ'արտասուէին. հաւատքի՞ համար, քամբախտ ճակատագրի՞ համար ո՞վ գիտէ...

Յաջորդ ժամերուն եղանք Կարուց բերդը, փնտրեցինք եկեղեցւոյ զանգակատան վայրը, փնտրեցինք գերեզմանատունը, որ հիմա ինքնաշարժերու կառատանցներէն է մնացեր, գացինք թանգարան...



Ուխտագնացութեան քարտեզը. 2000թ.

ՀՈՒԿԻ ՄԿՐՏՉՅԱԼ

Կիսապատկան վանք, Ախի



« ԱՓՍՈ՛Ս, ԳՈՐԾՍ ԿԵՍ ՄՆԱՑ... »

Զօր Անդրանիկ



Գործ՝ Վարուժան Կարապետյանի, Ֆրանսիայի Քլեռվո բանտ, 192թ.